ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(**78**-րդ տարի) **Թիվ-10** (1692) Հոկտեմբեր 2024

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Քաղաքական գալիքը չի՞ ուշանա (էջ 1-2)

2- Իրավաքաղաքական

Անի Մելքոնյան
Թուրքական երազանք. հայկական խայտառակություն (էջ 3-6)

3- Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Անցյալի «ուրվականներով» ներկան մանիպուլացնելու ՔՊ տակտիկան (էջ 7-9)

4- Ռազմաքաղաքական

Սարգիս Սարգսյան
44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 2) (էջ 10-22)

5- Տարածաշրջանային

Նարե Գևորգյան
Իրան-Իսրայել պրոքսի պատերազմը և տարածաշրջանային աճող լարվածությունը (էջ 23-25)

6- Աշխարհաքաղաքական

Լիանա Պետրոսյան
Ադրբեջանական հասարակության դիրքորոշումը «խաղաղության պայմանագրի» նկատմամբ (էջ 26-28)

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
ԱՄՆ նախագահական ընտրությունների ազդեցությունը համաշխարհային աշխարհաքաղաքականության վրա. Թրամփի և Հարիսի մոտեցումների տարբերությունները (էջ 29-33)

7- Պատմության լուսարձակ

Խաչատուր Ստեփանյան
Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունը Բուլղարիայում (1894-1924 թթ.) (էջ 34-42)

8- Դեմքեր և դեպքեր

Մովսէս Ծիրանի
Տղամարդ հայը. Ռուբէն Յովսէփեան (ծննդեան 85-ամեակի առիթով) (էջ 43-45)

9- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Սփիւռքը վարկաւորել ըստ արժանւոյն (էջ 46)

Քաղաքական գալիքը չի՞ ուշանա

Արցախյան պայքարի և Հայաստանի անկախացման գործընթացի ճանապարհով Հայաստանում իշխանության եկած ուժի հակախորհրդային տրամադրությունները սահուն կերպով վերափոխվեցին հակառուսական կողմնորոշման: Շատ շուտ պարզ դարձավ, որ Ռուսաստանին հեռու վանելու և դեպի արևմուտք շրջադարձի ճանապարհը պետք է անցնի Ադրբեջանի և, հատկապես, Թուրքիայի հետ եղբայրության մայրուղով: Պատահական չէր, որ անկախ պետության առաջին ղեկավար Լևոն Տեր-Պետրոսյանը վերածվեց իր իսկ գլխավորած շարժման նպատակների հակառակորդի, պատերազմին հակադրեց խաղաղության գաղափարը և հայտարարեց, թե խաղաղության պետք է հասնել ամեն գնով: Իր հերթին Թուրքիան, լավ հասկանալով, թե ինչ բարդ խնդիր է ինքն իր առջև դրել Հայաստանի ղեկավարությունը, որպես մերձեցման գին նրա առջև դրեց ծանր պայմաններ, որոնք վերաբերում էին Արցախի հարցի ադրբեջանանպաստ լուծմանը, ցեղասպանության հարցից հրաժարմանը, միմյանց տարածքային ամբողջականության, իսկ ավելի կոնկրետ, առկա սահմանների ճանաչմանը և այլն: Միաժամանակ պատերազմող Հայաստանը չէր կարող կապերը խզել Անդրկովկասի նկատմամբ քաղաքական ազդեցությունը պահպանող Ռուսաստանից, նկատի ունենալով նաև տնտեսական մեծ կախվածությունը: Այնուամենայնիվ, կառավարման գրեթե ողջ ընթացքում Հայաստանի իշխանության այս ոչ հեշտ կացությունը հնարավոր եղավ պահպանել, որովհետև Ռուսաստանի ղեկավարն ինքը Արևմուտքի դուդուկի տակ էր պարում: Ռուսաստանի քաղաքական ընդերքից ազգային տրամադրությունների աճը սկսեց վերափոխել իշխանությանը, մասնավորապես Հայաստանի իշխանության համար փոքրացնելով երկու լարի վրա խաղալու հնարավորությունը: Իշխանության անակնկալ փոփոխությամբ Հայաստանի իշխանության համար ուրբաթը շաբաթից շուտ եկավ, իսկ Ռուսաստանը Հայաստանի ղեկավարի և նրա թիմի ճակատագրի նկատմամբ կրավորականություն դրսևորեց: Անդրադառնալով երեք տասնամյակ առաջվա իրադարձություններին՝ ցանկանում ենք ցույց տալ այն բազմաթիվ նմանությունները, որոնք մինչ այս պահը գոյություն ունեն ՀՀՇ-ական և նրա քաղաքական ժառանգորդ ՔՊ-ական իշխանությունների միջև:

Նմանություններից մեկն էլ երկու իշխանությունների քարոզչամեքենաների հետևողական ճիգն է հայ հանրությանը համոզելու, թե Ռուսաստանը կործանման ճանապարհին է, և Հայաստանը հարկադրված է փնտրելու այլընտրանքներ: Թերևս այն տարբերությամբ, որ ազգային շահերը ավելի զգոն գիտակցող այն օրերի հասարակությունը չվարակվեց հակառուսականությամբ, ինչը տեղի ունեցավ, երբ ՔՊ-ական իշխանությունը պատերազմում կրած խայտառակ պարտության մեղքը բարդեց ընդդիմության և Ռուսաստանի վրա:

Հայաստանի նոր իշխանությունը, երբեք չհավատալով ու հաշվարկ չանելով սեփական ժողովրդի վրա, փորձեց Արևմուտքի միջնորդությամբ դուրս բերել հայ-ադրբեջանական հարաբերությունների գործընթացը ռուսական միջնորդության դաշտից և, բերելով Արևմտյան ազդեցության ներքո, վերջինիս

միջոցով պարտադրելու Ադրբեջանին կնքել խաղաղության պայմանագիր: Ադրբեջանը, սակայն, սթափ գնահատելով Ռուսաստանի հնարավորությունների ներուժը, ցույց տվեց, թե շարունակում է հավատարիմ մնալ վերջինիս միջնորդական դերին և փաստացի ընդդիմանում է նախաձեռնությունը խլելու արևմտյան ջանքերին: Միաժամանակ շարունակելով թուրքական ավանդական քաղաքական գիծը լավ հարաբերություններ է պահպանում Արևմուտքի հետ այդ հարաբերությունները ցեմենտելով իր տնտեսական, հաղորդակցական և տարածաշրջանային առավելություններով:

Մյուս կողմից, Արևմուտքը Հայաստանին հստակորեն հասկացրել է, որ իր հետ լինել՝ Հայաստանի համար նշանակում է, մաս կազմել այն սցենարին, որն Արևմուտքը ցանկանում է իրականացնել տարածաշրջանում Թուրքիայի և Ադրբեջանի միջոցով:

Այս բարդ կացությանը վերջին շրջանում ավելանում է այն հանգամանքը, որ պատերազմում դրական հստակության հասնելով և Արևմուտքի դիմաց իրեն ավելի ինքնավստահ զգալով՝ Ռուսաստանը, ինչպես պատահել է 30 ու 100 տարի առաջ, փորձում է վերականգնել իր դերակատարությունն անդրկովկասյան տարածաշրջանում: Ասվածի վկայություններն են տարբեր առիթներով Նիկոլ Փաշինյանին Ռուսաստան մեկնելու հրավերները, որոնք նա չի կարողանում մերժել, տարբեր հայտարարությունները հայ-ադրբեջանական հարաբերություններում Ռուսաստանի միջնորդական դերի մասին և, գործնական քայլ որպես, սույն թվականի հոկտեմբերի 18-ին Ստամբուլում 3+3 ձևաչափով արտգործնախարարների հանդիպումը: Հայաստանի իշխանությունը, չնայած լիակատար անձնատվությանը Արևմտաթուրքական դաշինքին, չի կարող հաշվի չստել այն փաստի հետ, որ Հայաստանը տնտեսական, էներգետիկ և այլ կենսական կապերով կապված է Ռուսաստանի հետ: Պահի թելադրանքով գրկից-գիրկ թռչելու այս քաղաքականությունը ոչ միայն ոչնչի է հավասարեցրել Հայաստանի իշխանությանը, այլև երկիրը դուրս է դրել պատմական փոփոխությունների այն գործընթացից, որի մեջ շատ երկրներ ձգտում են գտնել ու պաշտպանել սեփական շահերը: Հայաստանի իշխանության նեղ կացությունը տեսնելով՝ ադրբեջանցիներն ու թուրքերը մղում են նրան նորանոր զիջումների: Իշխանությունը ակնդետ հետևում է ԱՄՆ-ում տեղի ունեցող նախընտրական գործընթացներին, Վրաստանում ծավալվող իրադարձություններին, տարածաշրջանային և աշխարհաքաղաքական այլ գործընթացներին՝ դրանցում անուղղակի և ուղղակի վտանգներ տեսնելով իր համար: Մյուս կողմից, Ռուսաստանի դիրքորոշումների կարծրացման ու գործնականացման պայմաններում իշխանությունը սարսափով է նայում դեպի հյուսիս, և մղձավանջային երազներ է տեսնում, թե ինչպես է Ռուսաստանը հեղաշրջում կազմակերպում և տապալում իրենց: Հայաստանի ղեկավարն ու իշխանախումբը, հեռու լինելով ազգային շահերի գիտակցությունից և վեց տարվա ընթացքում փաստացի տապալելով ամեն գործ, ինչին առնչվել են, հիմա ունեն մեկ գլխավոր մտահոգություն՝ ինչպես պահպանել իշխանությունը, իշխանության միջոցով սեփական անձերը պաշտպանելու համար: Քանի դեռ կարող են իրենց օգտին ընտրություններ կազմակերպել, նրանք դռնից դուռ ընկած, անգամ թուրքերի միջնորդությունն են մուրում, որպեսզի Ադրբեջանը խաղաղության պայմանագիր կնքի: Այս ոչինչ չարժեցող թղթի կտորը նրանց անհրաժեշտ է արտահերթ ընտրություններ անցկացնելու համար, որպեսզի ընտրողին ասեն, թե 2021 թվականին չեն խաբել, խաղաղության տեսքով ահա բերել են ցանկալի ապագան: Սրա կողքին ժողովրդին ևս մեկ անգամ խաբելու փայլփլուն խաղալիք են դարձրել, Եվրամիությանը և անգամ ՆԱՏՕ-ին միանալու ցնորական հեռանկարը: Նիկոլ Փաշինյանը մտածում է, որ մեկ անգամ ևս հաղթելով ընտրություններում, ձեռքերը ազատ կլինեն նորանոր զիջումների համար, երկրի ներսում անելու համար ցանկացածը՝ հասնելով արտաքին ուժերի մեկ դեպքում՝ աջակցությանը, մեկ այլ դեպքում՝ հարկադրված չեզոքությանը: Իր նպատակին հասնելու համար իշխանությունը գնում է հապշտապ քայլերի՝ ոտնահարելով երկրի հիմնական շահերը, անտեսելով որևէ կարծիք երկրի ներսում, ինչպես և ոտնահարելով պետության հիմնական օրենքները: Խորհրդարանական ընդդիմությանը հրաժարականի դրդելու խաղը նույնպես թելադրված է իշխանական կուլիսներից, որպեսզի գործող վարչապետը կարողանա ազատորեն երկու անգամ հրաժարական տալ և ձեռք բերել արտահերթ ընտրություններ անցկացնելու իրավունք: Այո, աշխարհը մեծ փոփոխությունների շրջապտույտի մեջ է, սակայն ամենաճակատագրական իրողությունները սեփական իշխանությունների ձեռքով պատուհասում են հայ ժողովրդին: Արդյոք չի՞ ուշանալու չտրորված ճանապարհով երկիրն անդունդից դուրս բերելու քաղաքական գալիքը: ■

Թուրքական երազանք. հայկական խայտառակություն

Անի Մելքոնյան
Պատմաբան

Սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի աթոռը զբաղեցնողը ԱՄՆ-ի Նյու-Յորք քաղաքում այցելեց «Թուրքիայի տանը» գտնվող Էրդողանին: Այստեղ «Էրդողանը Փաշինյանին է նվիրել իր «Ավելի արդար աշխարհ հնարավոր է» գիրքը՝ ստորագրությամբ[1]»:

Վաղուց երազած, սիրելի խաղալիքը ստացած երեխայի երջանկությամբ Էրդողանի գիրքը սրտին հպած, անթաքույց հրճվանք ապրող Փաշինյանը արդյո՞ք կիսում է «արդար աշխարհի» վերաբերյալ Էրդողանի տեսակետները (մեր համոզմամբ՝ այո), թե՞ գաղափար անգամ չունի «արդար աշխարհի» թուրքական երազանքների մասին, որտեղ հայ ժողովրդի համար տեղ չկա:

Շատ է խոսվել «թուրքական երազանքի»՝ պանթյուրքիզմի մասին, «Իսկ պանթյուրքիզմը, ինչպես բազմիցս խոսել ենք այդ մասին, ծայրահեղ ազգայնամոլական գաղափարախոսություն էր, ըստ որի՝ ենթադրվում էր, որ Թուրքիայի տիրապետությունը պետք է տարածվեր Բաքվից «մինչև թուրքերի նախահայր Էրթուղրուլի ծննդավայրը, մինչև գորշ գայլի հայրենիքը՝ Սինցզյանի անապատները[2]»:

Երկար կանգ չառնելու համար պանթյուրքիզմի վրա, որի մասին մի քանի անգամ խոսելու առիթ ունեցել ենք, նշենք միայն, որ այն իրականացվելու էր երեք փուլով, և Էրդողանը՝ Փաշինյանի օգնությամբ կարծես թե իրագործում է պանթյուրքիզմի երկրորդ փուլը, ինչը ենթադրում է, որ «պետք է միավորվեին օղուզ թյուրքերը՝ օսմանյան թուրքերը, Հյուսիսային Պարսկաստանի ու Այսրկովկասի թյուրքալեզու մահմեդականները և թուրքմենները: **Այս փուլը ենթադրում էր արևելահայության ամբողջական կամ մասնակի բնաջնջում.** Արևելյան Հայաստանից նվազագույնը գրավվելու էին Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը, Զանգեզուրը և Արցախը, որպեսզի կապ ստեղծվեր կովկասյան թյուրքերի (1936 թվականից՝ ադրբեջանցիներ) հետ: Ըստ այդմ էլ. «Կյանքի էր կոչվում ոչ միայն «Թուրքիան՝ թուրք-օսմաններին» կարգախոսը, այլև թրքախոս ժողովուրդներին իրենց ենթարկելու, Անդրկովկասը զավթելու, Միջին Ասիայի, Ռուսաստանի, Պարսկաստանի հսկայածավալ տարածքներն Օսմանյան կայսրությանը կցելու կարգախոսը[3]»:

Ընթերցողի մոտ կարող է հարց առաջանալ, մի՞թե Փաշինյանն այս ամենի մասին չգիտի: Մենք ենթադրում ենք, որ գիտի, և ինքնակամ լծվել է թուրքական երազանքներին համապատասխան «ավելի արդար աշխարհի» ստեղծմանը. այդ մասին է վկայում այն ամբողջ ավերը, որը նա գործեց Հայաստանում, վերջին տարիներին, Արցախի օտարումը Հայաստանից, ինչպես նաև այն անթաքույց հրճվանքը, որով կրծքին էր սեղմել թուրքական «արդար աշխարհի» մասին Էրդողանի գիրքը:

Հայաստանի վարչապետի աթոռը զբաղեցնողի նվեր ստացած թուրքական երազանք «արդար աշխարհի» համապատկերի վրա, շատ ցայտուն երևում է **հայկական խայտառակությունը,** որի կարկառուն դեմքը հենց ինքը՝ Նիկոլ Փաշինյանն է, թուրքական գաղափարների հետ իր համերաշխությամբ ու հայոց պատմությունը (պատմական Հայաստանը) հայ ժողովրդից օտարելու քաղաքականությամբ, որը թուրքական երազանքի «օրորոցն» է, հայկական երազանքի գերեզմանը:

Իսկ հայկական երազանքը, դարավոր խարխափումներից հետո, կարծես վերջապես իր ձևակերպումն էր ստացել 1988 - ին, երբ ցեղասպանություն վերապրած մշեցի, սասունցի և վանեցի տատ ու պապերի պատմություններով դաստիարակված սերունդը վճռականորեն տեր կանգնեց իր հայրենիքի մի հատվածին և մարտի դաշտում իր վրեժը կիսով չափ լուծեց թուրքի կովկասյան ցեղատեսակից: Հաջորդ 30 տարիների ընթացքում կարծես թե հայկական երազանքը ձևակերպվում էր երկու ուղղություններով՝ *արցախյան հարցի հայանպաստ լուծում՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի և Արցախի Հանրապետության միջազգային ճանաչում, հայոց ցեղասպանության ճանաչում և Թուրքիայի կողմից հատուցում:*

Հայկական երազանքի «իրավական հիմնավորումը» 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված Անկախության հռչակագիրն էր, որը սահմանում է.

«Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝

արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը,

գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում,

ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից,

կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը,

հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա,

զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները,

խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը,

ՀՌՉԱԿՈՒՄ Է

անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

1. Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան:

Հայաստանի Հանրապետությունն ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը:

2. Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ:

Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը և օրենքները:

3. Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության և օրենքների հիման վրա:

Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են նրա պաշտպանության և աջակցության ներքո: Հայաստանի Հանրապետությունն ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից:

5. Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ:

Հայաստանի Հանրապետությունն ունի ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունն ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը:

Այլ երկրների զորամիավորումները, նրանց ռազմական բազաները և շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

6. Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Հայաստանի Հանրապետությունն ունի ԽՍՀՄ ազգային հարստության, այդ թվում՝ ոսկու պաշարների, ալմաստի և վալյուտային ֆոնդերի մասնաբաժնի իրավունք:

8. Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձևության հիման վրա որոշում է իր տնտեսվարման սկզբունքները և կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսա-վարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայություններ:

9. Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է՝

խոսքի, մամուլի, խղճի ազատություն.

օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում.

բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում:

10. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է հայերենի, որպես պետական լեզվի, գործածությունը Հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության և մշակույթի սեփական համակարգ:

11. Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին:

12. Սույն Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության սահմանադրության մշակման, իսկ գործող սահմանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, Հանրապետության նոր օրենսդրության մշակման համար[4]»:

Տրամաբանությունը հուշում է, որ ՀՀ քաղաքական օրակարգը պետք է ձևավորվեր Անկախության հռչակագրի գաղափարների շրջանակներում, սակայն 2018 թ. «հայկական երազանքը» սահուն կերպով վերածվեց *հայկական խայտառակության:*

Նախ, կասկածի տակ դրվեց արցախյան պատերազմում տարած հաղթանակի կարևորությունը, 2018 թ. նոյեմբերի 26-ին Սասուն Միքայելյանի շուրթերով իշխանությունը հայտարարեց՝ 2018 թ. հեղափոխությունն ավելի կարևոր հաղթանակ էր, քան Արցախյան ազատամարտում հաղթանակը. «Մեր նորագույն պատմության մեջ մենք կարողացանք հասնել այն գագաթնակետին, որն անհնարին էր, որը ձևավորվել էր նախորդ իշխանությունների օրոք, որ հնարավոր չի հաղթել: Մենք հաղթել ենք Արցախյան պատերազմում: Ես չեմ վարանում, չեմ վախենում ասել՝ այս հաղթանակը, որ մեր հանրապետությունում կրեցիք դուք՝ հայ ժողովուրդը, ավելի կարևոր էր, քան թե արցախյան ազատամարտը[5]»:

2019 թ. սեպտեմբերին Fox LA-ի թղթակցին տված հարցազրույցում «ժողովրդի վարչապետը» հայտարարեց «ԼՂ հակամարտության ցանկացած լուծում պետք է ընդունելի լինի Ադրբեջանի, Հայաստանի ու Ղարաբաղի ժողովրդի կողմից[6]»- բոլորի համար էլ պարզ էր, որ հնչեցված միտքն անհեթեթություն է, որովհետև Հայաստանի ու Արցախի ժողովրդի համար չէր կարող ընդունելի լինել՝ Արցախը Ադրբեջանին բռնակցելու ու հայ բնակչության էթնիկ զտում կատարելու, հայերի ունեցվածքին տիրանալու Ադրբեջանի ժողովրդի նպատակը, և զավթիչ ադրբեջանցիների համար չէր կարող ընդունելի լինել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը:

Կարճ ժամանակ անց հաղթանակի արժեզրկման արշավին միացավ Նիկոլ Փաշինյանի կինը՝ Աննա Հակոբյանը՝ «Մեր նախաձեռնության միակ իմաստը զինվորների կյանքը պաշտպանելն է, և նրանց ուղղակի չզոհաբերելը հանուն ոչնչի, որովհետև հակամարտության պատմության այս տարիների ընթացքում բազմաթիվ զոհեր ենք ունեցել երկու կողմից էլ, հազարավոր զոհեր ենք ունեցել, բայց մենք նրանց կյանքը զոհաբերել ենք հանուն ոչնչի[7]»- մինչդեռ հայ որդեկորույս մայրերն արժանապատվորեն կրելով իրենց վիշտը, գտնում էին, որ իրենց որդիներին զոհաբերել են հանուն հայկական մեծ երազանքի՝ անկախ ու ազատագրված Արցախով սկզբնավորվող միացյալ Հայաստանի:

Այնուհետև, հերթը պետք է հասներ Հայաստանի Անկախության հռչակագրին, և սեփական ձախողումների համար մեղավորներ նշանակելու սովոր Փաշինյանը, այս անգամ էլ մեղավոր նշանակեց Անկախության հռչակագիրը, 2023 թ. օգոստոսի 23-ի «ուղերձում» նշելով. «Հռչակագիրը որքան էլ հիմնարար փաստաթուղթ է, կարիք ուներ և կարիք ունի խորը քննության, որովհետև, այնուամենայնիվ, քաղաքական փաստաթուղթ է, սրանից բխող բոլոր հետևություններով[8]»- հետաքրքիր է, այդ ի՞նչն է «խորը քննելու» փաշինյանական ձախողակ կառավարությունը. հռչակագրի ա՞յն կետը, որ «Հայաստանի Հանրապետությունը ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը»: Չէ՞ որ եկած-չեկած փաշինյանական իշխանությունը թիրախ է դարձրել ՀՀ հիմնն ու զինանշանը, կամ ասենք գուցե «ժողովարչապետի» սրտով չէ, որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ». դրա՞ համար է նա կասկածի տակ դնում Հայաստանի նախորդ 33 տարիների անկախությունը նշելով. «Եվ հիմա, անկախության Հռչակագրի 33-րդ տարեդարձի օրն ուզում եմ ընդգծել, որ մեր կառավարության որդեգրած խաղաղության օրակարգը անկախության օրակարգն է, որովհետև եթե ունենանք խաղաղություն, կունենանք անկախություն[9]»: Ասել է թե, մինչև փաշինյանական գոյություն չունեցող «խաղաղության օրակարգը» Հայաստանն անկախություն չուներ, և 1991-2021 թթ. Հայաստանի բոլոր իշխանություններն ու ներկայացուցչական մարմինները ապօրինի՞ էին….

Գուցե Փաշինյանին դուր չի գալիս Հռչակագրի այն կե՞տը, որով սահմանվում է, որ պետականության կրողը հայ ժողովուրդն է, չէ՞ որ Փաշինյանն իրեն ու իր կառավարությանն է համարում ժողովուրդ: Դրա մասին է վկայում, նրա զավեշտալի «ուղերձը»՝ հղված 2024 թ. օգոստոսին. «Անկախության ու պետականության մասին մեր բոլորիս՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պատկերացումներն ու ընկալումներն այդ ժամանակներից ի վեր էականորեն փոխվել են, և ինձ համարձակություն կվերապահեմ պնդելու՝ դարձել ավելի խորը եւ համապարփակ:

Անկախությունը, պետականությունը, քաղաքացիությունը մտածողության բոլորովին ուրիշ բանաձեւեր են, բոլորովին ուրիշ հարթություններ, և մենք ոտք ենք դնում այդ հարթությունների վրա, որդեգրում ու զարգացնում ենք այդ բանաձևերը՝ հենց այսօր, հենց հիմա[9]». այսինքն՝ առանց Հայաստանի Հանրապետության քաղաքացու կարծիքը

հարցնելու, իրեն «ժողովրդի վարչապետ» հռչակածը պնդում է, որ Անկախության ու պետականության մասին Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պատկերացումները, ոչ թե հաղթած պետությունն է, ազատագրված հայրենիքը, ուժեղ ու մարտունակ բանակը, ազգային ավանդույթներն ու հայոց պատմությունը, ոչ թե հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու Թուրքիայի կողմից հատուցման հասնելու նպատակն է, այլ ապաշնորհ կառավարման, դավաճանության ու կոլաբորացիոնիզմի պատճառով պատերազմում պարտվելը, հայաթափված Արցախը, Ադրբեջանին հանձնված Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի գյուղերը, Թուրքիայի շահերին համապատասխանեցնելով՝ հայոց պատմությունը կեղծելը և համաշխարհային լուրջ վերաձևումների համապատկերում ու համաշխարհային պատերազմից մեկ քայլ հեռավորության վրա՝ հեծանիվ քշելն ու կազմաքանդված բանակը անտարբերության մատնե՞լը:

Իսկապես, որ փաշինյանական կառավարման տարիներին կարելի է միայն մեկ անուն տալ՝ հայկական խայտառակություն:

Իսկ միգուցե Փաշինյանի խնդիրը Հռչակագրի 11-րդ կե՞տն է «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին». չէ՞ որ թուրքական երազանքների «ավելի արդար աշխարհում» հայոց ցեղասպանության և դրա համար Թուրքիայի կողմից հատուցման մասին խոսք չկա, և «նախկիններին» «կախյալ» Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգի գլխավոր հարցերից մեկը լինելով՝ տասնամյակներ շարունակ փշի պես խրված է Թուրքիայի կոկորդը: Անկախության հռչակագրի հենց այդ կետն էլ այդքան անհանգստացնում է Փաշինյանին, ում համար, վախենալու է նաև Հռչակագրի նախաբանը.

«Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝ արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում, ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա, զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը,

Հ Ռ Ջ Ա Կ Ո Ի Մ Է

անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը»: Հայ ժողովրդի միասնական կամքի, իղձերի, ինքնորոշման իրավունքի, ԼՂԻՄ մարզային խորհրդի որոշման մասին հիշատակումը, իհարկե, միայն Ադրբեջանի շահերով առաջնորդվող և նրա երբևէ գոյություն չունեցող «տարածքային ամբողջականության» մասին ցնորքներով առաջնորդվող Փաշինյանի համար՝ վտանգավոր է ու սարսափազդու, էլ չենք խոսում Առաջին Հանրապետության ավանդույթների մասին, չէ՞ որ այդ Հանրապետության տարածքը ավելի քան 70.000 քառ կմ էր՝ ներառյալ Արցախն ու Նախիջևանը, ինչի մասին Փաշինյանն իհարկե վախենում է խոսել, որովհետև իր համար միակ ընդունելի քարտեզը, ինչ որ անհայտ քարտեզ է, որը մեկ 1971 թ. է, մեկ 1973 թվի, մեկ 1975 թվի, դե իսկ Միացյալ Հայաստանի մասին էլ խոսք լինել չի կարող, որովհետև պատմական Հայաստանը վտանգավոր է Փաշինյանի, Էրդողանի և Ալիևի համար:

Հասել ենք շատ կարևոր ու վճռորոշ մի հանգրվանի, երբ հայ ժողովուրդը, նրա ռազմական ու քաղաքական, ինչու չէ, նաև հոգևոր շրջանակները, պետք է շատ լուրջ որոշում կայացնեն, շարունակե՞լ հանդուրժել հայկական խայտառակությունը, և դրա հետևանքով զոհաբերվել թուրքական երազանքների «ավելի արդար աշխարհի՞ն» թե ազատվել իր խայտառակությունից՝ աշխարհին ցույց տալով, որ հազարամյակների պետականության ավանդույթներ ունեցող, պատվախնդիր, քաջարի մարտիկներ ու ստեղծագործ միտք ունեցող հայ ժողովուրդը, (որի նորօրյա պետականությունն իր հազարամյակների պետականությունների պատմական ու քաղաքական ժառանգորդն է և հարյուրավոր սերունդների 800-ամյա երազանքը) ոչ մի կապ չունի թուրքական երազանքի նորօրյա առաջամարտիկ Փաշինյանի և նրա թուրքասեր աշխարհաքաղաքացիների կառավարության հետ:

Հայ ժողովուրդն ունի ընտրության միայն երկու տարբերակ՝ ***վահանով*** կամ ***վահանի վրա...***

Ծանոթագրություններ

1. https://www.azatutyun.am/a/nyou-yorkoum-meknarkel-e-pashinyani-ev-erdoghani-handipoumy/33132732.html
2. Մելքոնյան Ա., Պանթյուրքիզմը և Հայաստանը «Դրօշակ» թիվ 3, մարտ 2021, էջ 34
3. Մելքոնյան Ա., Թուրքական առասպելական հայրենիքի գաղափարն ու հայոց իրական հայրենիքը հայությունից օտարելու փաշինյանական «ուսմունքը», Դրօշակ թիվ 4, ապրիլ 2024, էջ 18, https://www.arfd.am/wp-content/uploads/2024/04/%D4%B4%D6%80%D6%85%D5%B7%D5%A1%D5%AF-%D5%A9%D5%AB%D5%BE-4-2024%D5%A9.pdf
4. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1895
5. https://news.am/arm/news/483017.html
6. https://hayeli.am/?p=149299&l=am
7. https://politik.am/am/hazaravor-kyanqer-zohaberel-enq-hanun-vochnchi-anna-hakobyany-xarabaxyan-hakamartutyan-masin
8. https://www.araratnews.am/show/89940
9. https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2024/08/23/Nikol-Pashinyan-Announcement/

Անցյալի «ուրվականներով» ներկան մանիպուլացնելու ՔՊ տակտիկան

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Ինչպե՞ս է պատահում, որ այլևս գոյություն չունեցող անցյալը հայտնվում է ներկայում և դառնում մահակ այս կամ այն խնդիրը լուծելու համար: Այս բավականին նուրբ հարցը նախ ունի մարդկային մտքին բնորոշ որակներ և, անհրաժեշտության դեպքում, կարող է ունենալ քաղաքական գործածություն: Բանն այն է, որ այն, ինչ տեղի է ունենում այսօր, չափելի է միայն անցյալի հետ: Պատահական չէ, որ մարդիկ շատ հաճախ, պատկերավոր ասած, «խցանվում են» անցյալի սցենարների տարբեր դրվագներում: Ոմանց համար դրանք անցյալի գեղեցիկ և խիստ շահեկան պահեր են ու իրավիճակներ, որոնցում մարդը կարևոր ու ազդեցիկ անձնավորություն էր, իրացնում էր իր ներուժը: Իսկ կարևոր լինելը ցանկացած մարդու համար, ինչպես գիտենք, հիմնարար արժեք է: Ուրիշների համար անցյալը ցավի և տառապանքի շրջափուլ է և նա ոչ մի կերպ չի պատկերացնում, թե ինչպես կարող է ազատագրվել դրանից: Անկարելի է, որ երեկը, այսինքն անցյալը, դառնա ապագա: Եթե ուշադիր զննենք կենսուրախ և եռանդուն մարդկանց կյանքը, նրանց վարքագիծը, կտեսնենք, որ նրանք կարողանում են իրենց կյանքում հնի, հատկապես ոչ հաճելի հիշողության վերածված անցյալի համար տեղ չթողնել: Սա առաջին հերթին վերաբերում է դառնություններին և զրկանքներին: Այն մարդիկ, ովքեր ուժ և խիզախություն են ունենում քննելու այն հարցը, թե ինչն է իրենց մղում դեպի անցյալ, նրանք դուրս են պրծնում անցյալի ապրումների գերությունից: Նրանք սկսում են հասկանալ, որ այցյալի և՛ թունավոր, և՛ նույնիսկ քաղցր հուշերն ասես ակամայից նրանց դարձնում են կույր չղջիկներ, որոնք անվերջ զարկվում են քարանձավի պատերին և անկարող են տեսնել ներկան, կյանքի մաքուր ռեալությունը և վերջապես՝ հասկանում են, որ հենց դա է խլում իրենց կենարար էներգիան: Եվ մի չգրված օրենքի համաձայն, քիչ թվով մարդիկ են, որ անցյալի հանդեպ ունենում են առարկայական և անկեղծ վերաբերմունք: Մարդիկ անցյալը կամ վեհացնում, իդեալականացնում են, կամ փնովում ու նսեմացնում: Այս երկու մոտեցումն էլ ունեն իրենց պատճառները: Խնդիրը տվյալ դեպքում պայմանավորվում է նաև նրանով, թե հասարակության մեջ ինչ մտակաղապարներ են գերիշխում, կամ զանգվածը որպես «քաղաքական սուբստրատ» ի՞նչ ուժերի ձեռքում է: Ամբոխը, որպես կանոն, սեփական կարծիք չունի և չի էլ ունենում, նրան դա պարտադրվում է զանազան քարոզչական ձևերով: Անհատն ունի, ամբոխը՝ ոչ: Ասու՞մ ենք չէ՝ **«Քարոզչությունը մարդկանց չի մոլորեցնում, այն ի սկզբանե նախատեսված է մոլորվածների համար»**: Օրինակ, մեզ թվում էր, թե արցախյան պատերազմի պարտությունից հետո մեր ժողովուրդը կվերագտնի իրեն, սակայն չէինք մտածում, ավելի ճիշտ կլինի ասել, որ չէինք կռահում, թե ՀՀ իշխանությունները և նրանց աջակցող թուրքական և արևմտյան ուժերը սկսելու են շատ նենգ գործունեություն ծավալել հայ հանրությանը շարունակաբար թույլ և խեղճացված վիճակներում պահելու համար: Թե ինչ **«կանխադրույթների»** վրա էր կառուցվում այս ներգործությունը, դժվար է պարզորոշ ասել: Բայց, որ դա մեծ ծավալներով արվում էր և մինչև օրս էլ արվում է, անվիճելի է: Ամերիկացի նեյրոֆիզիոլոգ Դելգադոն դեռ անցած դարի կեսերին արեց հետաքրքիր գիտափորձ: Նա հայտարարեց, որ մարդու ուղեղում կան յոթ հարյուրից ավելի կառավարման կենտրոններ: Դրանք պատասխանատու են մարդու ակտիվության, պասիվության, ուժի ու թուլության, սովի, հանգստի, սեքսի, անվտանգության, կատաղության, վախի, քաջության ու նմանատիպ բազմաթիվ այլ զգացողությունների համար: Նա իր գիտափորձն իրականացրեց Իսպանիայում, ցլամարտի դաշտում: Ընտրվեց Իսպանիայի ամենակատաղի ցուլը, որի հախից բազմաթիվ ցլամարտիկներ չէին կարողացել գալ: Դելգադոն ցլի գլխում



տեղադրեց անհրաժեշտ արձագանքող դիոդը, իսկ կառավարման փոքրիկ վահանակը՝ պուլտը, դրեց գրպանում: Եվ ահա, ցլին բաց թողեցին, որտեղ կարմիր լաթը ձեռքին կանգնած էր Դելգադոն: Կատաղած կենդանին սլացավ դեպի գիտնականը և ընդամենը մի քանի քայլի վրա անշարժացավ: Մարզադաշտը վախից քարացել էր, իսկ Դելգադոն ձեռքի վահանակով սառնասրտորեն կառավարում էր հզոր կենդանուն: Ներկայումս ուղեղի վրա ներգործելու մեթոդներն այնքան են կատարելագործվել, որ Դելգադոյի գիտափորձը մանկական խաղի նման է: Ի՞նչի մասին է վկայում այս գիտափորձը: Մարդու, ամբոխի կամ նույնիսկ հանրային մեծ խմբերի դեպքում՝ բնավ էլ պարտադիր չէ կիրառել դիոդներ: Բավարար է ընդամենը **կանխորոշել, նախատրամադրել և ուղղորդել մարդկանց միտքը, նրանց պատկերացումներն ու «համոզմունքները» անվերջ կրկնությունների եղանակով**: Մեր դեպքում՝ գործի դրվեց «հանցագործ նախկինները» կեղտոտ թեզը, որն աշխատեց անվրեպ: Որտե՞ղ է այս դեպքում բանականությունը, ո՞նց է լինում, որ պատերազմում պարտված, երկիրը նորանոր կորուստների ու աղետների տանող իշխանությունները կարողանում են մեղքը բարդել նախկինների վրա և խուսափել պատասխանատվությունից: Նախկինների դեմ վայրահաչող այս զանգվածը սրանից մի յոթ-ութ տարի առաջ, այսինքն՝ մինչև դուրսպրծուկների իշխանազավթումը, ապրում էր լիակատար անվտանգության պայմաններում, շատ ավելի կուշտ էր և անհոգ: Նրանց ալիևներն ու էրդողաններն ամեն օր չէին նվաստացնում ու ծաղրում, իսկ ազգային արժանապատվությունը լաթի պես թշնամու ոտքերի տակ չէր: Ասենք ավելին՝ երկրորդ և երրորդ նախագահների կառավարման շրջանում ձևավորվեց լուրջ օրենսդրություն, կայացան և ամրապնդվեցին տնտեսական կառուցվածքներն ու ենթակառույցները, լավ հիմքերի վրա դրվեց բանկային համակարգը, բանակը վերազինվեց և վստահորեն տեր կանգնեց երկրի սահմաններին և այլն: Սակայն պարզվեց, որ այս ամենը էական չէ, էականն այն է, որ պարտության մեղավորի պիտակն առաջինը հենց նախկինների ճակատին դրոշմվի: Հանրության աչքում վարկաբեկված մի քանի անունները բավարար էին, որպեսզի կառավարությունների պետականաշինական վիթխարի գործունեությունը ակնթարթորեն հավասարեցվի զրոյի և «կոռուպցիա» մոգական մահակը ոչնչացնի արված ամեն լավ բան: Հասկանալի է, դրածոները սցենարի կետերն էին իրականացնում, բայց ի՞նչու էր հսկա զանգվածը այդպես հիմարացել: Հանելու՞կ է սա, իհարկե՝ ոչ: Այս դեպքում գործադրվել է գովազդը հաճախ կրկնելու մեթոդը, որն անթերի կիրառեց նիկոլական ֆեյքերի ինդուստրիան: Բանն այն է, որ թե առանձին վերցրած անհատը և թե հանրությունն ամբողջությամբ, հակված են սևեռվելու միայն բացասական երևույթների վրա: Սա մարդկային բնույթից բխող իրողություն է: Բացասական տեղեկատվությունը ավելի հետաքրքիր, ձգող, «հրապուրիչ» է: Մարդիկ հատուկ ուշադրությամբ են լսում վատ լուրերը: Մտաբերենք նաև այն, որ, օրինակ, մարդիկ մեր ազգի պատմության մասին խոսելիս, հակված են կենտրոնանալու հիմնականում վատ դրվագների վրա: Հատկապես այնպիսիների որոնց պարագայում մենք թույլ ենք, անկազմակերպ ու վախկոտ: Չգիտես ինչու, այդ դեպքերում ժողովրդի հերոսական էջերը անտեսվում կամ մոռացվում են: Բայց հարց տանք՝ թե ի՞նչի համար են պետությունը, տեղեկատվա-քարոզչական ինստիտուտները, ազգային գաղափախոսությունը, անվտանգության հայեցակարգը, կրթադաստիարակչական ռազմավարությունը և այլն: Գոնե մտովի կարո՞ղ ենք պատկերացնել, որ, օրինակ, Ռուսաստանում մի գործիչ ասեր՝ **«Պատմական Ռուսաստան և իրական Ռուսաստան»**: Սույն տկարամիտին կկապեին Կրոնշտադտի հրանոթներից մեկի փողին ու… Միայն Հայաստանում է, որ մի հոգեկան հիվանդ կարող էր նման բաներ զառանցել: Ռուսները լավ հասկանալով Արևմուտքից սպասվող դավերը և իրենց գլխի գալիքը, ուժեղ ազգային,

հայրենասիրական և պետական քարոզչություն էին ծավալում երկրի ներսում վերջին տասնամյակների ընթացքում: Միայն ռուսական կինոինդուստրիան մի ակնթարթ անգամ չթուլացրեց իր մկանները՝ ստեղծելով ռազմահայրենասիրական և պետականապաշտական բազում լիամետրաժ ու վավերագրական ֆիլմեր: Ու երբ եկավ պահը ռուս հասարակությունն արդեն գիտեր իր անելիքը: Այս ամենը տեսնելով մարդ ամոթից կախում է գլուխը: Թուքիայից և այլ կենտրոններից կառավարվող քարոզչամեքենան իր բովանդակ տգիտությամբ հանդերձ մի բան լավ էր յուրացրել. **«պետք է մեղադրել միայն, բայց չներկայացնել մեղադրանքը հաստատող փաստեր»**: Նրանք գիտեին, որ զանգվածը հակված չէ քննաբար ընկալելու իրականությունը, դա զանգվածի համար «ծանր աշխատանք է»: Ամբոխին միշտ պետք է տալ նրա ատամներին հարմար ծամելու բան: Ի՞նչու, ի՞նչպես հարցերի փոխարեն մեզանում հրապարակ նետվեց «ռոբա-սերժական ատելի նախկիններ» խայծը: Հետագա պայքարի ժամանակ և մինչև օրս այն աշխատում է իր ողջ ուժով: Նախագահ Ռոբերտ Քոչարյանի դեմ վերաբացված նողկալի քրեական գործը, որը նախագահը անվանեց «իրավական խուլիգանություն» ասվածի վառ ապացույցն է: Նիկոլը հասկացել է, որ նախկինների դեմ արշավի վառոդը դեռ կարող է կայծեր առաջացնել ու իրեն օգտակար լինել: Կարող է թվալ, թե այն վերջին շրջանում մաշվել է, դարձել ոչ պիտանի, բայց դա միայն թվում է: Վերջերս մի հոգևորական իբրև թե իշխանությանը հակառակ խրամատից կրկին հրապարակ է նետում այն խայծը, թե ո՞րն էր նիկոլական իշխանության դեմ պայքարի անհաջողության գլխավոր պատճառ: **«Բագրատ սրբազանի առաջնորդած շարժումը չի հաջողում, որովհետև նրա կողքին են երկրորդ և երրորդ նախագահները»**... Ասենք միանգամից՝ **սա չպայքարելու, գլուխը ավազի միջից չհանելու, անձնական պատասխանատվություն չստանձնելու ճարպիկ մարտավարություն է**: Առավել պատկերավոր ասած՝ սա նույնն է, որ ենթադրենք, բակում սոսկալի հրդեհ է, իսկ մի մարդ հենված բարձրահարկ շենքի իր պատշգամբի բազրիքին, «իմաստուն» դատողություններ է անում՝ թե ինչպես պետք է մարել հրդեհը: Մեր պատմության մեջ այս ամենը արդեն եղել է, սա բնավ նորություն չէ: Ի վերջո, ցավով արձանագրենք՝ հիմա ո՞ւրտեղ է մեր մեծ հայրենիքը: Երբ բացատրում ես նախկին նախագահների դեմ թույն արտաշնչող մարդկանց, թե «**լսեք, սա է մեր ունեցած քաղաքական համակարգը, եթե դուք կարո՞ղ եք ավելին անել, արե՛ք: Կամ՝ գուցե գիտե՞ք, թե ո՞նց եք պայքարելու մի գերհզոր հիդրայի դեմ, որն ունի նվազագույնը չորս-հինգ գլուխ՝ Ադրբեջան, Թուրքիա, Արևմուտք, իսկ ներսում՝ «Քաղպայմանագիր»**»: Այս հզոր կենտրոնների և երկրների համար մենք սոսկ տարածք ենք իրենց գիշատչական շահերի ու նպատակների համար: Մնում է հարցնել՝ **«Ուրեմն, դուք ևս չեք հասկանում, թե ինչպես են մանիպուլացնում «նախկինների» խայծով և կառչած մնում իրենց աթոռներից»** ... Այլ բան է, որ մեր հասարակությունը և քաղաքական առողջ ուժերը վստահաբար մի հարցում վրիպել են. նրանք ուղղակի չհավատացին, որ իրենց դեմ կանգնած «նիկոլական» տհասների խումբը, ինչքան էլ թվաքանակով փոքր ու անլուրջ թվա, մի հարցում անասելի ուժեղ է. նա կազմակերպված է մի քանի անգամ ավելի, քան ընդվզող հանրությունը: Այն ունի թե ֆինանսական և թե զանազան լծակների կիրառմամբ «դրսի» ուժեղ աջակցությունը: Առիթ ունեցել ենք ասելու և հիմա էլ տեղին է մտաբերել ամերիկյան հայտնի քաղաքական գործիչներից մեկի բերած դիպուկ օրինակը; Նա հարցնում է՝ **«Ինչպե՞ս է պատահում, որ երեք գանգստեր մտնում են գնացքի վագոն և կարողանում են հանգիստ կողոպտել ու ստորացնել 60-70 ուղևորի»**: Ինքն էլ պատասխանում է տված հարցին՝ **«Որովհետև այդ երեք գանգստերը կազմակերպված են, այն 60-70 ուղևորը՝ ոչ»** ... Ահա, թե ի՞նչու այսքան կշտամբանք լսելուց և ատելության թիրախ դառնալուց հետ էլ «Քաղպայմանագիր» կոչվող թուրքասեր հոտը չի տրոհվում, չի պառակտվում: Ուրեմն, ընդունենք, որ սա ավելին է, քան սովորական կուսակցությունը, սա թշնամական հիդրայի **«ամենամարտունակ և կենսունակ»** գլուխն է: Այդ մեզ է թվում, թե սրանք ոնց պատահական եկել են, այնպես էլ կգնան: Գնալը կգնան, այլ հարց է, թե նրանցից հետո մեր հայրենիքից ինչ կմնա: ■



44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 2)

Սարգիս Սարգսյան
Մոսկվայի Վ. Արծրունու անվան Սևծովյան-Կասպիական տարածաշրջանի ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Հոդվածի առաջին մասը (տես՝ Դրօշակ»ի 2024 թ., ինսներորդ համարը, 30/09/2024, Սարգիս Սարգսյան 44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 1) (էջ 20-31)) հիմնականում նվիրված էր 2005-2020 թվականներին աշխարհի տարբեր երկրների հետ Հայաստանի և Ադրբեջանի ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցությանը: Ակնհայտ է, որ նշված ժամանակահատվածում Ադրբեջանի ռազմաքաղաքական վերնախավը արել էր հնարավորը երկու երկրների միջև ռազմական հավասարակշռությունը խախտելու համար՝ անթաքույց հետապնդելով Արցախի խնդրում պատերազմական ռևանշի նպատակ: Հայատյացության և ռևանշի ոգով 30 տարի շարունակ դաստիարակվել են ադրբեջանական հասարակության բոլոր շերտերը: Արցախյան երկրորդ պատերազմի՝ հայկական կողմի համար աղետալի ավարտից հետո էլ հայատյացությունը մնում է ադրբեջանական պետության և, այսպես կոչված, «ադրբեջանցի» ազգի կայացման հիմնական գաղափարախոսական կովանը: Հայաստանի Հանրապետության տարածքը հայտարարելով Արևմտյան Ադրբեջան, Իլհամ Ալիևի վարչախումբը տերերին ցուցադրում է պատերազմը շարունակելու իր պատրաստակամությունը: Իրենց հերթին, Հայաստանի օրվա ամենատարբեր իշխանավորներ, Հայաստանի և Արցախի պաշտպանական խնդիրներին նայել են մատների արանքով: Հասկանալի է, որ Ադրբեջանի նման հարուստ երկրի հետ ռազմատեխնիկական մրցավազքում Հայաստանը պետք է գտներ ժամանակակից, ոչ նյութատար լուծումներ, էլ չասած, որ հնարավոր էր Արցախ մտած գումարներով անցած տարիներին Արցախը վերածել անառիկ ամրոցի: Ինչևէ, ունենք, այն, ինչ ունենք, և ժամանակն է սեփական պարտությունից անել տրամաբանական, առարկայական հետևություններ, ինչը, ցավոք, փայլուն ստացվեց ադրբեջանցիների մոտ: Մինչև Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքի և արդյունքների վերաբերյալ անկախ դիտորդների դիտարկումների և եզրահանգումների հանրագումարը ընթերցողին ներկայացնելը, ցանկանում ենք արձանագրել մի կարևոր փաստ. Հայաստանի դիվերսիֆիկացված ռազմատեխնիկական համագործակցությունը, հատկապես Հնդկաստանի և Ֆրանսիայի հետ, լուրջ մտահոգության առիթ է դարձել Ադրբեջանում, և այդ մտահոգությունն ունի երկու պատճառ: Մի կողմից՝ Հայաստանի, ռազմականացման հնարավորությունը (ինչի այլընտրանքը հայ ժողովուրդը պարզապես չունի) պատնեշ

կստեղծի երկիրը մասնատելու պանթուրանական և պանթուրքիստական ծրագրերի ճանապարհին, մյուս կողմից՝ Ադրբեջանում չեն կարող չհասկանալ, որ աշխարհաքաղաքական և տարածաշրջանային ցանկացած փոփոխություն, այդ թվում, և առաջին հերթին, Հայաստանում իրապես հայկական շահերով առաջնորդվող իշխանության ձևավորումը, հնարավորություն են տալու սրբագրել Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքները, որոնք կասկածի տակ են դրվում և դրվելու են ինչպես համաշխարհային լուրջ խաղացողների (Ֆրանսիա, Հնդկաստան, Կանադա, ինչ որ պահի՝ նաև Ռուսաստան, ըստ իրավիճակի՝ ԱՄՆ), այնպես էլ Իրանի, Հունաստանի, այլ շահառու երկրների կողմից: Պատահական չեն նաև ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ դե յուրե լուծարելու Ադրբեջանի ջանքերը:

Ո՞ր գնումներն են, ըստ մեզ, Ադրբեջանի մտահոգության հիմնական պատճառները:

«The Hindustan Times» հրատարակությունը, վկայակոչելով հնդիկ բարձրաստիճան պաշտոնյաներին, հայտնել է, որ Հայաստանը դիմել է Հնդկաստանին՝ իր Սու-30ՍՄ կործանիչներն արդիականացնելու խնդրանքով: Երևանի այս խնդրանքը զարմանք չի հարուցում, քանի որ Հայաստանը վերջերս լուրջ

ռազմատեխնիկական համագործակցություն է հաստատել Հնդկաստանի հետ և նրանից տարբեր անվանակարգության սպառազինություն է գնում: Հնդկական լրատվամիջոցների համաձայն՝ Սու-30ՍՄ-ի արդիականացումը, որի հետ հույս է կապում Հայաստանը, ներառում է ավիոնիկա, ռադիոէլեկտրոնային պատերազմի համակարգեր և սպառազինություն: Այս տեղեկատվությունը հաստատում է նաև հնդկական «Business Standard» օրաթերթը, որը հայտնում է, թե խոսքը նաև օդ-օդ դասի հնդկական «Astra» հրթիռների գնման մասին է: Իր հերթին, Հայաստանի զինված ուժերի ավիացիայի վարչության պետ Հովհաննես Վարդանյանը «Tarang Shakti 2024» զորավարժությունների կուլիսներում «Hindustan Times»-ին տված հարցազրույցում ասել է, որ «Հայաստանը դիտարկում է Սու-30 կործանիչների արդիականացման հնարավորությունը «Hindustan Aeronautics Limited»-ի (HAL) օգնությամբ, որն այս ոլորտում մեծ փորձ ունի»:

Նշենք, որ «HAL» ընկերությունը Հնդկաստանի ռազմաօդային ուժերի համար ռուսական արտադրության կործանիչներ է արտադրում Նաշիկում գտնվող իր ավիաարտադրական ստորաբաժման լիցենզիայով:

Երևանի հետ Նյու Դելիի պաշտպանական համագործակցության ծավալը ցույց է տալիս, որ Հնդկաստանը՝ Ֆրանսիայի հետ, դարձել է Հայաստանին ռազմական տեխնիկայի հիմնական մատակարար: Հիշեցնենք, որ Երևանը պետք է հնդկական «Akash-1S» հակաօդային պաշտպանության սեփական նախագծման համակարգը ստանա մինչև 2024 թվականի վերջը: Հայաստանը 720 միլիոն դոլար արժողությամբ 15 նման համակարգեր է պատվիրել 2022 թվականին՝ դառնալով «Bharat Dynamics Limited» հարթակի առաջին միջազգային պատվիրատուն: Հարկ է նշել, որ, ռազմատեխնիկական ոլորտում համագործակցելով Հայաստանի հետ, Հնդկաստանը հետապնդում է իր աշխարհաքաղաքական նպատակները: Այսպես, «The Jamestown Foundation»-ի վերլուծության մեջ ասվում է, որ Հայաստանի հետ Հնդկաստանի աճող գործընկերությունը ոչ միայն նպաստում է ռազմական տեխնիկայի արտահանմանը, այլև Նյու Դելիին ապահովում է ռազմավարական ներկայություն Հարավային Կովկասում: Վերլուծաբանները նշում են, որ դա Հնդկաստանին կօգնի դիմակայել տարածաշրջանում Պակիստանի և Թուրքիայի ազդեցության աճին, և ընդլայնել Հնդկաստանի մուտքը եվրոպական և եվրասիական շուկաներ: Վերլուծության համաձայն՝ երկու երկրների միջև պաշտպանական համագործակցության խորացումն արտացոլում է տարածաշրջանային դաշինքների վերաձևավորման նրանց ռազմավարական ջանքերը: Հնդկաստանում «Ուսանաս Աբխինավի» հիմնադրամին առընթեր վերլուծական կենտրոնի տնօրեն Պանդյան այս տարվա հունվարին «ETV Bharat» հեռուստալիքին տված հարցազրույցում

բացահայտ հայտարարեց, որ «Հնդկաստանը պետք է դիմակայի Հարավային Կովկասի տարածաշրջանում Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան առանցքին, քանի որ Պակիստանը մեր հին թշնամին է: Հենց սա է պատճառը, որ Հնդկաստանը զինտեխնիկա է մատակարարում Հայաստանին»: Այս համատեքստում Հնդկաստանը ընդլայնում է ռազմական համագործակցությունը ոչ միայն Հայաստանի, այլև Հունաստանի հետ, որը լուրջ տարաձայնություններ ունի Թուրքիայի հետ: 2023 թվականի օգոստոսին վարչապետ Նարենդրա Մոդիի Աթենք կատարած մեկօրյա պաշտոնական այցի ժամանակ հնդկական լրատվամիջոցները գրեցին այն մասին, որ այս իրադարձությունը «կարևոր ազդանշան կլինի Քաշմիրի հարցում Պակիստանի շահերին աջակցող Թուրքիայի համար»: Այդ ժամանակ էլ «Financial Express» օրաթերթը հայտնել է որպես Թուրքիա-Պակիստան-Ադրբեջան դաշինքին այլընտրանք՝ Հայաստանի և Հունաստանի մասնակցությամբ ուժի նոր կենտրոն ստեղծելու Հնդկաստանի ծրագրերի մասին: Հետևաբար, կասկած չկա, որ հնդկական ռազմական մատակարարումները Հայաստան՝ Նյու Դելիի դեմարշն է Բաքվի և Անկարայի դեմ՝ Քաշմիրի հարցում նրանց դիրքորոշման համար: Ադրբեջանական կողմի լկտի պահանջների վրա հիմնված խաղաղ պայմանագրի կնքումից Երևանի խուսափումների ֆոնին՝ Հնդկաստանի դիրքորոշումը նպաստում է Հայաստանի դիրքերի ուժեղացմանը: Այսպես, այս տարվա հունվարին իտալական «La Republiça» պարբերականին տված հարցազրույցում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է այն մասին, որ ռազմականացման ուժեղացումը պայմանավորված է նրանով, որ Երևանը փորձում է դիվերսիֆիկացնել իր անվտանգային խնդիրները: Հուսանք, որ Հայաստանի վարչապետի այս հայտարարությունների հետևում կանգնած են՝ իր ռազմական զինանոցը սպառազինության նոր տեսակներով համալրելու Երևանի ծրագրերը: 2024 թվականի փետրվարին Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը Հանրային հեռուստատեսությանը տված հարցազրույցում հայտարարեց, թե՝ Հայաստանը

լուրջ հաջողությունների է հասել զենքի գնումների ոլորտում:

«Այս գործընթացում մենք ձեռք ենք բերել նաև նոր գործընկերներ՝ խոշոր գերտերությունների և այլ բարեկամ երկրների մակարդակով: Խոսքը Ֆրանսիայի և Հնդկաստանի մասին է, բայց խոսքը նաև այլ գործընկերների մասին է, որոնց մասին ես առայժմ չեմ ուզում խոսել»,- ասել է Պապիկյանը:

Որոշ տեղեկությունների համաձայն, Հայաստանի պաշտպանության նախարարի սեպտեմբերի 10-ին Հարավային Կորեա կատարած այցի շրջանակներում, Սեուլում, Հայաստանին հարավկորեական զենք մատակարարելու պայմանավորվածություն է ձեռք բերվել: Մասնավորապես, ըստ ինսայդերական լուրերի՝ Սեուլում դիտարկվել է՝ կամ «K1», կամ նույնիսկ «K2 Black Panther» («Սև հովազ») տանկերի և սպառազինության այլ տեսակների ձեռքբերման հնարավորությունը: Նշենք, որ K2 «Սև հովազ»-ը՝ հարավկորեական բանակի գլխավոր մարտական տանկն է, որը մշակվել է Պաշտպանության զարգացման գործակալության (Agency for Defense Development, ADD) և «Hyundai Rotem» ընկերության (Hyundai Motors-ի ստորաբաժանում) կողմից: K2-ը բանակում պետք է փոխարինի ամերիկյան M48 տանկերին և լրացնի K1 տանկերի պարկը: 2022 թվականի դրությամբ K2-ը աշխարհում միակ չորրորդ սերնդի տանկն է, որը շահագործման է հանձնվել (ըստ որոշ տվյալների՝ Երևան սպառազինության պոտենցիալ արտահանողների ցանկը կարող է լրացնել Ճապոնիան): Հայաստանը չի սահմանափակվում միայն Եվրոպայից և Հնդկաստանից ռազմական մատակարարումներով, նրա պլանների մեջ են մտնում ընդլայնել ռազմականացման աշխարհագրությունը Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հաշվին: Պաշտոնական Բաքուն, բազմիցս Հայաստանի իշխանություններին սպառնալից զգուշացրել է այն ծանր հետևանքների մասին, որոնց հետ Հայաստանը կարող է բախվել տարածաշրջանում նոր ռազմական առճակատման դեպքում: Իլհամ Ալիևն այս տարվա ապրիլին ԱԴԱ համալսարանում կայացած «COP29 և կանաչ տեսլականը Ադրբեջանի համար» միջազգային ֆորումում իր ելույթում ուղղակիորեն հայտարարեց, որ Ադրբեջանը պատասխան քայլեր է ձեռնարկելու Հայաստանի ուժեղացված ռազմականացման հետ կապված: «Մենք չենք կարող նստել և սպասել, մինչև Ֆրանսիան, Հնդկաստանը և Հունաստանը մեր դեմ զինեն Հայաստանին: Նրանք դա անում են բացահայտ ու ցուցադրաբար, և նույնիսկ փորձում են այդպիսով ինչ-որ բան ապացուցել մեզ: Մենք չենք կարող պարզապես ձեռքերը ծալած նստել: Մենք այս դիրքորոշումը հստակ փոխանցել ենք Հայաստանի կառավարությանը և այն կողմերին, որոնք այսօր փորձում են մտահոգություն դրսևորել Հայաստանի հանդեպ: Եթե մենք մեզ համար լուրջ վտանգ տեսնենք, ստիպված կլինենք լուրջ միջոցներ ձեռնարկել»,- զգուշացնում է Բաքվի բռնապետը: Բաքվի անթաքույց շանտաժն առավել ևս անհրաժեշտ է դարձնում Հայաստանի կողմից նոր զինատեսակների ձեռք բերման անհրաժեշտությունը: Մենք, մեր հերթին, փայլուն հասկանալով նոր լայնամասշտաբ պատերազմի հավանականությունը, փորձ ենք կատարում աշխարհի տարբեր ռազմաքաղաքական պարբերականներում տեղ գտած նյութերի համեմատական վերլուծությունը ներկայացնել ընթերցողին, բնականաբար, մեր ուշադրությունը սևեռելով մեր՝ հայկական կողմի թույլ տված սխալներին և բացթողումներին: Հարկ է հեռանալ «արծրունհովհաննիսյանական» «հաղթելու ենք» կեղծ հեշտեգի տրամաբանությունից: Որովհետև, երբ նայում ես 44-օրյայի քրոնիկոնում Ադրբեջանի զինված ուժերի մարդկային և տեխնիկական կորուստների վերաբերյալ հայկական կողմի հայտարարած քանակին, ապա պատերազմի, առնվազն 10-րդ օրը, կովկասյան թաթարների բանակը պետք է դադարեր գոյություն ունենալ: Ինչևէ:

Եվս մեկ անգամ խնդրում ենք նկատի ունենալ, որ հեղինակը ներկայացնում է տարբեր, այդ թվում և՛ թուրք, և՛ ադրբեջանցի հետազոտողների, տեսակետների հանրագումարը, որտեղ կարող են լինել վիճարկելի թեզեր, անճշտություններ, ենթակայական մոտեցումներ:

Այսպիսով՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը Արցախում տեղի ունեցած կատաղի մարտերը կողմերի կրած կորուստների քանակով դարձել են հետխորհրդային տարածքում ամենախոշոր ռազմական բախումներից մեկը (մոտ 10 հազար զոհ, այդ թվում՝ խաղաղ բնակիչներ) և՛ կորուստների ինտենսիվությամբ՝ սպանվածների միջին օրական թվով, և՛ ներգրավված ուժերի քանակով՝ ընդհանուր առմամբ մինչև 200 հազար սվին: Համարյա բոլոր վերլուծաբանները արձանագրում են, որ Արցախում ընթացավ նոր տիպի պատերազմ, որում մեծ դեր խաղացին ռոբոտային, հեռակառավարվող տեխնիկան և գերճշգրիտ զենքերը: Այո՛, այս հակամարտությունը պետք է դառնա մասնագիտացված ռազմական հաստատությունների մասնագետների

ուսումնասիրության առարկան՝ առաջին հերթին կիրառվող ուժերի և միջոցների հավասարակշռությունը հասկանալու առումով:

Այս ռազմարշավն ուներ ասիմետրիկ հակամարտության բնույթ, որի ընթացքում հակառակորդները գտնվում էին տեխնիկական զարգացման տարբեր մակարդակների վրա և, համապատասխանաբար, փնտրում միմյանց դեմ պայքարի տարբեր մեթոդներ: Սա պատերազմ էր սկզբունքորեն տարբեր տեխնիկական զարգացման մակարդակ ունեցող հակառակորդների միջև, ինչպես օրինակ ամերիկացիների և իրաքցիների միջև 2003 թ.: Հայկական կողմը տեխնիկապես և տակտիկապես մնաց 20-րդ դարի 70-80-ական թվականների տանկերով՝ առանց դինամիկ պաշտպանության և առանց անօդաչու ինքնաթիռների: Այդ իմաստով ադրբեջանցիները մեկ-երկու սերունդ գերազանցում էին հայկական կողմին, նրանք արդեն քառորդ դար պատրաստվել էին ռևանշի: 2016-ի սահմանային կարճ պատերազմը հայերիս համար առաջին ահազանգը չդարձավ: Մենք արեցինք իրավիճակին և վտանգի աստիճանին չհամապատասխանող մասնակի, սահմանափակ, ուռահայրենասիրական, ոչ առարկայական հետևություններ և եզրակացություններ:

Պատերազմի սկզբում հայկական կողմը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ ՊԲ) զինված ուժերի թիվը 18,5 հազարից հասցրեց 21,4 հազարի: Այդ թվում՝ 13 հազար զինվորականներ եղել են Հայաստանից ժամկետային զինծառայողներ, իսկ շուրջ 8500 մարտիկները՝ Արցախից: Արցախի բնակչության հաշվին հայկական կողմը կարող էր զորակոչել ևս յոթից ութ հազար մարդու, պակասի մնացած մասը պետք է լրացվեր Հայաստանից մոբիլիզացիայի միջոցով: ԼՂՀ-ում հայկական զորքերի տեղակայման և մատակարարման գնահատված սահմանը եղել է 80–100 հազար սվինների սահմաններում: Այս ցուցանիշին կարելի էր հասնել Հայաստանից զինուժի ինտենսիվ տեղափոխման երեք շաբաթվա ընթացքում (սարքավորումներով, կամ առանց սարքավորումների): Քանզի Արցախի ՊԲ-ն, ցավոք, այլևս որպես միավոր գոյություն չունի, բերվող տվյալները գաղտնիություն արդեն չեն պարունակում: Կազմակերպչական առումով հայկական զորքերը ԼՂՀ-ում, առաջին էշելոնում, կենտրոնացված էին հետևյալ մարտակարգով (օպերատիվ զորաշարք), ինչը ենթադրում էր նաև ուժեղ համազորային ռեզերվի առկայություն: Աջ թևում տեղակայված էր 18-րդ մոտոհրաձգային դիվիզիան (ներառում էր 3 պաշտպանական շրջան, 1 զրահատանկային գունդ, 1 հրետանային գունդ, ենթակա այլ ստորաբաժանումներ): Կենտրոնում ներառված էր 2 պաշտպանական շրջան: Ձախ թևում տեղակայված էր 10-րդ լեռնահրաձգային դիվիզիան (ներառում էր 3 պաշտպանական շրջան, Հաթերքի հրաձգային գումարտակը, 1 մոտոհրաձգային գումարտակ, 1 հրետանային գունդ, ենթակա այլ ստորաբաժանումներ): Ռեզերվում՝ հայտնի Ցորի բրիգադը (8-րդ հրաձգային բրիգադ), Խոջալուի տանկային բրիգադը, 1 զենիթահրթիռային բրիգադ, 1 հրետանային բրիգադ, ռադիոէլեկտրոնային պայքարի (ՌԷՊ) գումարտակ: Արդյունքում, փաստորեն, հայկական կողմը դիվիզիաներից յուրաքանչյուրի հիման վրա տեղակայել է ինչ որ առումով մինի կորպուսներ, այսինքն՝ դիվիզիոններ, որոնք ավելի շուտ, ունեին վարչական կազմավորումների և օպերատիվ հրամանատարության բնույթ: Հաշվի առնելով ԼՂՀ աշխարհագրությունը՝ հայկական կողմն ուներ առնվազն երեք այդպիսի դիվիզիոն-կիսակորպուս՝ հյուսիսում, կենտրոնում և հարավում գործողությունների համար: Հնարավոր էր նաև թիկունքում ձևավորել չորրորդ դիվիզիոնը, որն ի վիճակի կլիներ հանդես գալու որպես օպերատիվ ռեզերվ: Ադրբեջանական զորքերը ներառում էին հինգ բանակային կորպուս, որոնցից չորսը տեղակայված էին հենց բուն Ադրբեջանի տարածքում (1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ), իսկ մեկը՝ 5-րդ ուժեղացված կորպուսը՝ Նախիջևան էքսկլավում: 1-ին բանակային կորպուսը հայտնի է որպես Ադրբեջանի զինված ուժերի ամենավտանգավոր և ռազմավարական ուժը: Նրա ստորաբաժանումների մեծ մասը տեղակայված է եղել Արցախի հետ շփման գծում: Այն նաև կոչվում է Բարդա կորպուս (կենտրոնական՝ Եվլախ, հրամանատար գեներալ Այազ Հասանով): 2-րդ բանակային կորպուսը Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ մասնակցել է Խոջավենդի շրջանում Հայաստանի զինված ուժերի դեմ գործողություններին: Մասնակցել է Արազբոյու գործողություններին (Կովսականի (Զանգիլան) համար մղվող մարտեր) և Լաչինի մարտերին: Հոկտեմբերի 9-ին հայտարարվեց, որ Հադրութն ու շրջակա ութ գյուղերը գրավվել են կորպուսի կողմից: Մինչև հոկտեմբերի 20-ը շրջանի ևս տասներեք բնակավայր հայտնվել է կորպուսի վերահսկողության տակ (շտաբ կայան՝ Բեյլագան, հրամանատար՝ գեներալ Մուբարիզ Ռզան): 3-րդ բանակային կորպուսը Ադրբեջանի ցամաքային զորքերի շրջանային զորամաս է, որը կոչվում է նաև Շամկիրի կորպուս: Նրա ստորաբաժանումների մեծ մասը գտնվում էր Արցախի հետ շփման գծում: 4-րդ բանակային կորպուս (Բաքու), (5-րդ բանակային կորպուս՝ Նախիջևան):

Ավելի կոնկրետ. Եվլախի առաջին բանակային կորպուսը կենտրոնացած էր Գյանջայում, Բեյլագանի երկրորդ բանակային կորպուսը տեղակայված էր Արցախի սահմաններին, երրորդ՝ Շամքիրի բանակային կորպուսը նույնպես տեղակայված էր Արցախի սահմաններին, Բաքվի չորրորդ բանակային կորպուսի պատասխանատվության գոտին ընդգրկում էր Ապշերոնի թերակղզին: Ադրբեջանն Արցախի դեմ ի սկզբանե գրոհել է երեք կորպուսի և 15-16 մոտոհրաձգային բրիգադների (MSBR), ինչպես նաև այլ ստորաբաժանումների, այդ թվում՝ 1 տանկային և 1 հրետանային բրիգադների ուժերով: Այսինքն՝ յուրաքանչյուր՝ հյուսիսային, կենտրոնական և հարավային ուղղություններով մարտի մեջ է մտցվել մեկական լիարժեք կորպուս: Նշենք, որ կորպուսն ավելի կառավարելի զորամիավորում է, որը համապատասխանում էր ընթացող պատերազմական իրավիճակին, ի տարբերություն հայկականի: Հիմնական հարվածը Ադրբեջանը հասցրել է 18-րդ մոտոհրաձգային դիվիզիայի ուղղությամբ՝ 2-րդ բանակային կորպուսի ուժերով: Մյուս հարվածը հասցրել է 10-րդ լեռնահրաձգային դիվիզիայի դիրքերի, այսինքն՝ Մարտակերտի ուղղությամբ, և չի կարողացել արձանագրել որևէ հաջողություն: Ինչ վերաբերվում է Մարտունիի և Ասկերանի ուղղությամբ գործողություններին, ապա այստեղ ադրբեջանցիները ընդամենը իրականացրել են կաշկանդող հարձակողական գործողություններ, նպատակ ունենալով թույլ չտալ, որպեսզի այստեղից ուժեր տեղափոխվեն ավելի վտանգված ուղղություններ: Քարվաճառի ուղղությամբ ադրբեջանցիները նույնիսկ 1 սանտիմետր առաջխաղացում չեն ունեցել: Իր խնդիրը չկատարեց ՀՀ ՋՈՒ 1-ին բանակային կորպուսը, որ նախատեսված էր որպես օպերատիվ ռեզերվ և իր կազմում ուներ 3 համազորային և մեկական հրետանային, մոտոհրաձգային ու տանկային գնդեր: Անհրաժեշտ է արձանագրել, որ պատերազմի սկզբնական՝ 7-10 օրում, չունենալով որևէ շոշափելի հաջողություն, ադրբեջանցիները ստիպված են եղել մարտի մեջ մտցնել նաև Բաքվի տարածաշրջանում տեղակայված 4-րդ պահեստային կորպուսի ռեզերվները:

Նշենք, որ պատերազմի սկզբից ի վեր Ադրբեջանը երկրորդ գծում տեղակայել էր վեց լրացուցիչ մոտոհրաձգային բրիգադ, զորքերը տեղափոխել պատերազմի ժամանակաշրջանի կազմակերպչական գրաֆիկի՝ պահեստազորայինների զորակոչով: Արդյունքում ադրբեջանական կողմը ի սկզբանե, հարձակման է անցել 20 փոքր հետևակային բրիգադի (խաղաղ ժամանակ բրիգադի անձնակազմը մոտ 3500 սվին է), երկու տանկային բրիգադի, հրետանային, լեռնային և հատուկ ստորաբաժանումների ուժերով՝ ընդհանուր առմամբ սկզբնական փուլում մարտի դաշտ դուրս բերելով մոտ 100 հազար մարդ (սվին), որը պատերազմի ավարտական փուլում վերածվեց 150 հազարանոց բանակի: Այսպիսով, նկատենք, որ Ադրբեջանը պատերազմի ողջ ընթացքում կարողացավ ապահովել մարդուժի եռակի առավելություն: Ադրբեջանցիները հիմնական հարվածը հասցրեցին հարավում, որտեղ ԼՂՀ-ն շրջապատող լեռների շղթայում Արաքս գետի հունով՝ լեռների պարագծով կար մոտ 10–12 կիլոմետր լայնությամբ նեղ անցում, հայտնի Հորադիզի միջանցքը: **Այս անցուղին ադրբեջանցիների բեկումնային ուժերը տանում էր դեպի լեռների միջև ընկած լայն և հարթ հովիտ, Գեյան տափաստան (Արաքսի միջին հովտի ձախափնյա մասը, որը նախկինում կոչվել է Գեհենի հարթավայր: Հարմար ենք գտնում նշված դաշտն անվանել Գիհոն՝ կապված Աստվածաշնչում Արաքս գետի անվանման հետ),** որը տեղակայման և հարվածելու ընդարձակ հարթակ էր դեպի հյուսիս, դեպի Հայաստանից ԼՂՀ մատակարարող հիմնական հաղորդակցություն՝ Մ-12 Գորիս - Լաչին – Ստեփանակերտ ճանապարհը: Սա հնարավորություն էր, փոխաբերական իմաստով, ետևի դռնից ներս մտնելու և հայկական կողմին դժվարին դրության մեջ դնելու: Ադրբեջանցիները հասկանում էին, որ հյուսիսում և կենտրոնում հարվածները հեռանկար չունեին: Հյուսիսում՝ Թարթառ գետի նեղ ու փակուղային կիրճում՝ զորքերի լայնածավալ տեղակայումն անհնար էր: Բացի այդ, հայկական կողմն ականապատել էր Սարսանգի ջրամբարը, և այստեղ առաջ եկող զորքերն անխուսափելիորեն թակարդում կհայտնվեին: Կենտրոնում ԼՂՀ ՊԲ հիմնական ուժերն էին: Այստեղ էին գտնվում հայկական ուժերի հիմնական պահեստները: Կենտրոնական դիրքի վրա հարձակումը վերածվեց խաչաձև փոխհրաձգության, քանի որ տեղանքն այստեղ աստիճանավոր վերելք էր՝ պայտաձև հովտով: Ստացվում է, որ ԼՂՀ-ի վրա ադրբեջանական հարձակողական գործողությունը կարող էր բերել կամ շրջափակման՝ հյուսիսում և հարավում, կողային հարձակումների կիրառմամբ, կամ որպես հիմնական բեկում՝ հարավում: Արդյունքում, հարվածը հասցվեց հարավում: Ընդամենը 10–12 կիլոմետր լայնությամբ Հորադիզի միջանցքի նեղ հատվածում հայկական կողմն ուներ ընդամենը մեկ՝ 9-րդ մոտոհրաձգային գունդը, ադրբեջանական 2-րդ բանակային կորպուսի հիմնական ուժերի

դեմ, այսինքն՝ մեկ գունդ՝ ընդդեմ միայն առաջին էշելոնի երեք բրիգադների: Սակայն, չնայած դրան և տեխնիկական առավելությանը, ադրբեջանցիները բավականին դանդաղ հաղթահարեցին հայկական պաշտպանությունը՝ այսպես կոչված «Օհանյանի գիծը», որը շրջագծում է ԼՂՀ-ն: Հոկտեմբերի 4-ին՝ հարձակման ութերորդ օրը, այդքան ուժեր կիրառելով, ադրբեջանցիներն առաջացել էին ընդամենը յոթից ութ կիլոմետր: Սակայն շուտով «Օհանյանի գիծը» ճեղքվեց, և ադրբեջանցիները մտան օպերատիվ տարածք: Այստեղ պետք է մի դիտարկում անել: Հորադիզի շրջանում ադրբեջացիները կարողացան ճեղքման գնալ զինուժի և զինտեխնիկայի լրջագույն կորուստների գնով, սակայն լուծեցին շատ կարևոր խնդիր: Բոլորից շատ հարցեր առաջացնողը, այսպես կոչված «Լեղե-Թեփե օպերացիա», կամ «Քյանդ-Հորադիզ օպերացիան» է: Հոկտեմբերի 5-6-ը, հակառակորդի մի թևն արդեն Ջաբրայիլին էր մոտեցել, մյուս թևը Հադրութի Բանաձոր գյուղն էր վերցրել, երրորդ թևը գնում է դեպի Խոդաֆերին: Այս իրավիճակում, հայկական կողմը, տանկային բրիգադի և Ցորի մոտոհրաձգային բրիգադի ուժերով (ռեզերվներով հանդերձ), հոկտեմբերի 7-ին սկսում է օպերացիան: Հակառակորդը սկզբում ոչ մի դիմադրություն ցույց չի տվել, 3-4 ժամ չհասկանալով, թե ինչ խնդիր է լուծում հայկական կողմը: Իր հերթին՝ տանկային բրիգադի հրամանատարությունը, որը ճեղքում էր իրականացրել և գրեթե հասել իր խնդրի կատարմանը, հասկանալով, որ իր թիկունքը որևէ ձևով չի ապահովվել, պարտադրված, տեխնիկայի մի մասը թողել է, դուրս եկել: Այդ ընթացքում 60-70 հոգով հայկական կողմը Քյանդ-Հորադիզ գյուղի ներքևի բարձունքները պահել է մի ամբողջ օր, տվել 3 զոհ, և մինչև ամսի 8-ի երեկոյան օգնություն չստանալով, ստիպված լքել է դիրքերը: Օպերացիայի ընթացքում մոտոհրաձգային բրիգադի հրամանատարը վիրավորվում է, պարտականությունները դրվում են տեղակալի վրա, իսկ տեղակալը կատեգորիկ հրաժարվում է զորքերը շարժել, ավելին՝ 23 տանկից, որոնք պետք է հասնեին Ֆիզուլի, տեղ են հասնում 2 տանկ, 21-ը մնում է ճանապարհներին: Եվ երբ բերում են այդ տեխնիկան՝ վերանորոգելու, պարզվում է, որ տանկերից որևէ մեկը տեխնիկական խնդիր չունի: Այսինքն՝ օպերացիան, որպես այդպիսին, չի կայանում: Այս ամենի հետևանքով ճեղքվում է «Օհանյանի գիծը», և կոնվենցիոնալ պատերազմը, երբ գոյություն ուներ ռազմաճակատի գիծ, հարձակվող և պաշտպանվող կողմեր, դիրքեր, վերածվեց հիբրիդային պատերազմի: Կարելի է ենթադրել, որ սա թուրք խորհրդականների նախաձեռնությունն էր: Սա հնարավորություն տվեց մերձարաքսյան տափաստանային գոտում սփռել Սիրիայից բերված ահաբեկիչներին, հատուկ նշանակության ջոկատները, դիվերսիոն խմբերը, խաղի մեջ մտցնելով պրոքսի պարտիզանական պատերազմի կանոնները, ինչին հայկական կողմը պատրաստ չէր: Ադրբեջանցիները հարավում՝ 2-րդ կորպուսի բազայի վրա, տեղակայեցին մի ամբողջ համակցված բանակ, որը ներառում էր առնվազն յոթ կամ ութ փոքր հետևակի մարտական մեքենա, 4-րդ կորպուսի պահեստից բերված T-90S տանկային բրիգադ, հրետանու և այլ ստորաբաժանումներ: Գործելով որպես համակցված զինուժ՝ 2-րդ կորպուսն այստեղ տեղակայեց երկու կորպուսային խումբ՝ առաջ շարժվելով դեպի Հադրութ-Ֆիզուլի, և այնուհետև դեպի Մարտունի և Կարմիր շուկա, ինչպես նաև դեպի հայկական սահման՝ հետագայում թեքվելով դեպի հյուսիս՝ համապատասխանաբար դեպի Լաչին և Շուշի: Հայկական կողմը պարտվեց՝ առաջին հերթին ռազմավարական առումով, արդեն պատերազմի սկզբնական փուլում: Ադրբեջանցիները, տրանսպորտային ցանցի ավելի լավ վիճակի պատճառով, տեղակայման առումով պարզապես գերազանցեցին հայերին՝ ձեռք բերելով թվի և նախաձեռնողական անհրաժեշտ առավելություն: Հայկական կողմի հետագա քայլերը՝ այստեղ հարավում բեկում մտցնելու համար, հիշեցնում էին ջրի դույլերով անտառային հրդեհը մարելու անօգնական փորձեր: Մինչդեռ, նույնիսկ հաշվի առնելով առկա ռեսուրսները, հայկական կողմը կարող էր գերազանցել ադրբեջանցիներին և երկարաձգել պատերազմը՝ ստեղծելով խիտ շերտավոր պաշտպանություն: Դրա համար բառացիորեն անհրաժեշտ էր երկու-երեք օրվա ընթացքում մի քանի տասնյակ հազար մարդկանց տեղափոխել և ճիշտ կազմակերպել օպերատիվ գործողությունները: Ըստ պաշտպանական ստանդարտների՝ 40-50 կիլոմետր պետք է պահի մեկ դիվիզիան: ԼՂՀ-ից առաջին գծում պահանջվում էր ընդամենը չորսից հինգ դիվիզիա (40-50 հազար մարդ), չնայած այն հանգամանքին, որ պատերազմի սկզբում երեք դիվիզիա (30 հազար մարդ) արդեն գտնվում էր մարտական գործողությունների թատրերաբեմում: Լրացուցիչ 40-50 հազար մարդու տեղափոխումը դժվարացավ ԼՂՀ-ի և Հայաստանի միջև տրանսպորտային վատ կապի, և օդից անընդհատ թիրախավորման պատճառով: Այստեղ հայերը կարող էին կիրառել մի տարբերակ, որն այսօր էլ ակտիվորեն օգտագործվում է նույն ամերիկյան զինված ուժերի կողմից. զորքերը տեղափոխվում են թեթև միջոցներով այն վայրեր, որտեղ պահվում էին զենքն ու զինտեխնիկան, ինչը հնարավորություն էր տալիս տեղում զինելու մոտեցող ուժերը: Արցախի դեպքում մոտ հազար ավտոբուս և ծածկված բեռնատար կպահանջվեր 40-50 հազար հայ ժամկետային զինծառայողների «թեթև» տեղափոխման համար ԼՂՀ իրենց տեղակայման վայրերը, ինչը միանգամայն իրագործելի խնդիր էր: Ճիշտ է, պատերազմի բռնկման հետ մեկտեղ, եթե այդ համալրումները չհասնեին զորքերին, նրանք կդառնային երթի ընթացքում հեշտ թիրախ՝ մեծ կորուստներով: Տեղակայման նման մոդելը պահանջում էր համապատասխան կազմակերպվածություն, ենթակառուցվածքներ և ուսուցում, ինչը հայկական կողմը չուներ (ըստ երևույթին, նույնիսկ պատրաստ

չէր դրան): Ցավոք հայկական կողմը ԼՂՀ-ում առավելագույն հնարավոր ուժեր չի տեղակայել: Ջինադադարի կնքումից և ռազմական գործողությունների ավարտից հետո Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել էր, որ 20-30 հազար հայ զինվոր կարող էր շրջափակվել Շուշիից արևելք և հարավ-արևելք ընկած հատվածում: Հյուսիսում, ինչպես նաև Շուշիից արևմուտք գտնվող Լաչինի, Կուբաթլիի և, հնարավոր է, Զանգելանի ուղղություններով, հայկական կողմը պատերազմի ավարտին մոտ 50 հազարանոց ուժ ուներ:

Մինչդեռ Հայաստանում տեղակայված երկու՝ 1-ին (օպերատիվ ռեզերվ) և 2-րդ բանակային կորպուսները Գորիսում և Խաչաղբյուրում, միայն մասամբ են օգնության հասել ԼՂՀ-ում կռվող իրենց հայրենակիցներին: Իսկ սրանց թիվը մինչև 40-50 հազար զինվոր է: **Ըստ ամենայնի, սա Հայաստանի ղեկավարության քաղաքական որոշումն էր:** Բացի այդ, 1-ին և 2-րդ բանակային կորպուսների ուղիղ մուտքը Հայաստանից հոկտեմբերի 20-ից հետո, երբ ադրբեջանական կողմը հասավ սահման, դժվար էր, քանի որ նրանք գտնվում էին ադրբեջանցիների անօդաչու թռչող սարքերից և հրետանուց տուժած գոտում: Հաշվարկված է, որ նման պայմաններում 40-50 հազար հայ զինվորականների՝ այսինքն՝ Հայաստանի զինված ուժերի երկու բանակային կորպուսների տեղափոխումը (գոյություն ունեցող լեռնային ճանապարհներով անցումները) կտևեին մոտ երկու շաբաթ՝ հաշվի առնելով այս ճանապարհների երկայնքով տեղափոխման հայտնի տեմպերը (օրական երեքից չորս հազար մարդ և մի քանի հարյուր ավտոտեխնիկա): Այս երկու շաբաթվա ընթացքում ադրբեջանցիները կարող էին լուրջ վնաս հասցնել եկող հայկական ստորաբաժանումներին, ուստի դրանք պետք է տեղակայվեին կամ նախօրոք (մինչև ադրբեջանցիների սահմանը հասնելը ԼՂՀ հարավում), կամ Մ-12-ի ի անվտանգ երթուղիներով (կենտրոնում), կամ Մ-11 (հյուսիսում) մայրուղու քողարկման բազմաթիվ միջոցառումների պահպանմամբ:

Անգամ Շուշիի անկման և ԼՂՀ-ն Հայաստանի հետ կապող Մ-12 Գորիս-Լաչին-Ստեփանակերտ մայրուղու հիմնական տրանսպորտային հաղորդակցության խզման պայմաններում ԼՂՀ դիմադրության ռեսուրսները հեռու էին սպառվելուց: Ադրբեջանցիները լեռների միջով իրենց անցումներով, շրջանցելով Շուշի տանող գլխավոր ճանապարհները, հայտնվել էին հյուծվածության փուլում և հայերի անընդհատ հարվածների սպառնալիքի տակ: Հայկական կողմը դեռ վերահսկում էր Կարմիր շուկա տանող ճանապարհը, իսկ Լաչին տանող ճանապարհին խփում էին տարբեր միջոցներով: Եթե հայերի վերահսկողության տակ գտնվող ԼՂՀ տարածքում լինեին բավարար պաշարներ, կարելի էր պատերազմը շարունակել մեկուսացված, ինչպես պաշարված ընդարձակ ամրացված տարածքում (օրինակ՝ Պորտ Արթուրը 1904 թ.): **Հետևաբար, ինչպես արդեն նշվեց, հակամարտության հապճեպ հանգուցալուծումը դարձավ զուտ քաղաքական որոշում:** Նշենք, որ իրավիճակը սրվում էր նաև Իրանի անհասկանալի դիրքորոշման պատճառով, որը հակամարտության քառասուն օրվա ընթացքում հարյուր հազարանոց բանակ տեղափոխեց Արաքսի ափ և 2020 թվականի նոյեմբերի սկզբին այդ հատվածում ուներ առնվազն չորս դիվիզիա, ութ առանձին բրիգադ, ՀՕՊ ստորաբաժանումներ և մի շարք այլ կազմավորումներ (ընդհանուր՝ մինչև 120 -140 հազար սվին՝ երկու էշելոնում): Այդ ուժերի մեծ մասը կենտրոնացած է եղել Իրան-ԼՂՀ սահմանի հարյուր կիլոմետրանոց նեղ հատվածում՝ ադրբեջանական 2-րդ կորպուսի առաջխաղացող հարվածային խմբի հենց թիկունքում և թևերում: **Եթե այդ ուժերը հակամարտության մեջ մտնեին ադրբեջանական զորքերի դեմ, և հաշվի առնելով Հայաստանի հետ ԼՂՀ սահմանին գտնվող հայկական երկու բանակային կորպուսների ներուժը, որոնք նույնպես կարող էին փորձել անցնել լեռները, ադրբեջանական 2-րդ կորպուսի համար հարավային ճակատում իրավիճակը կդառնար աղետալի: Ռազմավարական առումով այստեղ 60–70 հազար ադրբեջանցի զինվորներ հայտնվել են երեք կողմից շրջապատված՝ հյուսիսից, արևմուտքից համակենտրոն հարձակումների տակ:** Ի վերջո, հաջողությունը արցախյան նոր պատերազմում ձեռք բերվեց ոչ միայն տեխնիկական գերազանցության և Ադրբեջանի գլխավոր շտաբի ոչ ստանդարտ որոշումների շնորհիվ, այլ, ինչպես 1991 թվականին Պարսից ծոցի պատերազմի ժամանակ (օրինակը բերված է մի շարք պայմանների նմանության պատճառով), հաջողությունը ձեռք է բերվել նաև թվային առավելությամբ: Եթե ԼՂՀ-ում պատերազմի ավարտին հայերն ունեին մոտավորապես մինչև 50 հազար սվին, ապա ադրբեջանցիներն այդ ժամանակ դրա դեմ կենտրոնացրել էին մոտ 150 հազար զինվորական՝ երեք անգամ ավելի: Ինչպես 1991 թվականին ԱՄՆ-ի գլխավորած երկրների ավելի քան մեկ միլիոնանոց կոալիցիան գործեց Սադամ Հուսեյնի 300 հազար զինվորների դեմ: Պատերազմի 44 օրերի ընթացքում հայերը ԼՂՀ տեղափոխեցին

ընդամենը 50 հազար մարդ, (որոնք իրականում անհրաժեշտ էին առաջին երկու-երեք օրը)։ Նրանցից 10–15 հազարը Հայաստանի կանոնավոր բանակի զինվորներ էին, մնացածը՝ կամավորներ և պահեստազորայիններ։ Մինչդեռ ճանապարհների առավելագույն հնարավորությունները՝ հանած մատակարարման բեռը, հնարավորություն են տվել տեղափոխել օրական երեքից չորս հազար մարդ։ Հայաստանից պատշաճ աջակցություն չստացած ԼՂՀ պաշտպանությունը բնականաբար ընկավ։ Արցախի օպերացիաների ռազմավարական և գործառնական մակարդակների օրինակները ցույց է տալիս «Բոյդի ցիկլերի» հայեցակարգը, ինչպես նաև «Բոյդ օղակը»՝ մեր ժամանակների ամերիկացի ռազմական տեսաբանի դիրքորոշումը։ Այս հայեցակարգն արտահայտվում է օղակով և շրջանով՝ դիտարկում - հայտնաբերում - որոշում - գործողություն։ Այս հաջորդականությամբ Ադրբեջանն իր տեխնիկական գերազանցությամբ առաջ էր անցել հայկական կողմից։ Համապատասխանաբար, օպերատիվ մակարդակում ադրբեջանցիներին թակարդներ գցելու հայերի փորձերը՝ թողնել առաջ և հարվածել թևերից, և, որպես հետևանք, շրջապատել և պարտվել, ինչպես հոկտեմբերի 10-11-ի Ջրականի (Ջաբրայիլ) ճակատամարտում, կամ հոկտեմբերի 20-ի Կովսականի (Զանգելան) ճակատամարտում, միայն հանգեցրել է պարտությունների և մեծ կորուստների, տարածքների կորստի և ստորաբաժանումների մարտունակության անկման, բայց չի դանդաղեցրել հակառակորդի առաջխաղացման տեմպերը։ Ընդհակառակը, դրանք միայն ավելացել են։ Տափաստանի հարթ տեղանքում հայերը պետք է իսպառ հրաժարվեին այս գործելաոճից։ Ջրականի (Ջաբրայիլ) ճակատամարտում հայերը կրեցին մեծ և մեծ մասամբ անհարկի կորուստներ, որոնք, պարզվեց, կրիտիկական էին ներգրավված ուժերի մասշտաբի առումով՝ երկու օրվա մարտերի ընթացքում երկուերեք հազար սպանված և վիրավոր։ Ուշագրավ է Ադրբեջանի գլխավոր շտաբի գործունեությունը, որը, հնարավոր է, իրականացվել է թուրք գործընկերների անմիջական հսկողության և խորհրդատվության ներքո։ Ի տարբերություն իրենց հայ հակառակորդների բավականին կարծրատիպային ու կանխատեսելի գործողությունների, ադրբեջանցիները գործել են ճկուն և ոչ ավանդական։ Օրինակ՝ Հորադիզի միջանցքով ճեղքման դեպքում դրան հաջորդեց ոչ թե առաջխաղացումը դեպի Գեյան տափաստանի խորքերը, այլ, առաջին հերթին, բեկման «վիզը» ընդարձակելու գործողություններ դեպի Հադրութ և Վարադա (Ֆիզուլի), թևից՝ բեկման հենակետի տակ, խուսափելով հայկական հակագրոհներից։ Հայկական կողմի ամրացված տարածքների դեմ պայքարելու համար ադրբեջանցիները հարձակվել են ոչ թե անմիջականորեն, այլ նախ մարտի մեջ են մտցրել թեթև լեռնային հետևակի շարժական խմբերը և հետո միայն վճռական գործողությունների դիմել։ Շուշին նման մտավոր

գործունեության ապոթեոզն է։ Դժվար տեղանքով անցում դեպի հարձակման կենտրոնական ամրացված թիրախ՝ առանց համապատասխան օդային աջակցության, մի շարք դիվերսիոն հարձակումներով Լաչին-Շուշի Մ-12 մայրուղու վրա, որին հաջորդում է ընդհանուր գրոհը և գրավվում է հենց Շուշին՝ խիստ ամրացված և անառիկ դիրքը։ Լեռնային պատերազմի պայմաններում ծանր տեխնիկան անխուսափելիորեն կապված էր ճանապարհային հաղորդակցություններին ու զանազան լեռնանցքներին՝ կիրճերին ու ձորերին։ Այս պայմաններում գործողությունների թատերաբեմում «ծանր» ստորաբաժանումներով կողմերի մանևրը եղավ սահմանափակ և կանխատեսելի, և այդ հաղորդակցությունների թողունակությունը՝ սահմանափակ։ Նման իրավիճակում անակնկալ գրոհներ և հակագրոհներ իրականացնելու «ծանր» ստորաբաժանումների կարողությունն անխուսափելիորեն բախվեց այդ սահմանափակումներին։ Սա հատկապես կարևոր դարձավ հայկական կողմի համար, որը տեխնիկապես վատ վիճակում էր և ստիպված էր հակազդման ասիմետրիկ մեթոդներ փնտրել։ Մասնավորապես, հայկական շարասյուներն ուշանում էին տեղակայման գծեր հասնելու ժամանակ, ինչի հետևանքով ադրբեջանցիները բացահայտում էին հայերի հակահարձակման մտադրությունը, հաճախ պատրաստ լինելով հակաքայլերի։ Բացի այդ, որպես հետևանք զորքերը խոցելի են դարձել նեղ լեռնանցքներում և հայտնվել կրակի տակ, ինչպես նաև դարանակալվել։ Երբ անհնար էր ծանր զինատեսակներով զորքերի մեծ զանգվածներ օգտագործել, արդիական դարձավ թեթև լեռնային հետևակի մարտավարությունը շարժական զենքերով, հատուկ պատրաստվածությամբ և տեխնիկայով։ Անհրաժեշտ էին դժվար տեղանքում տեղաշարժվելու և դիրքեր գրավելու ունակ ստորաբաժանումներ։ Սա բարդ, խորդուբորդ տեղանքում շարժական խմբերի ներթափանցման մարտավարությունն է՝ չհիմնվելով փաստորեն գոյություն չունեցող տրանսպորտային համակարգի վրա։ Այսպիսի մարտավարություն օգտագործվել է չինական 14-րդ բանակի և չինական հատուկ նշանակության ուժերի կողմից 2015 թվականին Բիրմայում

(Մյանմա), Կոկանգի պատերազմի ժամանակ: Սա փայլուն կիրառվել է անօրինական զինված խմբավորումների կողմից Չեչնիայում 1994–1996 և 1999–2005 թվականներին, ինչպես նաև Սիրիայում: Ըստ երևույթին, հենց այդ նպատակով մի քանի հազար համապատասխան պատրաստվածություն ունեցող սիրիացի մարտիկներ բերվեցին և թուրքերի կողմից օգտագործվեցին Արցախում, իսկ ադրբեջանցիներն իրենք օգտագործեցին իրենց բոլոր հնարավոր հատուկ ջոկատները և ողջ հասանելի լեռնային հետևակը: Անգամ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունից դուրս է բերվել հատուկ նշանակության գումարտակը: Լեռնային հետևակը զինված էր թեթև հրազենով, թեթև ականանետներով, կարող էր գրավել լեռների լանջերն ու գագաթները և, շարժվելով լեռնաշղթաների երկայնքով, ճեղքել թշնամու պաշտպանությունը, դժվարին ճանապարհներով հասնել անառիկ վայրեր, մուտք գործել կապի ուղիներ, կատարել շրջանցումներ և դարանակալումներ՝ կարգավորելով հրետանու, անօդաչու թռչող սարքերի, հրթիռային համակարգերի կրակը, առաջ շարժվել դեպի թշնամու գծերի հետևում գտնվող կարևոր հարձակման թիրախներ ինչը, ըստ էության, տեղի է ունեցել 2020 թ. նոյեմբերի 6–10-ը Շուշիի մոտ: Ամրացված տարածքների և հսկայածավալ շարասյուների վրա հենվելու հայկական կողմի մարտավարությունն իրեն չարդարացրեց: Անհրաժեշտ էր ամենատարբեր հատվածներում տեղաբաշխել բավականաչափ շարժական արագ արձագանքման խմբեր և անցնել պայքարի պարտիզանական ձևերի, ինչը չարվեց: Նախ՝ պատերազմի ընթացքում գործնականում դիվերսիոն գործողություններ չեն իրականացվել (հայկական դիվերսիոն հետախուզական խմբերը գրեթե բացակայում էին), չնայած տարածքի մասին բոլոր գիտելիքներին, և նույնիսկ Հադրութի և Ֆիզուլիի մոտ գտնվող լեռնային լանդշաֆտի նպաստավոր պայմաններում:

Մարտավարական մակարդակում ադրբեջանական կողմի գործողությունների հաջողությունը, բացի թեթև լեռնային հետևակի կիրառումից, որոշվել է նաև անօդաչու թռչող սարքերի և ինքնագնաց հրետանու համակցությամբ: Փոխազդեցությունն ապահովվում էր արբանյակային նավիգացիայի միջոցով (ադրբեջանցիները Բաքվում ստեղծեցին տիեզերական կենտրոն և 2013 թվականին ֆրանսիացիների աջակցությամբ արձակեցին իրենց առաջին տիեզերական արբանյակը): Միևնույն ժամանակ, գրոհային անօդաչու թռչող սարքերի կիրառման մասշտաբը մնաց համեմատաբար փոքր: Ուղղումը և թիրախային նշանակումը ապահովվել են ինչպես արբանյակային նավիգացիայի, այնպես էլ դիվերսիոն և հետախուզական խմբերի (DRGS) կողմից, որոնք իսկապես բեկում մտցրին պատերազմում: Ժամանակակից և զանգվածային անօդաչու ինքնաթիռների անտեսումը պատերազմի ընթացքում հայկական կողմի ամենանշանակալի ձախողումն էր: Փաստորեն, հակառակորդը գերակայում էր օդում և ուներ մարտադաշտի իրական պատկերը, մինչդեռ հայկական կողմը հայտնվեց «պատերազմի մշուշի» մեջ: Սա կապված էր մարտավարական, օպերատիվ և ռազմավարական մակարդակներում պաշտպանների անհաջողությունների հետ՝ ռազմական արվեստի բոլոր մակարդակներում: Հայերի մոտ անօդաչու ինքնաթիռներ սկսեցին հայտնվել միայն հակամարտության ավարտին մոտ, և կիրառվեցին հնացած մոդելներ: Օդում ադրբեջանական անօդաչու թռչող սարքերի գերակայության պատճառը նաև հակաօդային պաշտպանության պարտությունն էր՝ պատերազմի սկզբում առաջնահերթ թիրախ դարձան հայկական հակաօդային պաշտպանության համակարգերը: Հետագայում առաջացած անհավասարակշռությունը հնարավոր չեղավ շտկել: Բացի այդ, հայկական հակաօդային պաշտպանության համակարգը լավագույնս չի տեղակայվել ու օգտագործվել, ինչի հետևանքով այն ունեցել է ցածր արդյունավետություն: Ադրբեջանի անօդաչու թռչող սարքերը, փաստորեն, գերիշխում էին երկնքում հակամարտության մեծ մասում, մինչդեռ պաշտոնական Բաքուն գրեթե չէր օգտագործում կամ սահմանափակ էր օգտագործում իր օդանավերը (ինքնաթիռներ և ուղղաթիռներ): Հայկական կողմն օգտագործել է բանակային ավիացիան, ըստ երևույթին, նաև որպես կալանիչներ, նույն Սու-25-ը, սակայն միջոցների սղության պատճառով դա ստեղծված իրավիճակից ելք չի ապահովել: Բացի այդ, որպես քողարկում օգտագործվել են էլեկտրոնային պատերազմը (EW), վատ եղանակը, անտառային հրդեհների ծուխը (կողմերը միմյանց մեղադրում էին դրանք հրկիզելու մեջ): Սակայն օդային սպառնալիքին հակազդելու հաջողությունը կարող էր ապահովվել միայն այդ միջոցների համակողմանի, համակարգված և զանգվածային կիրառմամբ, ինչպես նաև սեփական անօդաչու ինքնաթիռների առկայությամբ:

Ադրբեջանի կողմից օդաչուների ավիացիայի թույլ և սահմանափակ օգտագործումը բացատրվում է իր օդուժի փոքր թվի համատեքստում թանկարժեք մոդելների և օդաչուների կորստի ռիսկերը նվազագույնի հասցնելու ցանկությամբ: Ընտրությունը կատարվել է հոգուտ ռոբոտային, հեռակառավարվող

սարքավորումների (որոնց կորուստները շատ ավելի նվազ կրիտիկական էին)։ Հատկանշական է նաև, որ ինքնագնաց հրետանու աշխատանքում ադրբեջանցիներն առանձնացրել են չեխական «Դանա» ինքնագնացները (թեև կիրառվել են նաև ռուսական «Մստա-Ս», «Պիոններ» և այլն)։ Ադրբեջանցիները 36 ինքնագնաց հաուբից միավորվեցին առանձին հրետանային բրիգադի մեջ, որը, հատված-հատված շարժվելով հարավային ճակատում, տվեց համապատասխան արդյունք։ Հարկ է նշել, որ ադրբեջանցիները երբեք չեն գնել 155 մմ տրամաչափի Firtina ինքնագնաց հրետանային համակարգերն իրենց գլխավոր դաշնակից Թուրքիայից։ Կամ Բաքուն խուսափում էր հրետանային այդ տրամաչափից, ինչը մեծ խնդիր կդառնար մատակարարների համար, կամ էլ թուրքերն իրենք որոշեցին չփոխանցել այդ տեսակի զենքը։ Առանցքային է ապագայի զինված հակամարտություններում հրետանու՝ որպես հաղթանակի հասնելու առանցքային միջոց օգտագործելու հարցը, որը կարող է մարտերում բոլոր կորուստների մինչև 80-90%-ը հասցնել։ Օգտվելով 2020 թվականի Ղարաբաղյան պատերազմի օրինակից՝ դա կարող է նշանակել աստիճանական հեռացում քարշակվող հրետանուց հոգուտ ինքնագնաց, խոշոր տրամաչափի (150–210 մմ), որն օգտագործվում է մեծ հեռավորությունից և հաճախ փոխում իր դիրքերը, այսինքն՝ գործելով որքան հնարավոր է հակառակորդի զինատեսակների շառավղից դուրս։ Քաղաքային պայմաններում հայկական կողմը չկարողացավ երկարատև մարտերի մեջ մտնել։ Հարկ է, սակայն, նշել, որ ԼՂՀ-ում շատ խոշոր քաղաքներ չկան։ Ամենուր հիմքը ցածրահարկ շենքերն են՝ առանց մեծ բարձրահարկ շենքերի ու համալիրների, որոնք կարող են քաղաքային բնակավայրերում որպես պաշտպանական կենտրոններ ծառայել։ Այդուհանդերձ, հայերն առանց էական դիմադրության հանձնեցին իրենց մի շարք խոշոր բնակավայրեր (Հադրութ, Կովսական (Ջանգելան), ինչը որոշակի կասկածներ է հարուցում տարածքում համարժեք պաշտպանություն կազմակերպելու հնարավորության վերաբերյալ։ Տեսականորեն, պաշտպանության պատշաճ կազմակերպման դեպքում հայերը կարող էին բավական երկար ժամանակ կանգնել Ստեփանակերտում։ Օրինակը՝ Սիրիայի Մանբիջ գյուղում քրդերի հաջող ու երկարատև պաշտպանությունն է թուրքական բանակից։ Հայերն անտեսել են նաև համապատասխան ամրությունները գետնի վրա։ Չնայած այն հանգամանքին, որ Իրաքում և Աֆղանստանում ամերիկյան լեռնային թաքստոցների, Իսրայելի դեմ Լիբանանում Հեզբոլլահի և այլնի դեմ գործողությունները վերլուծելու հարուստ փորձ կար, այդ փորձը ոչ մի կերպ հաշվի չի առնվել Հայաստանում։ Պարզվել է, որ առաջապահ դիրքերը վատ և անխնամ են կահավորված, կային բազմաթիվ խոցելի բաց դիրքեր, ինչպես նաև պատշաճ կերպով չի իրականացվել դիրքերին մոտենալու հարմարավետության խնդիրը։ Հաշվի առնելով Արցախում վերջին պատերազմը, ինչպես նաև Իսրայելի արշավանքները Լիբանանում՝ արդիական դարձավ ամրացման հետևյալ զարգացումը, որը կարող է դանդաղեցնել կամ կասեցնել զորքերի տեղաշարժը գետնի վրա։ Ամրացումները պետք է նմանվեն փոխկապակցված ստորգետնյա թունելների համակարգի՝ մակերեսին հասնելու և քողարկված փակ դիրքերից կրակ կազմակերպելու ունակությամբ։ Պահանջվում էին պաշտպանության պահեստային գծեր։ Ձեբրայիլի տափաստանում, հայկական ուժերի թիկունքում, չնայած մի շարք ամպագորգոռ հայտարարություններին ու նկարահանումներին, թվում էր, թե դրանք ընդհանրապես գոյություն չունեն։ Դիրքերի նման սարքավորումն ինքնին համադարման չէ։ Ամերիկացիներն ակտիվորեն օգտագործում էին բունկեր-պայթեցնող ռումբերը հեռահար ռազմավարական ինքնաթիռներից, որոնք, բնականաբար, Ադրբեջանը չուներ։ Բացի այդ, հնարավոր է պայքարել ստորգետնյա ապաստարանների համակարգի դեմ՝ դրանք պայթեցնելով հեղուկ պայթուցիկ նյութերով կամ ենթարկելով թունավոր գազերի։ Այնուամենայնիվ, պաշտպանության այս ձևաչափն իրեն լավ դրսևորեց, օրինակ, 2006 թվականին Լիբանանում, երբ լիբանանյան Հեզբոլլահը բավականին հաջող դիմադրեց բարձր տեխնոլոգիական հագեցվածությամբ իսրայելական ուժերին։ Ճշգրիտ զենքի կիրառման թերությունը դրա արագ սպառումն է։ Դա տեղի է ունեցել Իրաքում և Լիբիայում՝ արևմտյան երկրների արշավների ժամանակ։ Այստեղ հարց է առաջանում ռազմարդյունաբերական համալիրի համապատասխան արտադրական հզորությունների ապահովման, արտահանման փոխարինման, գնի և զանգվածային արտադրության հարաբերակցության մասին։ Նույնը վերաբերում է համապատասխան պատրաստված անձնակազմին՝ հատուկ նշանակության ուժերին, անօդաչու թռչող սարքերի օպերատորներին և այլոց, որոնց կորուստը որպես սպառման նյութ, վնասն անհապաղ փոխարինելու անկարողությունը, կարող է հանգեցնել հակառակորդի նկատմամբ մի շարք տեխնիկական առավելություններից զրկմանը։

2020 թվականի պատերազմը Արցախում ցույց տվեց տանկերի դերի նվազման նախկին միտումը և անօդաչու թռչող սարքերի, ՀՏԳՄ-ների և հրետանու աճող կարևորությունը։ Տանկերը, փաստորեն, վերածվեցին հետևակի աջակցության մեքենաների, այսինքն՝ վերադարձան Առաջին համաշխարհային պատերազմից հետո երկրների մեծ մասում իրենց վերապահված դերին։ Տանկային ստորաբաժանումների օգտագործումը, դրանց զանգվածային համակենտրոնացումը պարզվեց, որ ամբողջովին անհիմն է և հանգեցնում է միայն կորուստների ավելացման։ Վերջին անգամ մեծ մեքենայացված և տանկային զանգվածների օգտագործումը որպես բեկման միջոց արդյունավետ է եղել 2003 թվականին՝ ամերիկացիների Իրաք ներխուժման ժամանակ։ Անհրաժեշտ է, սակայն, նշել բարձրորակ վեց

գոտիանոց մայրուղիների, հարթ տեղանքի առկայությունը, և Սադամի զորքերի կողմից պատշաճ դիմադրության բացակայությունը: Բացի այդ, ամերիկացիները մեծապես գերազանցում էին իրաքցիներին՝ մի շարք տեխնիկական պարամետրերով: Առնվազն երկու սերունդ առաջ էին: Իսկ իրաքցիները հետ քաշեցին իրենց զորքերը դաշտ և մեծապես ցրեցին նրանց՝ չստեղծելով պաշտպանական կենտրոններ և բավարար օպերատիվ խտություններ: Այսպիսով, զգալի տանկային ուժերի օգտագործումը խորը գործողությունների համար այսօր հնարավոր է, բայց համապատասխան տեղանքում, բավականաչափ զարգացած տրանսպորտային ցանցով, և ենթակա է ճնշող որակական և քանակական գերազանցության հակառակորդի նկատմամբ, որը, սակայն, պետք է զրկված լինի բավարար հակազդեցության հնարավորությունից: Օպտիմալ չէր նաև հեռահար և հզոր հրթիռների և համազարկային կրակի համակարգերի կիրառումը: Մասնավորապես, դա ապացուցեց ԼՂՀ ՊԲ 41-րդ հատուկ հրետանային գնդից՝ Սմերչ համազարկային կրակի հրետանային համակարգի կիրառումը, որը մինչ պատերազմը տեղակայված էր Շուշիի տարածքում: Ադրբեջանական Գյանջա, Տերտեր և այլ քաղաքների վրա հրթիռակոծություններն ավելի շատ նման էին հուսահատության ժեստերի, գործողությունների ի պատասխան՝ Ստեփանակերտում նման կրակի համար: Իրերի այս դրությունը, ըստ երևույթին, պայմանավորված է հայկական կողմում թիրախային նշանակության բացակայությամբ, ինչը կապված էր երկնքում թշնամու գերազանցության և «պատերազմի մշուշում» գործելու անհրաժեշտության հետ: Բացի այդ, հայկական կողմին ակնհայտորեն բացակայում էին բարձր ճշգրտությամբ և ցածր շրջանաձև հավանականության շեղումով օպերատիվ-մարտավարական հրթիռային համակարգերը, ուստի նրանք, ի թիվս այլ բաների, օգտագործում էին հին «Էլբրուս» հրթիռներ (ըստ արևմտյան դասակարգման «Սկադ») բարձր շրջանաձև հավանական շեղումով: Պետք է ուշադրություն դարձնել նաև օպերացիայի տեղեկատվական աջակցության հարցում ադրբեջանական կողմի բավականին մանրակրկիտ մոտեցմանը: Փաստորեն, զորքերի տեղակայումը գրեթե աննկատ մնաց լրատվամիջոցների կողմից, և հարձակումը կատարվեց հանկարծակի: Սա էապես տարբերվում էր նույնիսկ 2016 թվականի իրավիճակից, երբ ադրբեջանական բանակի շարժվող շարասյուների կադրերն անմիջապես հայտնվեցին համացանցում, և որոշ ռեսուրսներում քննարկվում էին ներգրավված ստորաբաժանումների թվերն ու հանդերձանքը: Մարտական գործողությունների առաջին օրերին ադրբեջանցիների կողմից տեղեկատվության արտահոսք զանգվածային լրատվության միջոցներ գործնականում չի եղել, իսկ հետո, երբ հակամարտությունը «տեղեկատվական թափ ստացավ», քարոզչական դաշտում ադրբեջանական կողմի աշխատանքը շատ ավելի լայն տարածում գտավ և արդյունավետ էր, քան հայկական կողմինը: Սա վկայում էր զգալի և երկարատև նախապատրաստական աշխատանքի մասին, որը նախորդել էր բուն զինված հակամարտությանը: Եվ վերջապես: Պատահական չէր Էրդողանի հայտարարությունը, թե «ինչպես մենք մտանք Ղարաբաղ ու Լիբիա, նույն կերպ կարող ենք մտնել Իսրայել: Չկա պատճառ, թե ինչու մենք չպետք է դա անենք»: Բոլոր լուրջ հետազոտողները պնդում են, որ թուրք հրահանգիչների խումբը՝ թուրքական ցամաքային զորքերի օպերատիվ վարչության պետ, գեներալ-մայոր Բախտիյար Էրսայի գլխավորությամբ, անմիջականորեն ներգրավված է եղել Արցախի դեմ ռազմական գործողությունների կազմակերպման մեջ: Էրսայը գտնվել է Բաքվում: Ադրբեջանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Նաջմեդդին Սադիգովի պաշտոնանկությունից հետո նա անձամբ է վերահսկել Ադրբեջանի բանակի գլխավոր շտաբը՝ Արցախի դեմ գործողության ժամանակ: Նա Թուրքիայի բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարությանը ամենժամյա ռեժիմով զեկուցել է գործողության ընթացքի մասին: Արցախում գործողության պլանավորմանն ու իրականացմանը մասնակցել է նաև թուրքական ցամաքային զորքերի Արևմտյան Հայաստանի Երզնկա (Արևելյան Անատոլիայի Երզնջան) շրջանում տեղակայված 3-րդ դաշտային բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Շերեֆ Օնգայը: Նա Ադրբեջան է եկել 2020 թվականի սեպտեմբերին, իսկ մինչ այդ՝ ամռանը: Օնգայը և մի քանի այլ թուրք գեներալներ ծրագրում են թուրք-ադրբեջանական համատեղ հարձակողական գործողություններ: Գեներալ Էրսայը փակ և ոչ հրապարակային գործիչ է: Մինչ այժմ նրա մասին ռուսական լրատվամիջոցներում հիշատակում չկա: Անգլիալեզու լրատվամիջոցներում նույնպես հազվադեպ է նշվել նրա մասին: Էրսայի մասին թուրքական մամուլում ևս ընդամենը մի քանի հոդված կա: Գեներալի պատմությունն առավել ամբողջական կերպով պատմել է 2016 թվականի օգոստոսին Hürriyet (Ազատություն) թերթը: 2003 թվականին հետախույզ Էրսայը մասնակցել է վարչապետ Էրդողանի դեմ ռազմական դավադրության փորձին (ռազմական դավադրությունը կոչվում էր «Մուրճ» օպերացիա): Ազատազրկման ժամկետի փոխարեն ստացել է բրիգադի գեներալի կոչում և տեղափոխվել «Քրդական ճակատ», գլխավորել է 2-րդ Կոմանդո բրիգադը, որն ակտիվորեն մասնակցել է Քրդստանի բանվորական կուսակցության (PKK) մարտական կազմավորումների դեմ ռազմական գործողություններին, և համարվում էր «հակապարտիզանական պատերազմի» լավագույն մասնագետներից մեկը: Մասնակցել է Լիբիայում իրականացվող գործողություններին: Նա մասնավորապես պատասխանատու էր Մուամար Քադաֆիի ռեժիմի տապալումից հետո երկրից Թուրքիայի քաղաքացիների տարհանման համար: Մասնակցել է Նորվեգիայի Ստավանգերի ՆԱՏՕ-ի համատեղ պատերազմական կենտրոնում վե-

ռապատրաստման սեմինարների: 2019 թվականի օգոստոսին Haber մեդիա հոլդինգը հայտնել էր, որ Թուրքիայի բարձրագույն ռազմական խորհուրդը (Yüksek Askeri Sura, YAS) Էրսային շնորհել է գեներալ-մայորի կոչում: Ադրբեջանական բանակի մյուս թուրք ղեկավարի՝ թուրքական բանակի գեներալ-լեյտենանտ Շերեֆ Օնգայի մասին հանրային տեղեկատվությունը շատ սակավ է: 1982 թվականին ավարտել է Անկարայի ռազմական ակադեմիան և ծառայել ցամաքային զորքերի տարբեր ստորաբաժանումներում: 2014 թվականին նշանակվել է 9-րդ բանակային կորպուսի հրամանատար: Որոշ ժամանակ եղել է Թուզլայի հետևակային դպրոցի ղեկավարը: Ադրբեջանում թուրք գեներալների աշխատանքն ապահովում են մոտ 200 ռազմական խորհրդականներ: Նրանք առաջնագծում չեն եղել, այլ զբաղվել են կազմակերպչական ու կադրային աշխատանքով: Թուրք մասնագետների կարիքների համար արբանյակային կապի երկու հատուկ կայան է տեղակայվել Բաքվում և Գաբալայի ռազմական օդանավակայանի տարածքում: Ադրբեջանցի զինվորականներին արգելված է եղել օգտվել այդ կայաններից: Ադրբեջանցի զինվորականներին նաև հանձնարարվել է հետևել խորհրդականների բոլոր հրահանգներին և ցանկություններին, չվիճել կամ հակադրվել դրանց: Սա հաճախ դժգոհություն է առաջացրել:

Մեկ այլ թուրք զինվորական, Թուրքիայի ռազմաօդային ուժերի գեներալ-մայոր, թուրքական օդուժի մատակարարման և սպասարկման 1-ին կենտրոնի ղեկավար Հեքսել Քահյան ևս մասնակցել է Արցախում գործողության ղեկավարմանը: Ժամանակին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Բաքվում հանդիպել է Թուրքիայի արտգործնախարարության և պաշտպանության նախարարության ղեկավարներ Հուլուսի Աքարին և Մևլութ Չավուշօղլուին: Հանդիպման մանրամասները հայտնի չեն: Հայտնի է, որ բանակցություններին մասնակցել է նաև Հեքսել Քահյան: Հատկանշական է, որ սա Քահյայի և Ալիևի արդեն երկրորդ հանդիպումն է եղել: Առաջինը տեղի է ունեցել 2020 թվականի օգոստոսին: Հանդիպման բոլոր մասնակիցների անունները տրվել են ճիշտ նույն կերպ, բացի Քահյայից: Քահյան առնվազն 2020 հուլիսից գտնվել է Ադրբեջանի տարածքում: Մինչ Ադրբեջան գալը Հեքսել Քահյան կազմակերպել էր Լիբիայում Անվտանգության և գործողությունների գլոբալ կենտրոնի (GCSO) աշխատանքը: Կենտրոնի դերը սահմանափակվում էր թուրքական Bayraktar TB2 անօդաչու թռչող սարքերի կառավարմամբ՝ ի աջակցություն Ազգային համաձայնության կառավարության (GNA) զորքերի, որոնք հակադրվում էին ֆելդմարշալ Խալիֆա Հաֆթարին: Լիբիայում Bayraktar TB2-ի օգտագործման էֆեկտը շրջադարձային էր: GNA-ի ուժերը կասեցրին Հաֆթարի առաջխաղացումը, չնայած նա արդեն պատրաստ էր գրոհել Տրիպոլին: Ռազմաճակատի որոշ հատվածներում նրանց հա-

ջողվեց նույնիսկ հակահարձակում կազմակերպել և հետ գրավել ծովափնյա Սուրման, Սաբրատահ և Ալ-Այալաթ քաղաքները: Քահյայի ներգրավվածությունը բացահայտվել է, երբ Հաֆթարի բանակը գերի է վերցրել մի քանի թուրք խորհրդականների և ստացել նրանց նամակագրությունը, ինչպես նաև GCSO-ում աշխատող բոլոր թուրք մասնագետների անձնագրերի պատճենները: Անկարայի և Հաֆթարի բանակցությունների արդյունքում բանտարկյալներն ազատ են արձակվել, սակայն անձնագրերի սքանները, այդ թվում՝ Հեքսել Քահյայի անձնագիրը, հրապարակել է Al Marsad-ը: Քահյայի հայտնվելն Ադրբեջանում, որտեղ, ինչպես Լիբիայում, անօդաչու թռչող սարքերը զանգվածաբար կիրառվել են, իհարկե պատահական չէ: Իհարկե, Հեքսել Քահյան վերահսկել է բոլոր «Բայրաքթար» TB2-ի թռիչքները Լեռնային Ղարաբաղի մարտական գոտում: Bayraktar TB2-ի օգնությամբ ձեռք բերված բոլոր օպերատիվ հետախուզական տեղեկությունները զեկուցվել են նրան, իսկ նա, իր հերթին, այդ տեղեկությունը հայտնել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանին: Այն, որ հենց Քահյան է համակարգում Բայրաքթարի TB2-ի օգտագործումը Արցախում՝ վկայակոչելով սեփական աղբյուրները, վերջերս հայտնել է կիպրոսական վերլուծական աշխարհաքաղաքական «Կիպրոս» կենտրոնը, որը մասնագիտացած է ռազմաքաղաքական ուսումնասիրությունների ոլորտում: Ժամանակի ընթացքում ավելի ու ավելի պարզ է դառնում Թուրքիայի դերը Ադրբեջանի և Հայաստանի միջև 44-օրյա պատերազմում: Մի շարք գործոններ ցույց են տալիս, որ Անկարան շատ առումներով եղել է Բաքվի գործուն ձեռքը ոչ միայն ադրբեջանական զինված ուժերի պատրաստման հարցում, այլև ակտիվ մասնակցել է անմիջականորեն գործողությունների պլանավորմանը, ինչպես նաև իրական մարտական գործողություններին: Նկատի ունենալով այն փաստը, որ Հարավային Կովկասը դեռևս մեծ մասամբ մնում է Ռուսաստանի պատասխանատվության տարածաշրջանը, Մոսկվայի արտաքին քաղաքական շահերի անմիջական գոտում այնպիսի խաղացողի առկայությունը, ինչպիսին Թուրքիան է, չէր կարող չառաջացնել մի շարք նոր տարաձայնություններ թուրք-ռուսական հարաբերություններում, չհաշված նրանք, որոնք արդեն

վաղուց գոյություն ունեն: Թուրքական էլիտար հատուկ նշանակության ջոկատների «Կոմանդո բրիգադը» Ադրբեջանի կողմից մասնակցել է Լեռնային Ղարաբաղում պատերազմին: Դրա վկայությունը հայտնվել է WarGonzo Telegram ալիքում: Վերջինիս վկայությամբ պատերազմի վերջին օրը, երբ ադրբեջանական բանակը սկսեց նահանջել Մարտունու ճակատում և ամբողջ ուժերը նետեց Շուշի քաղաքը գրոհելու, ղարաբաղցիները սպանված հակառակորդներից մեկի մոտ համարակալված մարտական դանակ են հայտնաբերել:

Այս դանակը պատվիրվել է թուրքական էլիտար հատուկ նշանակության ստորաբաժանման համար: Այս գտածոն, ինչպես նշում է WarGonzo-ն, անուղղակիորեն վկայում է այն մասին, որ Մարտունու մոտ նահանջողների մեջ կային թուրք զինվորներ: Կոմանդո բրիգադներ են տեղակայված Կայսերիում և Բոլուում: Դրանք բաղկացած են շտաբի հրամանատարությունից, մարտական ստորաբաժանումներից՝ չորս գումարտակից՝ բաղկացած երեք վաշտից և սպառազինության վաշտից: Բրիգադի անձնակազմի ընդհանուր թիվը կազմում է ավելի քան 3000 մարդ: Կոմանդոների պատրաստման դպրոցները գտնվում են Կայսերիում և Բոլուում: 2020 թվականի հոկտեմբերի 16-ին ռուսական հեղինակավոր «Կոմերսանտ» թերթը՝ վկայակոչելով իր ռազմադիվանագիտական աղբյուրները, հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության սրումը միտումնավոր ծրագրված և հրահրված է եղել Թուրքիայի կողմից, արձանագրելով, որ «վերջին ամիսների ընթացքում Անկարան ակտիվորեն հրահրել է Բաքվին ռազմական գործողություններ սկսելու՝ համապարփակ քաղաքական, դիվանագիտական, հետախուզական և ռազմատեխնիկական աջակցության խոստումների ներքո»: Ըստ «Կոմերսանտի» աղբյուրների՝ հուլիս-օգոստոս ամիսներին թուրք-ադրբեջանական զորավարժություններից հետո թուրքական զինուժի զգալի խումբ մնացել է Ադրբեջանի տարածքում և կոչված է եղել համակարգող և ուղղորդող դեր խաղալու Լեռնային Ղարաբաղում հարձակողական գործողության պլանավորման և իրականացման գործում: Խոսքը 600 զինվորականի մասին է, այդ թվում՝ 200 հոգանոց գումարտակային մարտավարական խումբ, Նախիջևանում՝ 50 հրահանգիչ, Բաքվում՝ 90 ռազմական խորհրդական (բրիգադ-կորպուս-գլխավոր շտաբի շղթայում մարտական գործողությունների ժամանակ կապ են ապահովել), 120 թռիչքատեխնիկական անձնակազմ՝ Գաբալայի ավիաբազայում, 20 անօդաչու թռչող սարք՝ Դալյարի օդանավակայանում, 50 հրահանգիչ՝ Եվլախի օդանավակայանում, 50 հրահանգիչ՝ 4-րդ բանակային կորպուսում (Պիրեքեսկուլ- Բեյլագան) և 20 մարդ՝ ռազմածովային բազայում և Բաքվի Հեյդար Ալիևի անվան ռազմական դպրոցում: Ըստ թերթի աղբյուրների՝ այս խմբում ներառված են եղել 18 հետևակի մարտական մեքենաներ, մեկ բազմակի հրթիռային համակարգ, տասը միավոր մեքենա և մինչև 34 միավոր ավիացիոն տեխնիկա (այդ թվում՝ 6 ինքնաթիռ, 8 ուղղաթիռ, մինչև 20 անօդաչու թռչող սարք), որոնք ապահովել են ռազմական հետախուզություն: թե՛ Ղարաբաղի տարածաշրջանում, թե՛ Հայաստանի տարածքում: Վկայակոչելով աղբյուրների տրամադրած տվյալները՝ հրատարակությունը հայտնում է, որ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կտրուկ աճել է Թուրքիայի ռազմատրանսպորտային ավիացիոն թռիչքների թիվը դեպի Ադրբեջան (հիմնականում տարանցիկ Վրաստանի տարածքով): Այս ինքնաթիռները մատակարարել են անձնակազմ, զինամթերք և դեղորայք: Թերթը նշում է, որ սեպտեմբերի 28-30-ը ռազմական գործողությունների ամենաթեժ պահին, բացի նախկինում ժամանած ռազմական խորհրդականներից, Ադրբեջան են ժամանել ցամաքային զորքերի հրամանատար Ումիթ Դյունդարը և Թուրքիայի պաշտպանության նախարար Հուլուսի Աքարը: «Տեղում նրանք ընդհանուր հսկողություն են իրականացրել ղարաբաղյան ճակատում գործողության ընթացքի վրա», - հայտնել են «Կոմերսանտ»-ի աղբյուրները: Թուրքիայի ներկայացուցիչները վարձկաններ են հավաքագրել Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողություններին մասնակցելու համար՝ Անկարային հավատարիմ իսլամիստական խմբավորումներից, որոնք կռվում են Սիրիայում և Լիբիայում, վերահսկում են վարձկանների մատակարարման նյութատեխնիկական շղթաները: Իր հերթին՝ Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպությունը՝ պաշտպանության նախարարության ուժերի և միջոցների աջակցությամբ, իրեն վերապահված ոլորտում անում է հնարավոր ամեն ինչ: Հիշենք, որ 2020 թվականի հոկտեմբերի 15-ին Ալիևը թուրքական A Haber հեռուստաալիքին տված հարցազրույցում փորձեց հերքել Փաշինյանի հայտարարությունը, որ ադրբեջանական կողմում կռվում են զինվորներ Թուրքիայից, Պակիստանից, Սիրիայից և Լիբիայից: Սակայն դա ավելի շուտ պատասխան էր ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոյին, ով նախօրեին հայտարարել էր, որ Թուրքիայի միջամտությունը ղարաբաղյան հակամարտությանը միայն «կրակի վրա յուղ է լցնում»: ■

Իրան-Իսրայել պրոքսի պատերազմը և տարածաշրջանային աճող լարվածությունը

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

2024 թվականի սեպտեմբերի սկզբից Իրան-Իսրայել հարաբերություններում տեղի են ունեցել զգալի սրացումներ, որոնք արտահայտվում են ինչպես ուղղակի, այնպես էլ միջնորդավորված հակամարտությունների միջոցով: Այս փոփոխությունները միտված են տարածաշրջանային անվտանգության համակարգի շուրջ աճող լարվածությանը, որը կարող է ունենալ գլոբալ հետևանքներ:

Տարվա սկզբից ի վեր Իսրայելը մի քանի օդային հարձակումներ է իրականացրել Սիրիայում և Լիբանանում՝ թիրախավորելով Իրանի բարձրագույն ռազմական հրամանատարներին և նրանց դաշնակիցներին: Իրանի պատասխան քայլերը ներառել են հրթիռային հարձակումներ և աջակցություն տարածաշրջանում գործող տարբեր զինյալ խմբավորումներին՝ ինչպիսիք են Հեզբոլլահը և Համասը: Հատկապես Հեզբոլլահն ակտիվորեն հարվածներ է հասցրել Իսրայելի հյուսիսային հատվածներին, իսկ իսրայելական ուժերը շարունակել են իրենց գործողությունները Լիբանանում և Գազայի հատվածում:

Այս հակամարտությունը շարունակում է վտանգել տարածաշրջանային անվտանգությունը, և կա հավանականություն, որ այլ երկրներ նույնպես կներգրավվեն, եթե զինյալ խմբերը շարունակեն սրել իրավիճակը: Իրան-Իսրայել հակամարտության հիմնական դրդապատճառներն ունեն քաղաքական, գաղափարական և աշխարհաքաղաքական խորը արմատներ:

Իսրայելի նկատմամբ Իրանի գաղափարական հակադրությունը, թերևս, առաջնահերթ և կարևորագույն գործոններից է երկու երկրների տասնամյակներ շարունակվող թշնամանքի: Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո Իրանը որդեգրեց խիստ հակահիսրայելական դիրքորոշում՝ Իսրայելը համարելով «սիոնիստական ռեժիմ», որը պետք է ոչնչացվի: Իրանի իսլամական գաղափարախոսությունը Իսրայելի գոյությունը դիտարկում է որպես սպառնալիք իսլամական աշխարհի համար, և այս գաղափարախոսությունը դարձել է Իրանի արտաքին քաղաքականության հիմնական բաղադրիչը:

Քաղաքական դրդապատճառներից է Իրանի միջուկային ծրագիրը: Իսրայելը մշտապես դեմ է եղել Իրանի միջուկային ծրագրին՝ այն համարելով անմիջական սպառնալիք իր ազգային անվտանգությանը: Իսրայելը բազմիցս իրականացրել է հարձակումներ Իրանի միջուկային օբյեկտների վրա՝ փորձելով կանխել միջուկային զենքի ստեղծումը Իրանի կողմից: Իր հերթին, Իրանն իր միջուկային ծրագիրը համարում է խաղաղ և տնտեսական շահերով

հիմնավորված, սակայն այն դարձել է միջազգային հակամարտության պատճառներից մեկը:

Աշխարհաքաղաքական գործոններից է տարածաշրջանային ազդեցության պայքարը: Իրանը ձգտում է իր ազդեցությունը մեծացնել Մերձավոր Արևելքում՝ աջակցելով «Դիմադրության առանցքին», որը ներառում է զինյալ խմբեր, ինչպիսիք են Հեզբոլլահը, Համասը, հութիները և այլք: Իսրայելը, տեսնելով այս խմբերի գործունեությունը որպես իր անվտանգության ուղղակի սպառնալիք, մի շարք ռազմական գործողություններ է իրականացրել նրանց դեմ՝ ներառյալ Սիրիայում, Լիբանանում և Գազայում:

Իրանի աջակցությամբ գործող խմբավորումները, մասնավորապես Հեզբոլլահը և Համասը, ակտիվացրել են իրենց ռազմական գործողություններն Իսրայելի դեմ: Հեզբոլլահի օդային հարձակումներն ու հրթիռային հարձակումներն Իսրայելի հյուսիսային հատվածի վրա դարձել են ավելի հաճախակի, ինչը հանգեցրել է հակահարվածների: Իսրայելը, իր հերթին, ուժեղացրել է օդային հարձակումները Հեզբոլլահի հենակետերի և զինամթերքի օբյեկտների վրա Լիբանանում, որպեսզի կանխի նրանց աճող սպառնալիքները:

2024 թվականի սեպտեմբերի կեսերին իսրայելական հետախուզությունը խափանել է Հեզբոլլահի հա-

զարավոր հաղորդակցման սարքեր, որի հետևանքով զոհվեցին խմբի տասնյակ անդամներ և հազարավոր մարդիկ վիրավորվեցին: 2024 թվականի սեպտեմբերի 27-ին Իսրայելը օդային հարձակմամբ սպանել է Հեզբոլլահի առաջնորդ Հասան Նասրալլահին նրա Բեյրութի գրասենյակում՝ նշանավորելով օպերացիայի վերջնական կետը, որի ընթացքում սեպտեմբերին սպանվել են բազմաթիվ բարձրագույն ղեկավարներ: Իսրայելը Լիբանանում նոր ցամաքային գործողությունների մեկնարկն անվանեց «Հյուսիսային նետեր» օպերացիա:

Նասրալլահի սպանությունից երկու օր առաջ, Իսրայելի պաշտպանության բանակի (IDF) գլխավոր շտաբի պետ լեյտենանտ Հերցի Հալևին Իսրայելի զինվորականներին ասել է՝ «Մենք պատրաստվում ենք գործողության, ինչը նշանակում է, որ ձեր ռազմական կոշիկները ... կհասնեն թշնամու տարածք»[1]:

Իրանը պատասխանել է՝ Իսրայելի դեմ արձակելով բալիստիկ հրթիռներ և այլ հեռահար զենքեր: Այսպիսով, երկու կողմերն էլ կրել են լուրջ մարդկային և նյութական կորուստներ, ինչը խորացնում է հակամարտությունը և նպաստում տարածաշրջանային անկայունությանը:

Վերջին շրջանում Իրանի և Իսրայելի բախումների վերաբերյալ մի շարք պաշտոնյաների արձագանքները և ԶԼՄ-ների հրապարակումներն ընդգծում են իրավիճակի լարվածությունն ու դրա տարածաշրջանային ազդեցությունը: Մասնավորապես, ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, ներառյալ փոխնախագահ Քամալա Հարիսը, զգուշացրել են տարածաշրջանում իրավիճակի է՛լ ավելի սրացման վտանգի մասին: Նրանք ընդգծել են, որ թեև Հեզբոլլահի ղեկավար Հասան Նասրալլահի մահը կարող է ժամանակավորապես թուլացնել այդ խմբի ռազմական հզորությունը, սակայն դեռ հնարավոր են Իրանի ուղղակի կամ անուղղակի պատասխաններ[2]:

Թուրքիան, որը նույնպես մասնակցում է տարածաշրջանային խաղին, հայտարարություններ է անում Իրանի և Իսրայելի հակամարտության վերաբերյալ՝ առաջարկելով իր միջնորդական ծառայությունները: Այս հակամարտությունը հետաքրքրություն է առաջացնում նաև այլ երկրների, այդ թվում՝ Արաբական Էմիրությունների և Սաուդյան Արաբիայի մոտ, որոնք փորձում են մոդերացնել իրավիճակը, բայց նաև աճող լարվածության պայմաններում պահպանել իրենց շահերը[3]:

G7-ի առաջնորդները նույնպես խստորեն դատապարտել են Իրանի գործողությունները, դրանք համարելով սպառնալիք տարածաշրջանային կայունության համար: Նրանք կրկին հաստատել են իրենց աջակցությունը Իսրայելի անվտանգությանը և կոչ արել բոլոր կողմերին զսպվածություն ցուցաբերել, որպեսզի կանխվի հակամարտության ընդլայնումը:

Իսրայելի ղեկավարները, հատկապես վարչապետ Բենյամին Նեթանյահուն, ընդգծել են, որ Իրանի դեմ ռազմական գործողությունները կրում են ինքնապաշտպանական բնույթ՝ ուղղված հակառակորդի գործողությունների կանխմանը: Իսրայելը նաև բազմիցս հաստատել է իր նպատակը՝ վերացնելու Իրանի աջակցությամբ գործող զինյալ խմբավորումները, ինչպիսիք են Հեզբոլլահն ու Համասը[4]:

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը սեպտեմբերյան բախումներից հետո Իսրայելի գործողությունները բնութագրել է որպես «թակարդ»՝ որի նպատակն է ներգրավել Իրանն ավելի լայն պատերազմում: Նա ընդգծել է, որ Իրանը նպատակ չունի անմիջապես մասնակցելու Իսրայելի դեմ բախմանը, բայց նաև նշել է, որ Իսրայելը շարունակում է սադրանքները, և Իրանն ունի «պարտականություն պաշտպանելու իրեն»:

Փեզեշքիանը նաև շեշտել է, որ իսլամական երկրները պետք է միասին արձագանքեն Իսրայելի գործողություններին, քանի որ մեկ Հեզբոլլահը չի կարող առանձին դիմադրել նման զինված երկրի: Նա հայտարարել է, որ եթե միջազգային կառույցները չկարողանան զսպել Իսրայելին, Իրանը կկատարի համապատասխան հակահարվածներ:

Վերջին օրերին երկուստեք հարաբերություններն է՛լ ավելի սրվեցին հատկապես հոկտեմբերի 26-ի վաղ առավոտյան Իրանի դեմ Իսրայելի իրականացրած հարվածից հետո, որը պատասխանն էր մոտ չորս շաբաթ առաջ Իսլամական Հանրապետության կողմից բալիստիկ հրթիռներով զանգվածային հարձակմանը: Զինվորականների տվյալներով, Իսրայելի օդային հարվածներն ուղղված էին ռազմավարական կարևոր օբյեկտներին, ներառյալ՝ անօդաչու թռչող սարքերի և բալիստիկ հրթիռների, ինչպես նաև հակաօդային պաշտպանության համակարգերի արտադրության և արձակման վայրերին:

ԻԻՀ ԱԳՆ նախարար Աբբաս Արաղչին հայտնել է, որ իսրայելական հարձակմանը նախորդող երեկոյից իրենք հարձակման հավանականության ազդանշաններ են ստացել, ինչից հետո վստահ են եղել՝ հարձակում լինելու է: Նաև հաղորդագրություններ են փոխանակել տարբեր կողմե-

րի հետ, և մինչև հարձակումը ձեռնարկել են անհրաժեշտ միջոցներ և այս առումով իրենց պարտքը կատարել են:

ԻԻՀ Արտաքին գործերի նախարարության խոսնակ Նասեր Քանանին էլ վերոնշյալ հարձակումից հետո ևս մեկ անգամ շեշտեց, որ Իրանն օգտագործում է հնարավոր բոլոր գործիքները՝ Սիոնիստական ռեժիմին վճռական պատասխան տալու համար, և պատասխանի տեսակը որոշվում է ըստ հարձակման տեսակի:

Նա հատկապես ընդգծեց, որ Իրանը չի շեղվի իր իրավունքից՝ պատասխան հարված հասցնելու Սիոնիստական ռեժիմի ագրեսիային[5]:

Այս ամենի համատեքստում բավականին հետաքրքրական է հատկապես մի շարք լրատվական կայքերում տարածված այն լուրը, ըստ որի՝ Իրանի վրա Սիոնիստական ռեժիմի հարձակման պահին Թուրքիայի և Ադրբեջանի հանրապետություններում միաժամանակ երկու հետախուզական անօդաչու թռչող սարքեր էին թռչում: Հաղորդվում է, որ Բաքու ուղևորվող անօդաչու թռչող սարքը օդ է բարձրացել Մասալլիի շրջանում գտնվող Սիոնիստական ռեժիմի բազայից[6]:

Որոշ աղբյուրներ էլ այս գործողությունը կապում են ամերիկյան օժանդակության հետ: Մասնավորապես ամերիկացի պաշտոնաթող սպա Հեյթամ Ֆարաջը նշել է, որ հարձակման ընթացքում կիրառված F-16 կործանիչների և THAD հակահրթիռային համակարգի առկայությունը և հետախուզական համագործակցությունը նշանակում է համատեղ գործողություն ԱՄՆ-ի հետ[7]:

Գաղտնիք չէ, որ ԱՄՆ-ն մշտապես եղել է Իսրայելի հիմնական ռազմական դաշնակիցը, և այդ աջակցությունը հատկապես ուժեղացել է, երբ Իսրայելը Իրանի հետ ներգրավված է եղել հակամարտությունների մեջ: Վերջին լարվածությունների և պատերազմի պայմաններում ԱՄՆ-ն մեծացրել է իր ռազմական օգնությունը Իսրայելին՝ տրամադրելով ինչպես ֆինանսական, այնպես էլ ռազմական միջոցներ՝ նրա պաշտպանական կարողությունները հզորացնելու նպատակով:

ԱՄՆ-ն մատակարարել է Իսրայելին առաջադեմ հակահրթիռային պաշտպանության համակարգեր, ինչպիսիք են «Երկաթե գմբեթը», ինչպես նաև այլ ռազմական սարքավորումներ: Իրանի կողմից 2024 թվականին Իսրայելի ուղղությամբ իրականացված հրթիռային հարձակումներին ի պատասխան, ԱՄՆ-ն տարածաշրջանում տեղակայել է Terminal High Altitude Area Defense (THAAD) հակահրթիռային համակարգը՝ պաշտպանվելու համար հնարավոր նոր հարձակումներից[8]:

Բացի այդ, ԱՄՆ-ը մատակարարել է Իսրայելին ճշգրիտ հարվածային զինամթերք, ինչպես նաև տրամադրել հետախուզական և լոգիստիկ աջակցություն:

ԱՄՆ պաշտոնյաները հաստատել են իրենց պարտավորությունը՝ ապահովելու Իսրայելի ռազմական գերակայությունը տարածաշրջանում, ինչը

ներառում է նաև Իրանի բալիստիկ հրթիռային հարձակումների դեմ պաշտպանության միջոցների շարունակական մատակարարումը:

Այսպիսով, Մերձավոր Արևելքը շարունակում է մնալ լարվածության գլխավոր օբյեկտը թերևս ամբողջ աշխարհում: Իրանը պատերազմում է ոչ թե միայն Իսրայելի դեմ, այլև առավել հզոր գերտերության՝ ինչպիսին ԱՄՆ-ն է: Իզուր չէ այն պնդումը, թե Իսրայելական պետությունը փոքրիկ ԱՄՆ է Մերձավոր Արևելքում:

Այսպիսով, Իրանի արձագանքները ցույց են տալիս զգուշավորություն ուղղակի հակամարտությանը մասնակցելու վերաբերյալ, բայց նաև պատրաստակամություն՝ աջակցելու Հեզբոլլահին և իրենց դաշնակիցներին տարածաշրջանում, եթե Իսրայելը շարունակի իր հարձակումները: Այս զարգացումները ցույց են տալիս, որ Իրան-Իսրայել հակամարտությունը մտնում է նոր փուլ, որն ընդգրկում է տարածաշրջանային ուժերի բարդ հարաբերությունները և աճող գլոբալ լարվածությունը: ■

Հղումներ

1 https://www.csis.org/analysis/escalating-war-between-israel-hezbollah-and-iran
2 https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2024/10/03/g7-leaders-statement-on-recent-developments-in-the-middle-east/
https://www.politico.com/news/2024/09/28/nasrallah-middle-east-war-00181540
3 https://www.understandingwar.org/backgrounder/iran-update-september-27-2024
4 https://www.politico.com/news/2024/09/28/nasrallah-middle-east-war-00181540
5 https://t.me/reisi_ir/74217
6 https://t.me/MiranPress/19001
7 https://t.me/reisi_ir/74231
8 https://www.stimson.org/2024/iran-needs-a-new-foreign-policy-approach/

Ադրբեջանական հասարակության դիրքորոշումը «խաղաղության պայմանագրի» նկատմամբ

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս

2020 թ. 44-օրյա պատերազմը լուրջ ցնցում էր ինչպես Հայաստանի, Արցախի, այնպես էլ ողջ Հարավային Կովկասի համար: Պատերազմից հետո տարածաշրջանում խախտվեց ուժերի հարաբերակցությունը, Արցախը հայաթափվեց և բռնազավթվեց թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից: Արցախի բռնազավթումից հետո էլ Ադրբեջանը շարունակում է ռազմական բարեփոխումները, զինված ուժերի արդիականացումը և ռազմական տեխնիկայի ձեռքբերումը:

Բռնազավթված տարածքներում ակտիվ ռազմական գործողությունների ավարտի առաջին իսկ օրվանից ոչ միայն ենթակառուցվածքային աշխատանքներ են սկսվել, այլև գյուղատնտեսական ու սոցիալ-տնտեսական ծրագրեր են գործարկվում: Ադրբեջանն ակտիվորեն զարգացնում է հարաբերությունները Թուրքիայի, Իսրայելի հետ, համագործակցում եվրոպական երկրների և Ռուսաստանի հետ՝ փորձելով ընդլայնել դաշնակիցների ցանկն ու զգալի դերակատարություն ունենալ տարածաշրջանային գործընթացներում:

Վերոնշյալը արձագանք է գտնում նաև ադրբեջանական հասարակության շրջանում, ինչն, ըստ էության, միանշանակ չէ: 44-օրյա պատերազմի ավարտից հետո Ադրբեջանում հասարակական տրամադրությունները հիմնականում բնութագրվում էին հաղթանակի զգացումով և ազգային հպարտությամբ: Ադրբեջանցիների զգալի մասը հաղթանակը համարում էր պատմական, քանի որ 1990-ականների արցախյան առաջին պատերազմից հետո «կարողացել էին առավելության հասնել» Հայաստանի և Արցախի նկատմամբ:

Այնուամենայնիվ, ակտիվ ռազմական գործողությունների ավարտից և հատկապես Արցախի բռնազավթումից հետո հասարակության շրջանում մտահոգություններ են առաջացել խաղաղության երկարաժամկետ հնարավորության և Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Ոմանք ցանկանում են արագ կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ, որից հետո կկարողանան զարգացնել տնտեսությունը և վերադառնալ բնականոն կյանքի, մինչդեռ մյուսներն ավելի կասկածանքով են վերաբերվում օկուպացված տարածքների երկարաժամկետ պահպանմանը և չեն բացառում, ինչպես հենց ինքը Ալիևն է ասում՝ հայկական «ռևանշ»-ի հնարավորությունը[1]:

Այս ամենին գումարվում է երկրի ներսում տիրող իրավիճակը՝ սոցիալ-տնտեսական խնդիրների ու համատարած ձերբակալությունների տեսքով:

44-օրյա պատերազմից հետո հասարակությունը հասկացավ, որ Արցախի բռնազավթմամբ ոչ միայն չեն լուծվում իրենց սոցիալական խնդիրները, այլև իշխանությունները մեծ գումարներ են ծախսում Արցախի բռնազավթված և ամայի տարածքներում տարբեր ծրագրեր իրականացնելու համար, այն դեպքում, երբ խիտ բնակչություն ունեցող ադրբեջանական գյուղերում լուրջ ենթակառուցվածքային, էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման և գազամատակարարման խնդիրներ են առկա: Ավելին, վերջին տարիներին Ադրբեջանում քաղաքական ենթատեքստով ձերբակալություններն ու, հատկապես, քաղաքական գործիչների, ընդդիմադիր ակտիվիստների և լրագրողների նկատմամբ հետապնդումներն ամենաքննարկվող թեմաներն են դարձել: Ձերբակալություններն առավելապես կապված են քաղաքական ակտիվության, մամուլի ազատության և հավաքների իրավունքների սահմանափակումների հետ: Սա հանգեցնում է հասարակական դժգոհությունների և միջազգային իրա-

վապաշտպան կազմակերպությունների կողմից քննադատությունների աճին: Ձերբակալությունները հաճախ դիտարկվում են որպես ընդդիմության ձայնը լռեցնելու միջոց, ինչն ազդում է հասարակական տրամադրությունների և ներքաղաքական կայունության վրա:

Տարբեր հասարակական խմբեր և ակտիվիստներ դժգոհում են պետական կառավարման, կաշառակերության և սոցիալական ծառայությունների որակի վերաբերյալ, ինչը հասարակական դժգոհության լրացուցիչ պատճառ է հանդիսանում: Այս ամենին գումարվում է Հայաստանի հետ հնարավոր խաղաղության պայմանագրի ստորագրման հարցը: Չնայած նրան, որ Ադրբեջանը միջազգային կազմակերպությունների և կառույցների կողմից ճանաչվել է որպես ավտորիտար պետություն, և հասարակական տրամադրությունները չեն կարող ազդեցություն ունենալ արտաքին քաղաքական օրակարգերի վրա, այնուամենայնիվ, Ադրբեջանում որոշակի քննարկումներ են ի հայտ եկել՝ պարզելու հասարակության վերաբերմունքն ու տրամադրվածությունը Խաղաղության պայմանագիր կոչվածի և Հայաստանի հետ հարաբերությունների վերաբերյալ:

Այսպես, Ադրբեջանի սոցիալական հետազոտությունների կենտրոնը (ԱՍՀԿ) 2023 թ. մայիսի 14-17-ը 18 տարեկանից բարձր 384 անձանց շրջանում հարցում է անցկացրել՝ ուսումնասիրելու Ադրբեջանի և Հայաստանի միջև խաղաղության պայմանագրի նկատմամբ հասարակության վերաբերմունքը: Հարցումն անցկացվել է 12 ադմինիստրատիվ շրջաններում՝ հեռախոսային հարցազրույցների տեսքով: Համապատասխան շտեմարանից պատահականության սկզբունքով ընտրվել են նշված տնտեսական և վարչական շրջաններին (քաղաքներին) պատկանող ֆիքսված հեռախոսահամարները: Ընտրանքի կառուցվածքը որոշվել է երկրում բնակչության բաշխվածությանը համապատասխան՝

պահպանելով գենդերային հավասարակշռությունը: Արդյունքների ճշգրտության մակարդակը կազմում է 95 %, հավանական սխալը՝ 5 %[2]: Ըստ այդմ, պարզվել է, որ հարցմանը մասնակցածների 77,3 %-ը կողմ է Ադրբեջանի և Հայաստանի միջև խաղաղության պայմանագրին, 20,6 %-ը դեմ է, իսկ 2,1 %-ը դժվարացել է կարծիք հայտնել: Արդյունքների համաձայն՝ հարցվածների բացարձակ մեծամասնությունը՝ 85,2 %-ը նշել է, որ հետևում է Ադրբեջանի և Հայաստանի միջև խաղաղության պայմանագրի հետ կապված գործընթացներին և նորություններին: Հարցվածների միայն 14,8 %-ն է ասել, որ չի հետևում գործընթացներին[3]: Հարցման արդյունքների գենդերային վերլուծությունը ցույց է տվել, որ մոտավորապես հավասար թվով տղամարդիկ և կանայք դրական դիրքորոշում ունեն այս հարցում: Հարցվածների կրթության առումով բարձրագույն կրթություն ունեցողների 82,7 %-ը և միջնակարգ կրթություն ունեցողների 72,2 %-ը կողմ են արտահայտվել Ադրբեջանի և Հայաստանի միջև խաղաղության պայմանագրին[4]: Նմանատիպ դիրքորոշում են հայտնել 18-24 տարեկան տարիքային խմբի ներկայացուցիչների 76,9 %-ը և 65 տարեկանից բարձր մարդկանց 87,3 %-ը:

Հատկանշական է, որ դեռևս 2022 թ. սեպտեմբերին անցկացված հարցման արդյունքների համաձայն՝ հարցվածների 71,2 %-ը («լիարժեք աջակցություն»՝ 50,2 %, «ավելի շուտ աջակցություն»՝ 21 %) այս կամ այն չափով իրենց աջակցությունն են հայտնել Ադրբեջանի և Հայաստանի միջև խաղաղության պայմանագրին: Հարցվածների միայն 2,6 %-ն է պատասխանել, որ ընդհանրապես չի աջակցում դրան, իսկ 23,6 %-ը պատասխանել է, որ ընդհանրապես չի աջակցում: Մասնակիցների 2,6 %-ը դժվարացել է կարծիք հայտնել այս հարցի վերաբերյալ:

Նույն տարվա դեկտեմբերին անցկացված հարցմանը մասնակցածների մեծամասնությունը (73,1 %-ը) ասել է, որ կողմ է խաղաղության պայմանագրին, 25,6 %-ը նշել է, որ չի աջակցում, իսկ 1,3 %-ը

դժվարացել է կարծիք հայտնել այդ հարցի վերաբերյալ[5]:

Ավելի ուշ, արդեն ըստ 2024 թ. հունիսին անցկացված հարցման արդյունքների՝ «Արդյո՞ք սատարում եք Ադրբեջանի և Հայաստանի միջև խաղաղության պայմանագրի ստորագրմանը» հարցին, դրական են պատասխանել հարցվածների 83,8 %-ը, միևնույն ժամանակ հարցվածների 13,5 %-ը դեմ է եղել խաղաղության պայմանագրի ստորագրմանը, 2,7 %-ը դժվարացել է պատասխանել[6]:

Ասվածի համատեքստում պետք է նշել, որ Ադրբեջանում սոցիալական հարցումները և հրապարակային ելույթները ադրբեջանցիների շրջանում ազգայնականության զգալի աճի ցուցիչներ են: Շատերը պնդում են, որ Հայաստանի հետ ցանկացած հարաբերություն պետք է պայմանավորված լինի Ադրբեջանի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ճանաչմամբ: Օրինակ, քաղաքական ելույթները հաճախ վկայակոչում են արդարության և պատմական իրավունքների վերականգնման թեմաներ: Երիտասարդները, թեև կրթության և մասնագիտական կայացման ճանապարհին բախվում են ադրբեջանական իշխանությունների կողմից պատմական իրողությունների խեղաթյուրմանը, սակայն, միաժամանակ ենթարկվում են գլոբալ միջազգային գործընթացներին, ուստի շատերը հանդես են գալիս խաղաղության և երկխոսության օգտին՝ գիտակցելով համագործակցության անհրաժեշտությունը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առևտուրը և մշակութային փոխանակումը:

Ըստ այդմ, ոչ երկրորդական նշանակություն ունեն նաև ադրբեջանական ՋԼՄ-ները, որոնք հաճախ Հայաստանը ներկայացնում են բացասական լույսի ներքո, հատկապես 44-օրյա պատերազմից հետո: Լրատվամիջոցներում տեղ գտած նյութերը առավելապես միտված են ռազմական սպառնալիքների վրա կենտրոնացմանը կամ Հայաստանը ներկայացնելու որպես «խաղաղության» խոչընդոտ: Մշակութային իրադարձություններում, գրականության կամ կինոյի ասպարեզում իշխանական քարոզչամեքենան հաճախ խեղաթյուրում է պատմական ճշմարտությունը, և ֆիլմերն ու գրքերը, որոնք կենտրոնանում են կորստի և պայքարի թեմաների շուրջ, հակամարտությունը ներկայացնելով «ադրբեջանական» տեսանկյունից, հասարակության շրջանում մեծացնում են ատելությունն ու թշնամանքը հայ ժողովրդի նկատմամբ:

Ադրբեջանի ներսում թեև քննարկումներ են ծավալվում խաղաղության պայմանագիր կոչվածի հաստատման շուրջ, սակայն երկրում շատերը թերահավատորեն են վերաբերվում այդ բանակցություններին՝ վախենալով, որ դրանք կարող են խախտել իրենց ազգային շահերը, ուստի հասարակական տրամադրությունները հաճախ առավելապես աջակցում են Հայաստանի հետ հարաբերությունների ձևավորման հարցում կոշտ դիրքորոշմանը:

Ըստ էության, կարող ենք ենթադրել, որ ադրբեջանական հասարակության վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ բարդ և բազմակողմանի է, որը ձևավորվում է պատմական դժգոհությունների, ազգային հպարտության և երիտասարդ սերնդի զարգացող հեռանկարների խառնուրդով: Մինչ ազգայնական տրամադրությունները գերակշռում են երկրում, կա նաև խաղաղության և համագործակցության շուրջ ձևավորվող խոսույթ, որը, սակայն չի կարող երաշխավորել երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման հնարավորությունը, քանի դեռ Ի. Ալիևի թշնամական վարչակարգը հետևողականորեն առաջնորդվում է Հայաստանի ու հայ ժողովրդի ոչնչացման օրակարգով:

Հղումներ

1 Алиев: Армения должна гарантировать, что не попытается взять реванш за Карабах, https://www.kommersant.ru/doc/6380889, 06.12.2013, (д/в. 27.10.2024).

2 Как общественность в Азербайджане относится к мирному договору с Арменией?, https://azertag.az/ru/xeber/kak_obshchestvennost_v_azerbaidzhane_otnositsya_k_mirnomu_dogovoru_s_armeniei-2627417, 22.05.2023, (д/в. 27.10.2024).

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում:

6 Почти 84% опрошенных граждан Азербайджана поддерживают мирный договор с Арменией, https://tass.ru/obschestvo/21276079, 04.07.2024, (д/в. 27.10.2024).

ԱՄՆ նախագահական ընտրությունների ազդեցությունը համաշխարհային աշխարհաքաղաքականության վրա. Թրամփի և Հարիսի մոտեցումների տարբերությունները

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

2024 թ. նոյեմբերի 5-ին կայանալու են ԱՄՆ նախագահական ընտրությունները, որոնք ցանկացած արդյունքի պարագայում էական ազդեցություն են ունենալու ԱՄՆ արտաքին քաղաքականության վրա: Սույն հոդվածում անդրադարձ կկատարվի ՆԱՏՕ-ում՝ ԱՄՆ հետագա դերի առումով Դոնալդ Թրամփի և Քամալա Հարիսի տեսակետների տարբերություններին, նախագահի պաշտոնում յուրաքանչյուրի վերընտրման պարագայում ԱՄՆ քաղաքականությանը ԱՄՆ աշխարհաքաղաքական մրցակից երկրների՝ Ռուսաստանի և Չինաստանի նկատմամբ:

Առանձին անդրադարձ կկատարվի նաև Հայաստանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության հնարավոր փոփոխություններին:

Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության հարցում Դոնալդ Թրամփի և Քամալա Հարիսի տեսակետների տարբերությունը

2024 թ. առնվազն 64 երկրներում տեղի են ունենալու ընտրություններ, որոնց մասնակցելու է աշխարհի բնակչության 49%-ը: Այս ընտրությունների արդյունքները որոշիչ են լինելու հետագա տարիների համաշխարհային քաղաքականության վրա[1]: Այս ընտրությունների թվում առավել նշանակալից են լինելու ԱՄՆ նախագահական ընտրությունները, որոնք տեղի են ունենալու նոյեմբերի 5-ին:

ԱՄՆ նախագահական ընտրությունները կարևորվում են այն առումով, որ ԱՄՆ նախագահի առաջատար երկու թեկնածուներն ունեն միմյանցից էապես տարբերվող քաղաքականություն և աշխարհայացք՝ կապված ԱՄՆ աշխարհաքաղաքական դերի և նշանակության հետ: Երկու գլխավոր թեկնածուներն են՝ ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփը՝ Հանրապետական կուսակցությունից, և ԱՄՆ ներկայիս փոխնախագահ Քամալա Հարիսը՝ Դեմոկրատական կուսակցությունից: Վերջինս դարձավ Դեմոկրատական կուսակցության թեկնածուն այն բանից հետո, երբ ԱՄՆ գործող նախագահ Ջո Բայդենը հայտարարեց ընտրապայքարից դուրս գալու մասին և իր աջակցությունը հայտնեց Քամալա Հարիսին: Կախված նրանից, թե ով կդառնա ԱՄՆ 47-րդ նախագահը, ԱՄՆ քաղաքականությունը մի քանի ուղղություններով կարող է փոփոխվել:

Դիտարկենք մի քանի առավել կարևոր ուղղությունները, որոնց դեպքում Թրամփն ու Հարիսն ունեն տարբերվող հայացքներ: Այդ ուղղություններն են ՆԱՏՕ-ն, Չինաստանը, Ռուսաստանը և, ինչն առավել կարևոր է մեզ համար, Հայաստանի նկատմամբ քաղաքականությունը:

Գալով գլոբալից լոկալին, նախ անդրադառնանք Հարիսի և Թրամփի դիրքորոշումներին՝ կապված ՆԱՏՕ-ում ԱՄՆ դերի հետ: Եվրոպայի համար առավել մեծ անհանգստություն առաջացնող երևույթ է Թրամփի վերընտրման հեռանկարը՝ հաշվի առնելով վերջինիս արտահայտած դիրքորոշումները եվրոպական անվտանգային համակարգում ԱՄՆ ներգրավվածության և Ռուսաստանի հետ հարաբերությունների վերաբերյալ: Դեռևս ԱՄՆ նախագահի պաշտոնում իր պաշտոնավարման ընթացքում Դոնալդ Թրամփը ցանկանում էր դուրս բերել ԱՄՆ-ը ՆԱՏՕ-ից, սակայն վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաները նրան բազմիցս ետ են պահել այդ քայլից: Եվ այժմ էլ նախագահության երկրորդ ժամկետը ստանձնելու դեպքում Թրամփը փորձելու է գտնել ուղիներ, թե ինչպես կարող է նվազեցնել ամերիկյան ներգրավվածությունը ՆԱՏՕ-ում՝ հասցնելով այն զուտ «սպասման» (standby) ռեժիմի: Ավելին, իր հնարավոր երկրորդ նախագահության պարագայում նախկին նախագահը չի ցանկանում, որ իր վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաների թվում լինեն «ՆԱՏՕ-ի ակտիվ կողմնակիցներ»: Թրամփի նման դիրքորոշումը Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության նկատմամբ պետք է դիտարկել «Նախ և առաջ Ամերիկան» (America First) քաղաքականության լույսի ներքո: Թրամփը չի ցանկանում՝ ԱՄՆ

հարկատուների գումարները ծախսվեն Միացյալ Նահանգներից դուրս՝ ապահովելով Եվրոպայի տարբեր պետությունների անվտանգությունը: Ուստի, քննադատության հիմնական թիրախն ուղղված է հենց նրան, որ ՆԱՏՕ-ի մնացյալ անդամ երկրները բավարար գումար չեն ներդնում անվտանգային ոլորտում: Ըստ Թրամփի՝ ԱՄՆ-ը շատ ավելի գումար է տրամադրում, քան անդամ այլ պետությունները, և այս հարցը բազմիցս բարձրաձայնվել է իր նախագահության ժամանակ: Այժմ էլ Թրամփը բացեիբաց խոսում է կառույցից դուրս գալու մասին, ինչը կարելի է կանխել, եթե բոլոր անդամները մեծացնեն անվտանգային ոլորտում իրենց ներդրումը:

Առավել մեծ անհանգստություն ԱՄՆ եվրոպացի գործընկերների մոտ առաջացրել էր Թրամփի այն հայտարարությունը, որ նա արել էր 2024 թ. փետրվարին: Իրեն ուղղված այն հարցին, թե արդյոք Միացյալ Նահանգները կօգնի եվրոպացի իր դաշնակիցներին՝ Ռուսաստանի հնարավոր հարձակման դեպքում, Թրամփը պատասխանել էր, որ գործընկերները պետք է ավելի շատ ներդրումներ կատարեն անվտանգային ոլորտում, եթե ոչ, ապա ինքը Ռուսաստանին կխրախուսի «անել ինչ ուզում են» («to do whatever the hell they want»): Թրամփը պատրաստ է որպեսզի իր երկիրը մնա ՆԱՏՕ անդամ, միայն այն պարագայում, երբ եվրոպացի գործընկերները «արդար խաղան», քանզի ԱՄՆ-ը պետք է վճարի միայն իր մասնաբաժինը և ոչ մյուսներինը, առավել ևս այն պարագայում, երբ ԱՄՆ-ը օվկիանոսից այն կողմ է գտնվում, և եվրոպական երկրները առաջին հերթին պետք է առավել շահագրգռված լինեն առավել մեծ ներգրավվածությամբ[2]:

Այսպիսով, ելնելով Թրամփի մոտեցումից, ակնհայտ է դառնում, որ նա շարունակելու է իր նախկին քաղաքականությունը՝ պնդելով, որ եվրոպացի գործընկերներն անվտանգային ոլորտում իրականացնեն իրենց ՀՆԱ-ի 2%-ի չափով ներդրումներ, իսկ ԱՄՆ-ը նվազեցնի իր դերը ռազմական դաշինքում: Իրականում այս հարցում արդեն իսկ կան դրական տեղաշարժեր, մասնավորապես՝ ՆԱՏՕ անդամների ⅔-ն արդեն իսկ ծախսում է ՀՆԱ-ի 2%-ն անվտանգության վրա, ներառյալ Գերմանիան, որը հատկապես Թրամփի քննադատության թիրախ էր դարձել[3]: Թրամփն ամենայն հավանականությամբ կշարունակի իր երկիրը պահել ՆԱՏՕ-ում, թեև ԱՄՆ դերն ու ներգրավվածությունը զգալիորեն կնվազի[4]:

Ի տարբերություն Թրամփի, ԱՄՆ լիբերալ շրջանակներն ունեն այլ դիրքորոշում: Այս հակառակ մոտեցման կողմնակիցն է ԱՄՆ ներկայիս նախագահ Ջո Բայդենի վարչակազմը, որի առանցքային դեմքերից է ներկայիս նախագահի թեկնածու Քամալա Հարիսը: Վերջիններս, ի տարբերություն Դոնալդ Թրամփի, աջակցում են ՆԱՏՕ-ի ներկայիս գործելակերպին, ինչպես նաև ընդունում ԱՄՆ-ի կողմից դաշնակիցների նկատմամբ ստանձնված բոլոր պարտավորությունների կատարման կարևորությունը: Նախագահ Բայդենը ՆԱՏՕ-ի 75-ամյակին նվիրված իր հայտարարության մեջ մասնավորապես նշել էր, որ ՆԱՏՕ-ն «համաշխարհային պատմության մեջ ամենահզոր ռազմական դաշինքն է»: Նախագահը կարևորել էր այն «սուրբ պարտավորությունը», որը իրենք ստանձնում են իրենց դաշնակիցների նկատմամբ, այն է՝ «պաշտպանել ՆԱՏՕ-ի տարածքի յուրաքանչյուր թիզը», որը Միացյալ Նահանգներին նույնպես ավելի անվտանգ է դարձնում և տալիս է «ամբողջ աշխարհում իր նմանը չունեցող» անվտանգության երաշխիքներ[5]:

Բայդենը նաև քննադատել է Դոնալդ Թրամփի հայտարարությունները ՆԱՏՕ-ի հասցեին՝ պնդելով, որ «նախկին նախագահը վտանգավոր, ցնցող և ակնհայտորեն հակաամերիկյան ազդանշան է ուղարկում աշխարհին»[6]: Հարիսը, լինելով Բայդենի վարչակազմի անդամ, ընդհանուր առմամբ նույն հայացքներն է կիսում ՆԱՏՕ-ի վերաբերյալ: Իր հայացքների մասին Հարիսը հայտնել էր Թրամփ-Հարիս առաջին բանավեճի ժամանակ: Ըստ նրա՝ Եվրոպայի և ՆԱՏՕ-ի ԱՄՆ դաշնակիցները շնորհակալ են, որ Թրամփն այլևս նախագահ չի: Մինչդեռ Հարիսը գիտակցում է «աշխարհում իր երբևէ ճանաչած ամենահզոր ռազմական դաշինքի՝ ՆԱՏՕ-ի» կարևորությունը: Ըստ Հարիսի, ԱՄՆ-ն պետք է շարունակի լինել միջազգային կանոններն ու նորմերը պահպանող առաջնորդ, ով հասկանում է, որ «ԱՄՆ դաշինքները կախված են մեր ԱՄՆ գործընկերներին օգնելու և թշնամիներին չսատարելու կարողությունից»[7]:

Այսպիսով, ԱՄՆ նախագահի երկու թեկնածուներն ունեն միմյանցից տարբեր մոտեցումներ ՆԱՏՕ-ի

հարցում: Մասնավորապես Քամալա Հարիսը կողմ է ԱՄՆ ակտիվ ներգրավվածությանը ՆԱՏՕ-ում, իսկ Թրամփը՝ հակառակը, կփորձի հնարավորինս նվազեցնել ԱՄՆ ներգրավվածությունը այս կազմակերպությունում:

ԱՄՆ նախագահական ընտրությունների ազդեցությունը ԱՄՆ-Չինաստան և ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունների վրա

Հարկ է նաև անդրադառնալ ԱՄՆ նախագահական ընտրությունների ազդեցությանը ԱՄՆ աշխարհաքաղաքական երկու հիմնական մրցակից երկրների՝ Ռուսաստանի և Չինաստանի նկատմամբ: Ինչ վերաբերում է ԱՄՆ 2024-ի նախագահական ընտրությունների ազդեցությանը Չինաստանի հետ հարաբերությունների վրա, ապա ակնկալվում է, որ Չինաստանի հետ առևտրային հարաբերությունները կշարունակեն լարված մնալ՝ անկախ նրանից նախագահական արշավում կհաղթի Դոնալդ Թրամփը, թե Քամալա Հարիսը: Որոշ փորձագետներ ենթադրում են, որ երկու թեկնածուներն էլ կոշտ քաղաքականություն կվարեն Չինաստանի նկատմամբ՝ արտացոլելով Չինաստանի նկատմամբ ավելի լայն երկկուսակցական կոնսենսուսը Վաշինգտոնում: Հարկ է նշել, որ Բայդենի վարչակազմը ամրապնդել է առճակատման քաղաքականությունը Չինաստանի նկատմամբ, որն առաջինը որդեգրել էր Թրամփը, ընդ որում, երկու կողմերն էլ Չինաստանին ներկայացնում են որպես ԱՄՆ հիմնական հակառակորդ պետություն: Այժմ Թրամփը նշում է, որ ընտրվելու պարագայում չինական ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը կարող են հասնել մինչև 100%-ի, և կկիրառվի 10%-20% ընդհանուր մաքսատուրք բոլոր այլ ներմուծումների համար, մինչդեռ Հարիսը, ամենայն հավանականությամբ, կշարունակի Բայդենի մաքսային քաղաքականությունը, ով ոչ միայն Թրամփի մաքսատուրքերն է ուժի մեջ թողել, այլև զգալի տուրքեր է սահմանել՝ մոտ 18 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ չինական ապրանքների նկատմամբ, որոնց թվում են՝ էլեկտրական մեքենաները, արևային մարտկոցները, լիթիումային մարտկոցները, պողպատը և ալյումինը[8]:

Բնական է, որ Չինաստանի կողմից ԱՄՆ-ի հետ հարաբերությունները շարունակելու ակնկալիք կա՝ անկախ ընտրությունների արդյունքից: Չինացի պաշտոնյաները ընտրությունները որակել են որպես «Ամերիկայի ներքին գործ»՝ նշելով, որ Չինաստանը «երբեք չի միջամտել և երբեք չի միջամտելու ԱՄՆ նախագահական ընտրություններին»: Այնուամենայնիվ, նրանք մտահոգություն են հայտնել քարոզարշավի ընթացքում Չինաստանը քաղաքական շահարկումների առիթ դարձնելու վերաբերյալ[9]:

Փոխնախագահ Քամալա Հարիսը և նախկին նախագահ Դոնալդ Թրամփը փոխադարձ մեղադրանքներ են հնչեցրել Չինաստանի նկատմամբ թույլ քաղաքականություն վարելու վերաբերյալ: Թրամփի քարոզարշավի կողմից, առանց ապացույցների, հայտարարվել է, որ Հարիսի փոխնախագահի թեկնածու, Մինեսոտայի նահանգապետ Թիմ Ուոլցն աշխատում է Չինաստանի համար՝ չնայած Ուոլցի կողմից չինական կառավարությանը քննադատելու երկար պատմությանը: Բանն այն է, որ Ուոլցը 1989 թվականից անգլերեն էր դասավանդել չինական ավագ դպրոցում: Սեպտեմբերին, իրենց նախագահական բանավեճի ժամանակ, Հարիսը իր հերթին պնդել է, թե Թրամփը «վաճառել է մեզ» Չինաստանին՝ «ամերիկյան չիպեր վաճառելով Չինաստանին, որպեսզի օգնի նրանց բարելավել և արդիականացնել իրենց բանակը», ինչպես նաև մատնանշել Թրամփի գովասանքը Չինաստանի նախագահ Սի Ծինփինի նկատմամբ: Այս ամենից ակնհայտ է դառնում, որ ով էլ ընտրվի ԱՄՆ նախագահ 2024 թ. ընտրություններում, Միացյալ Նահանգները շարունակելու է իր կոշտ և հակամարտային քաղաքականությունը Չինաստանի նկատմամբ:

Ինչ վերաբերում է ԱՄՆ քաղաքականությանը Ռուսաստանի նկատմամբ, ապա Թրամփի և Հարիսի միջև քննարկումները հիմնականում կապված են ՌԴ-Ուկրաինա պատերազմի թեմայի հետ: Թրամփ-Հարիս վերջին բանավեճի ժամանակ Թրամփը կրկնեց այն պնդումները որ մշտապես կատարել է իր քարոզարշավի ընթացքում: Թրամփը պնդում է, որ նախագահ դառնալու պարագայում կդադարեցնի Ուկրաինայի և Ռուսաստանի միջև պատերազմը. Ավելին, այն կդադարեցվի 24 ժամվա ընթացքում, սակայն մանրամասներ, թե ինչպես է դա հաջողելու, Թրամփը այդպես էլ չի հայտնել: Ըստ Թրամփի՝ նա լավ է ճանաչում ինչպես Զելենսկիին, այնպես էլ Պուտինին, և վերջիններս հարգում են իրեն, ի տարբերություն Բայդենի:

Մյուս կողմից, Դեմոկրատական կուսակցության թեկնածու Հարիսն ամբողջությամբ պաշտպանում է Ուկրաինային զինելու և միջազգային աջակցությունը ցուցաբերելու Բայդենի քաղաքականությունը: Դեռ ավելին, Հարիսը 6 անգամ հանդիպել է Ուկրաինայի նախագահին: Նա համակարծիք է Բայդենի հետ, որ ռազմական աջակցության տրամադրումը Ուկրաինա-

յին կօգնի ուժեղացնել վերջինիս դիրքերը, այն պարագայում երբ Մոսկվան համաձայնի բանակցություններին[10]:

Հետաքրքրական է, որ Պուտինը մեկնաբանել էր նախագահական ընտրությունները, նշելով թե աջակցում են Հարիսին: Սա իհարկե ոչ այդքան լուրջ կերպով արված դիտարկում է, որը կարող է օգնել Թրամփին այն օգտագործել Հարիսի դեմ: Մինչդեռ Թրամփն, իրականում, միշտ հրաժարվել է քննադատել նախագահ Պուտինին՝ սկսած իր առաջին նախագահության տարիներից, և մեղադրվել է Ռուսաստանի հետ ունեցած կապերի, ընտրություններում աջակցություն ստանալու մեջ[11]: Այսպիսով, Հարիսի ընտրվելու պարագայում ԱՄՆ քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ կշարունակի ներկայիս հետագիծը, մինչդեռ Թրամփի նախագահության պայմաններում հնարավոր է հարաբերություններում լարվածության որոշակի անկում, ինչպես նաև Ուկրաինային ԱՄՆ աջակցության նվազում:

ԱՄՆ ընտրությունների ազդեցությունը հայ-ամերիկյան հարաբերությունների և տարածաշրջանային ներգրավվածության վրա

ԱՄՆ ընտրությունների արդյունքները զգալի ազդեցություն են ունենալու նաև ՀՀ-ԱՄՆ հարաբերությունների և տարածաշրջանում ԱՄՆ ներգրավվածության վրա: Բայդենի վարչակազմի օրոք ԱՄՆ-ը ստանձնել է հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման ակտիվ միջնորդի դեր և ակտիվորեն խրախուսում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը: Սակայն այս մոտեցումը նոր չէ, քանի որ ԱՄՆ բոլոր վարչակազմերը՝ սկսած Ջորջ Բուշ ավագի վարչակազմից ակտիվ քաղաքականություն են վարել հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Հայաստանի այսօրվա իշխանությունների պատրաստակամությունը միակողմանի զիջումներով բավարարելու Թուրքիայի և Ադրբեջանի պահանջները հնարավորությունների նոր պատուհան է բացել ԱՄՆ-ի համար՝ նվազեցնելու Ռուսաստանի ազդեցությունը Հարավային Կովկասում առկա հակամարտությունների կարգավորման միջոցով: Այսպիսով, Բայդենի վարչակազմի օրոք նկատելի է եղել տարածաշրջանում ԱՄՆ առավել ակտիվ ներգրավվածությունը՝ մանավանդ Ռուսաստանի պասիվության պարագայում:

Ինչ վերաբերում է Քամալա Հարիսին, ապա պետք է նշել, որ նա ակտիվորեն համագործակցել է հայ լոբբիստների հետ սենատոր լինելու տարիներին և աջակցել որոշ հայանպաստ նախաձեռնությունների: 2019 և 2020 թթ. Քամալա Հարիսը ստորագրել է Արցախի ականազերծմանն աջակցող նամակներ, 2020 թ. ստորագրել է Կոնգրեսի գրադարանին ուղղված նամակը, որը կոչ էր պատշաճ կերպով գնահատելու Հայոց ցեղասպանությունը և 2019/2020 թթ. ապրիլի 24-ին հայտարարություն է տարածել Հայոց ցեղասպանության հիշատակության կապակցությամբ: Միևնույն ժամանակ, Հարիսը չի հովանավորել և չի աջակցել Ադրբեջանի մարդու իրավունքների/զենքի արգելման բանաձևին, չի հովանավորել Թուրքիայի մարդու իրավունքների/զենքի արգելման բանաձևին և չի ստորագրել 2020 թ. հայտարարությունը, որը դատապարտում է Ադրբեջանի/Թուրքիայի հարձակումները Հայաստանի/Արցախի վրա[12]: Չնայած դրան և այն հանգամանքին, որ Հարիսը Կալիֆորնիան ներկայացնող սենատոր էր, վերջինս երբեք աչքի չի ընկել ակտիվ հայանպաստ նախաձեռնություններով: Հասկանալու համար, թե ինչպիսին կլինի Քամալա Հարիսի արտաքին քաղաքականությունը ԱՄՆ նախագահ դառնալու պարագայում, պետք է նկատի ունենալ, որ նա արտաքին քաղաքականության մեջ մեծ փորձ չունի և հիմնականում հիմնվելու է իր խորհրդականների կարծիքների վրա՝ ի տարբերություն նախագահ Բայդենի, ով ուներ մեծ փորձառություն և գիտելիքներ ԱՄՆ արտաքին քաղաքականության և ընդհանրապես միջազգային հարաբերությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Քամալա Հարիսն արդեն իսկ քայլեր է ձեռնարկում հայ ընտրողների ձայները ստանալու համար: Մասնավորապես, 2024 թ. սեպտեմբերի 23-ին՝ Հայաստանի Անկախության տոնի առթիվ հրապարակված քարոզարշավի հայտարարության մեջ փոխնախագահ և նախագահի թեկնածու Հարիսն իր աջակցությունն է հայտնել «Լեռնային Ղարաբաղից տեղահանված հայերի՝ իրենց տները անվտանգ վերադառնալու իրավունքին», նաև նշելով, որ «Մենք երբեք չպետք է մոռանանք Հայոց ցեղասպանությունը»՝ հավելելով, որ ինքը հավատարիմ է մնում «Հայաստանի և նրա

հարևանների միջև կայուն խաղաղությանը՝ հիմնված ինքնիշխանության, անկախության և տարածքային ամբողջականության սկզբունքների վրա»: Նախագահի թեկնածու Հարիսի խոսքերով, նա կշարունակի «աջակցել Հայաստանին ժողովրդավարության ամրապնդման և տարածաշրջանում կայունության հաստատման ջանքերում»[13]:

Հաշվի առնելով Քամալա Հարիսի այս հայտարարությունը՝ կարելի է ակնկալել, որ Հայաստանը կարող է շարունակել մնալ ԱՄՆ ակտիվ քաղաքականության կիզակետում Հարիսի նախագահ ընտրվելու պարագայում: Իսկ հաշվի առնելով Քամալա Հարիսի սահմանափակ փորձն արտաքին քաղաքական ոլորտում՝ չի կարելի բացառել, որ վերջինս կշարունակի Բայդենի արտաքին քաղաքական գիծն այս ուղղությամբ՝ հիմնվելով իր խորհրդականների կարծիքների վրա, որոնցից շատերը Բայդենի վարչակազմի ներկայացուցիչները կարող են լինել: Այսպիսով, նրա նախագահությունը կարող է հավասարակշռել հայկական շահերի պաշտպանությունը՝ տարածաշրջանում ավելի լայն ռազմավարական նկատառումներով:

Թրամփի հաղթանակի դեպքում հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում միջնորդությունը կպասիվանա: Մենք դիտարկել ենք Թրամփի արտաքին քաղաքականության զարգացումը մինչև 2021 թվականը, ներառյալ 44-օրյա պատերազմը Լեռնային Ղարաբաղում: Պատերազմի ընթացքում Թրամփը բավականին պասիվ կեցվածք էր ընդունել՝ սահմանափակվելով մի քանի թվիթերով և հայտարարություններով, որոնց չհաջորդեցին հստակ քայլեր հակամարտության կարգավորման ուղղությամբ: Թրամփի վարչակազմի կողմից ԼՂ պատերազմում միակ նշանակալի ներգրավվածությունը նրա ազգային անվտանգության հարցերով խորհրդականի և հայ համայնքի միջև տեղի ունեցած հանդիպումն էր, ինչպես նաև ԱՄՆ միջնորդությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև երրորդ զինադադարը, որը երկար չտևեց: Բացի սրանից, Թրամփի վարչակազմի կողմից որևէ այլ էական ներգրավվածություն չի եղել, և հիմքեր չկան մտածելու, որ այս մոտեցումը կփոխվի նրա երկրորդ պաշտոնավարման պարագայում: Հավանականություն կա, որ նա ևս մեկ անգամ կորոշի «մեկուսացած» քաղաքականություն որդեգրել: Իր պաշտոնավարման սկզբնական տարիների նման, Թրամփը, ամենայն հավանականությամբ, առաջնահերթություն կտա ԱՄՆ-ի համար կենսական նշանակություն ունեցող կարևորագույն խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝ Մերձավոր Արևելքը, Ուկրաինայի հակամարտության կարգավորումը և Չինաստանի հետ հարաբերությունների հստակեցումը, իսկ Հայաստանը և հայ-ադրբեջանական ու հայ-թուրքական հարաբերությունները նրա վարչակազմի համար կմղվեն ետին պլան:

Հղումներ

1 Ewe K., The Ultimate Election Year: All the Elections Around the World in 2024, https://time.com/6550920/world-elections-2024/, (մուտք՝ 21.09.2024).
2 Karnitschnig M, Donald Trump just did Europe a favor, https://www.politico.eu/article/donald-trump-just-did-europe-a-favor/, (մուտք՝ 21.09.2024).
3 McDonald A., Donald Trump says he won't quit NATO — if Europe pays its way, https://www.politico.eu/article/donald-trump-says-he-wont-quit-nato-if-europe-pays-its-way/, (մուտք՝ 21.09.2024).
4 Hirsh M., Trump's Plan for NATO Is Emerging, https://www.politico.com/news/magazine/2024/07/02/nato-second-trump-term-00164517, (մուտք՝ 22.09.2024).
5 Statement from President Joe Biden on NATO's 75th Anniversary, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2024/04/04/statement-from-president-joe-biden-on-natos-75th-anniversary/#:~:text=We%20must%20remember%20that%20the,other%20nation%20in%20the%20world, (մուտք՝ 22.09.2024).
6 Mason J., Hunnicutt T., Biden blasts 'dangerous' Trump NATO remarks, urges Ukraine funding, https://www.reuters.com/world/us/biden-blasts-dangerous-trump-nato-remarks-highlighting-ukraine-funding-need-2024-02-13/, (մուտք՝ 23.09.2024).
7 READ: Harris-Trump presidential debate transcript, https://abcnews.go.com/Politics/harris-trump-presidential-debate-transcript/story?id=113560542, (մուտք՝ 23.09.2024)
8 Jie L. H., Harris or Trump: Does it matter for China who wins the election?, https://www.cnbc.com/2024/09/12/harris-or-trump-does-it-matter-for-china-who-wins-the-election.html, (մուտք՝ 24.09.2024)
9 Jisi W., et al, Does China Prefer Harris or Trump? Why Chinese Strategists See Little Difference Between the Two, https://www.foreignaffairs.com/united-states/does-china-prefer-harris-or-trump, (մուտք՝ 24.09.2024)
10 Harris and Trump: Compare where they stand on key issues, https://www.nbcnews.com/politics/2024-election/harris-trump-stance-issues-policies-president-race-rcna150570, (մուտք՝ 25.09.2024).
11 Putin: Kamala Harris laughs 'infectiously,' we want her to win, https://www.politico.eu/article/vladimir-putin-kamala-harris-us-election-donald-trump-joe-biden-russia/, (մուտք՝ 25.09.2024)
12 ANCA Report Card: 116th Congress (2019-2020), https://anca.org/senate/kamala-harris-9173-116/, (մուտք՝ 28.09.2024)
13 Forty Days from Election, Kamala Harris Starts Courting Armenian American Voters, https://anca.org/press-release/forty-days-from-election-kamala-harris-starts-courting-armenian-american-voters/, (մուտք՝ 28.09.2024).

Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունը Բուլղարիայում (1894-1924 թթ.)

Խաչատուր Ստեփանյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ)

Աշխարհագրական դիրքով, բուլղար ժողովրդի քաղաքական իղձերով և թուրքերի հանդեպ ունեցած հակակրանքով պայմանավորված, Բուլղարիան Հայ Յեղափոխական Դաշնակցության համար հանդիսացել է կարևոր հենակետ Կոստանդնուպոլիս և այնտեղից Երկիր անցնելու ու ազգային-ազատագրական պայքարն առաջ մղելու համար: Գտնվելով Կ. Պոլսին կից, Երկրին մոտիկ, միաժամանակ Եվրոպայում՝ նրա դիրքը բացառիկ էր հեղափոխական գործի համար: Կարևոր էին նաև Բուլղարիայի ծովային հաղորդակցության հնարավորությունները Տրապիզոնի, Բաթումի և Զմյուռնիայի հետ:

Աշխարհագրական և քաղաքական առանձնահատկությունները պարտադիր են դարձել, որ ՀՅ Դաշնակցությունը շատ վաղուց արմատներ նետեր Բուլղարիայում: Նախընթաց շրջանում Բուլղարիայում թուրքերի վարած հալածական քաղաքականությունը փաստորեն նպաստել էր, որ բուլղար ժողովուրդը և նրա իրարահաջորդ կառավարությունները ոչ միայն բարյացակամ վերաբերվեին հայ հեղափոխական շարժմանը, այլև երբեմն ուղղակի կամ անուղղակի կարևոր օժանդակություն ցուցաբերեին[1]:

ՀՅԴ մուտքը Բուլղարիա

Կուսակցական առաքելությամբ Բուլղարիա ժամանած առաջին դաշնակցական գործիչը Գարեգին Խաժակն (Չաքալյան) էր՝ Բաբա-Գասպար կեղծանունով[2]: Նա 1894 թ. վերջերին Յամբոլ և Սլիվեն քաղաքներում մի շարք հանդիպումներ է ունենում տեղի հայրենասեր ու սրտացավ հայերի հետ: Սլիվենի հայությանը ոգևորելու տեսակետից բավական ազդեցիկ է եղել Ամբակում աղայի տանը տեղի ունեցած հավաքույթի ժամանակ Գ. Խաժակի հնչեցրած հայրենաշունչ ճառը: Նա այստեղ ներկայացրել է արևմտահայության ծանր վիճակը, Սասունի կոտորածները: Գ. Խաժակը համոզմունք է հայտնել, որ Օսմանյան կայսրության դեմ հեղափոխական պայքարի ելած ժողովուրդներն ազատագրվել են բռնակալությունից: Ուստի «հայն ալ պիտի թօթափէ ստրկութեան լուծը՝ ազատ եւ անկաշկանդ ապրելու եւ հայ մշակոյթը զարգացնելու համար»[3]:

Գարեգին Խաժակը շատ կարճ ժամանակամիջոցում Սլիվեն և Ֆիլիպե (ներկայումս՝ Պլովդիվ) քաղաքներում ձևավորում է դաշնակցական բջիջներ, որոնք նույնիսկ կարողանում են հանգանակություն կազմակերպել Սասունի կարոտյալների համար: 1895 թ. Գ. Խաժակը դաշնակցական խումբ է ստեղծում նաև Վառնայում[4]:

1895 թ. աշնանը ՀՅ Դաշնակցության Բյուրոն Բուլղարիա է գործուղում Վարդոյին (Վարդ Պատրիկյան)[5]: Վարդոն այստեղ զբաղվում էր փամփուշտի տարանցումը կազմակերպելու գործով: Նա եվրոպական երկրներից Արևմտյան Հայաստանի համար ձեռք բերված փամփուշտը բուլղարական նավահանգիստներով ուղարկում էր Կովկաս:

1897 թ. Կ. Պոլսից Վառնա է անցնում Արշակ Վռամյանը (Օննիկ Դերձակյան) և նույն տարվա օգոստոսի 20-22-ին կազմակերպում Բուլղարիայի Յամբոլ, Ֆիլիպե, Բուրգաս, Սլիվեն, Ռուսճուք, Վառնա, Շումլա (Շումեն) քաղաքների դաշնակցական մարմինների առաջին շրջանային ժողովը, որն ընտրում է Բալկանյան[6] Կենտրոնական Կոմիտե[7]:

ՀՅԴ կառույցը Բուլղարիայում 1898-1907 թթ.

Առաջին շրջանային ժողովից հետո, սակայն, Կենտրոնական Կոմիտեն չցուցաբերեց ակնկալվող աշխուժությունը: 1898 թ. ՀՅԴ 2-րդ Ընդհանուր Ժողովից հետո Ֆիլիպեում հաստատվեց կուսակցության առանցքային դեմքերից Ռոստոմը (Ստեփան Զորյան)[8]: Վերջինիս գլխավոր խնդիրը Դաշնակցության տեղի կազմակերպության հզորացումն էր: Ռոստոմի անմիջական նախաձեռնությամբ. «սարքուեցան խառն կամ զուտ դաշնակցական բազմաթիւ լսարաններ, օրիորդաց, տիկնանց եւ երիտասարդներու համար առանձին լսարաններ, յետոյ կազմուեցան երգեցիկ ու թատերասէր երկսեռ խումբերը եւ հետզհետէ զինավարժական-մարմնամարզական խումբերը, առանց հաշուելու զուտ յեղափոխական 3-4 օժանդակ խումբերը, որոնք նոյնպէս այդ ժամանակ կազմուեցան: Այս եղանակաւ քաղաքի գրեթէ բոլոր երիտասարդ ու

Գարեգին Խաժակ

Արշակ Վռամյան

Ռոստոմ (Ստեփան Զորյան)

տրամադրելի ուժերը ներգրաւուեցան, եւ շատ չանցած՝ բոլորը դաշնակցական դարձան»[9]: Այս ընթացքում Ռոստոմն իր կնոջ՝ Եղիսաբեթ Շահնազարյան-Զորյանի հետ Ֆիլիպեում հիմնում է հայկական դպրոց, որտեղ հաճախող հայ մանուկները դաստիարակվում էին հայկական ոգով: Դպրոցը բազմաթիվ հայ ընտանիքների կապեց ՀՅ Դաշնակցության հետ:

Ֆիլիպեում Ռոստոմի հայկական դպրոց բանալը յուրատեսակ մեծ հանդգնություն էր: Քաղաքում ապրում էր մոտ 1000 տուն հայ ընտանիք: Ռոստոմի աշակերտուհիներից Պերճուհի Բարսեղյանը[10] այդ կապակցությամբ հետագայում հետևյալը պիտի գրեր. «Անհաւատալի աղմուկ մը առաջ բերաւ այդ դպրոցին բացումը: Աղաներու շշմանքին, զարմանքին այդպիսի յանդգնութեան դէմ՝ յաջորդեցին զայրոյթը եւ պայքարը ամէն զէնքերով: Անոնցմէ ոմանք չվարանեցան անգամ տաճիկ հիւպատոսին միջոցաւ պուլկար կառավարութեան դիմելու եւ բողոքելու, որ Ռոստոմի դպրոցին մէջ ռումբեր կը պատրաստուին թիւրք կառավարութեան դէմ: Այնպէս որ պուլկար կառավարութիւնը ձեւական քանի մը խուզարկութիւններ կատարել տուաւ դպրոցին մէջ: Ձեւական, որովհետեւ կառավարական շրջանակները, որոնց մէջ աչքի կը զարնէին մակեդոնական յայտնի գործիչներ, շատ լաւ գիտէին թէ ինչ էր դպրոցին նպատակը»[11]: Իրականում աղաները մտահոգված էին, որ հայ միջին և ստորին դասի ներկայացուցիչներն իրենց երեխաներին ուղարկում էին Ռոստոմի դպրոցը: Այլևս Ֆիլիպեի հայության մեջ Ռոստոմն էր հեղինակությունը և ոչ իրենք: Ռոստոմի շնորհիվ Ֆիլիպեի հայության հասարակական-քաղաքական կյանքը եռում էր, կանայք ներգրավված էին Կարմիր խաչի, մշակութային ձեռնարկների մեջ, վարժարանը դարձել էր զանազան քննարկումների կենտրոնատեղի[12]:

Մինչև 1905 թ. վարժարանի նյութական կարիքները՝ մոտ 7000 ֆրանկ, հոգացվում էին աշակերտների թոշակների, հիմնադիրների անձնական զոհողությունների և կովկասցի կրթասեր անձանց նվիրատվությունների հաշվին: Վարժարանի ուսուցիչներն ու ուսուցչուհիները, հիմնականում դաշնակցականներ, աշխատում էին առանց վարձատրության: Սակայն 1905-1906 թթ. կովկասյան դեպքերը (հայ-թաթարական զինված բախումները) խանգարեցին այնտեղից նյութական աջակցություն ստանալուն, և վարժարանը հայտնվեց կարիքի մեջ[13]:

Բուլղարիայում Ռոստոմի հաստատվելու պատճառներից մեկն էլ մակեդոնացի հեղափոխականների հետ համագործակցության ծրագրերի մշակումն ու իրականացումն էր: Բուլղարահայ դաշնակցականները կապ էին հաստատել Բուլղարիայում գործող մակեդոնական ազգային-ազատագրական շարժման ղեկավարների հետ և հիմնել Օսմանյան կայսրության դեմ ուղղված «Հայ-մակեդոնական եղբայրություն» դաշինքը: Ռոստոմը, օգտվելով մակեդոնացի հեղափոխականների աջակցությունից, կատարելագործեց նաև պայթուցիկներ պատրաստելու իր հմտությունը, որը հետագայում պիտի շարունակեր Քրիստափոր Միքայելյանը[14]: Մակեդոնացի հեղափոխականների աջակցությամբ և բուլղարական կառավարության «արտոնությամբ», մի փոքր ուշ ՀՅ Դաշնակցությունը նաև զինվորական վարժարան բացեց Բուլղարիայում:

Հայ-մակեդոնական համագործակցությունը, ցավոք, նաև ողբերգական դրվագներով է հայտնի: Բուլղարիայում հայ հեղափոխականներից մակեդոնացիների հետ սերտ հարաբերություններ ուներ Պետրոս Սերեմճյանը: Վերջինս իր մակեդոնացի ընկերների հետ ստեղծեց 10 հոգուց բաղկացած հայ-մակեդոնական զինյալ խումբ, որը պետք է Ադրիանապոլսի բանտից ազատեր հայ և բուլղար մի քանի բանտարկյալների: Խմբի մեջ էին Պետրոս Սերեմճյանը, Թաթուլը (Արամ Արամյան), Օննիկ Թորոսյանը, Խաչիկ Ասլանյանը, բուլղարներից՝ Սոկոլովը, Ս. Մերջանովը, Խրիստո Հաջի Իլիևը և ուրիշներ: Հեղափոխականների խումբը որոշել էր գերի վերցնել Ադրիանապոլսի վալիին և

փոխանակել խնդրո առարկա բանտարկյալների հետ: Իմանալով վալիի գտնվելու հստակ վայրը, հեղափոխականները հատում են թուրք-բուլղարական սահմանը և 1901 թ. հուլիսի 6-ին անցնում հարձակման: Սակայն մինչ նրանք հասնում էին, վալին արդեն հեռացել էր, փոխարենը գերի են վերցնում մի թուրք մեծահարուստի որդուն: Սկսվում է կռիվ, հեղափոխականներից վեցը անհավասար կռվում զոհվում են, իսկ չորսը՝ Պետրոս Սերեմճյանը, Օնսիկ Թորոսյանը, Ս. Մերջանովը, Խրիստո Հաջի Իլիևը գերի են ընկնում: Թուրքական իշխանությունները հայ-մակեդոնական համագործակցությունը սաղմի մեջ խեղդելու դիտավորությամբ որոշում են ամենախիստ պատիժը կիրառել գերի ընկածների նկատմամբ. հայ և մակեդոնացի գերի հեղափոխականները 1901 թ. նոյեմբերի 27-ին (դեկտեմբերի 9-ին) կախաղան են բարձրացվում[15]:

Բուլղարիայից Ռոստոմի[16] հեռանալուց հետո այնտեղ ՀՅ Դաշնակցության ղեկավար դեմքը դառնում է Վարդոն, ով նոր էր վերադարձել Ժնևից: Սակայն 1904 թ. Վարդոյի և Կենտրոնական կոմիտեի մյուս ընկերների միջև անհամաձայնությունների պատճառով ձախողումներ են արձանագրվում[17]: Դրանք հետագայում ավելի են խորանում և պատճառ դառնում Վարդոյի նկատմամբ կուսակցական պատժական տնօրինման:

1904-1907 թվականները Բուլղարիայում ՀՅԴ-ի գործունեության առումով նշանավոր են մի շարք իրադարձություններով՝ Սոֆիայի Ընդհանուր ժողով, Վիտոշի ողբերգություն, ՀՅԴ զինվորական դպրոց և այլն:

1904 թ. փետրվար-մարտին Սոֆիայում տեղի է ունենում ՀՅԴ 3-րդ Ընդհանուր ժողովը, որտեղ որոշվում է մի ցուցական գործողություն իրականացնել Կ. Պոլսում: Այդ նպատակով ժողովն ընտրում է նաև Ցուցական պատասխանատու մարմին[18]: Այդ մարմնում ընդգրկվում է նաև Քրիստափոր Միքայելյանը, ում համար սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի ահաբեկումը գերագույն նպատակ էր[19]: Բացի Քրիստափորից, Ցուցական պատասխանատու մարմնի անդամ ընտրվեցին նաև Սաֆոն (Մարտիրոս Մարգարյան), Թորգոմը (Արտաշես Սերեմճյան), Հովնան Դավթյանը, Աշոտ Բագրատունին (Կարապետ Եղիկյան, Սև Աշոտ)[20]: Աշխատանքներում ներգրավվեցին նաև օրիորդ Ռուբինա Արեշյանը (հետագայում՝ Օհանջանյան), Վռամ Քենտիրյանը (ով հետագայում պիտի նահատակվեր Քրիստափորի հետ), Քրիս Ֆեներճյանը, Գրիգոր Սայանը (Ջայիլ), օրիորդ Էմիլը, կես-հույն, կես-իտալացի Սիլվիո Ռիչչին, գերմանուհի Սոֆի Ռիպսը և ուրիշներ[21]: Բուլղարիայում Քրիստափորն իր համախոհների հետ ձեռնամուխ եղավ սուլթանի ահաբեկման նախապատրաստական աշխատանքներին:

1905 թ. մարտի 4(17)-ին Սոֆիայից ոչ հեռու, Վիտոշ լեռան լանջին ռումբի վերջին փորձարկման ժամանակ, Քրիստափորը և Վռամը զոհվում են[22]: Քրիստափորի նահատակությունից հետո գործի ղեկավարումը վստահվում է Սաֆոյին: Վերջինիս ղեկավարությամբ, սուլթանի մահափորձը տեղի է ունենում 1905 թ. հուլիսի 21-ին: Ցավոք, Աբդուլ Համիդ Բ-ն ողջ է մնում:

Այս ընթացքում Վառնայում լույս տեսնող «Շարժում» թերթում Վարդ Պատրիկյանը սկսում է քննադատել Քրիստափորին և Ցուցական մարմնի գործունեությունը, ինչն, ըստ էության, գաղտնապահության կոպիտ խախտում էր: 1906 թ. տեղի ունեցած ՀՅԴ Բալկանյան ժողովը քննում է նաև Վարդոյի հարցը: Վարդոն մեղադրվում էր ոչ միայն կուսակցական մարմիններին հրապարակավ քննադատելու և գաղտնապահությունը խախտելու, այլև կուսակցության նյութական միջոցները յուրացնելու մեջ: Ժողովը բավական երկար անդրադարձավ այս հարցին և միաձայնությամբ որոշեց «գիտակցաբար ու բացարձակօրէն զեղծարարութիւն ընող Իսակ Առվախի Վարդոյի նկատմամբ յեղափոխութեան եւ կազմակերպական կանոններու տրամադրած ամենածանր պատիժը[23], անոր վաներացումը յանձնարարելով Ընդհանուր ժողովին կամ Դաշնակցութեան Խորհուրդին»[24]:

1907 թ. փետրվար-մայիսին Վիեննայում տեղի ունեցած ՀՅԴ 7-րդ Ընդհանուր ժողովն անդրադարձավ նաև «Վարդոյի խնդրին»: Ապրիլի 28-ի նիստում, լսելով Վարդոյի գործի համար կազմված Դատական հանձնաժողովի մանրամասն զեկուցումը, Ընդհանուր ժողովը եզրակացրեց, որ Վարդոն գիտակցաբար, սեփական կարիքների համար յուրացրել և ծախսել է ՀՅԴ Բալկանյան Կենտրոնական կոմիտեի գումարները՝ ընդհանուրը 12112 ֆրանկ: Բացի դա, Վարդոն շահագործել է նահատակ ընկերոջ՝ Պետրոս Սերեմճյանի հիշատակը, իր խմբագրած «Շարժում» թերթի մեջ Պ. Սերեմճյանի բանաստեղծությունները հրատարակելու նպատակով հանգանակություն է կազմակերպել և յուրացրել հավաքված գումարը: Ժողովը եզրակացրեց, որ «Վարդոն իր բոլոր անմաքուր գործերը եւ, մանաւանդ, իր զեղծումները չքմեղելու համար հանրային կարծիքին առջեւ՝ դիմած է ամէն տեսակ անորակելի միջոցներու՝ ջանալով արատաւորել Դաշնակցութիւնը, դաշնակցական ամենամաքուր գործիչները, նկրտելով կասկածի ստուեր ձգել անոնց գործունէութեան վրայ, անուանարկութեան ու խեղաթիւրման հակասական ամէն փորձ ի գործ դնելով իր թերթին մէջ»[25]: Ելնելով վերոնշյալ ծանրակշիռ եզրակացություններից՝ Ընդհանուր ժողովը որոշեց հաստատել ՀՅԴ Բալկանյան Շրջանային Ժողովի որոշումը Վարդոյի վերաբերյալ:

Վարդոյի ահաբեկումն իրականացվեց Ռուսճուքում 1907 թ. Հակոբի (Կրճի) կողմից[26]:

1905 թվականից Ֆիլիպեում սկսում է հրատարակվել «Ռազմիկ» պարբերականը, որը գաղափարա-քաղաքական լուրջ դերակատարում է ունեցել[27]: Թերթի կայացման գործում առանձնապես մեծ է խմբագրի՝ Ռուբեն Զարդարյանի ներդրումը: Լինելով լուրջ մտավորական և միաժամանակ քաղաքական անձնավորություն, նա կարևոր որակ է հաղորդում թերթի հրապարակումներին: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ՀՅԴ Բալկանների Կենտրոնական կոմիտեն թերթին ֆինանսական և բարոյական մեծ աջակցություն է ցուցաբերում[28]: Շրջանի Կենտրոնական կոմիտեն մեծ աշխատանքներ է կատարել «Դրօշակ» և «Ռազմիկ» թերթերի հնարավորինս շատ օրինակներ Երկիր ուղարկելու գործում [29]:

1907 թ. Բուլղարիայի հայության թիվը 13.000 էր, որոնց մեջ դաշնակցականները՝ 1000-1200 հոգի[30]:

Դաշնակցական կառույցներ կային Ֆիլիպե, Սոֆիա, Ռուսճուք, Վառնա, Բուրգաս, Սլիվեն քաղաքներում[31]: Այսպիսով, 1905-1907 թվականներին ՀՅԴ Բուլղարիայի կառույցը բավական ուժեղ կազմակերպություն էր, որը հիմք էր տալիս արևմտահայ-ազգային ազատագրական պայքարում առավել լուրջ քայլեր ձեռնարկելու:

ՀՅԴ զինվորական դպրոցը

1906 թ. ՀՅԴ Բալկանների Շրջանային ժողովը որոշեց. «պարբերաբար Երկիր մտնելու համար ուժեր պատրաստել, կրթել փափաքողները զինուորական մարզանքով, տալ անոնց մասին տեսական եւ գործնական ծանօթութիւններ, ինչպէս նաեւ յեղափոխական գործունէութեան համար անհրաժեշտ գիտական, քիմիական ուսուցում: Այս նպատակին իրագործման համար հետեւեալ միջոցները խորհեցաւ ժողովը. Կեդրոնական Կոմիտէն փափաքող յարմարագոյն եւ վստահելի ընկերները մէկ տեղ հաւաքէ եւ մասնագէտներու միջոցաւ անոնց հարկ եղածը սորվեցնելէ ետքը, անոնց մէկ մասը ղրկէ Երկիր, իսկ միւս մասը ցրուէ Պալքանի մէջ, այս ձեռնարկէն անկախաբար՝ հիրաքանչիւր քաղաքի մէջ կազմուած զինավարժական խումբերու հարկ եղածը սորվեցնող, կրթիչներ ըլլալու նպատակաւ»[32]:

Զինվորական դպրոց-վարժարան բացելու այս որոշումը էապես բարձրացրեց ՀՅԴ Բուլղարիայի կառույցի դերակատարումը արևմտահայ ազգային-ազատագրական պայքարում:

Դպրոցի կազմակերպմանը նյութական մեծ աջակցություն էր ցույց տալու ՀՅԴ Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեն[33]:

ՀՅԴ Բուլղարիայի զինվորական դպրոցի կազմակերպման գործում մեծ է Անդրանիկ Օզանյանի ներդրումը: Ինչպես հայտնի է, Սասունի 1904 թ. ապստամբությունից հետո Անդրանիկն անցնում է Վասպուրական, ապա՝ Ատրպատական, Արևելյան Հայաստան, այնուհետև մեկնում է Ժնև, որտեղ կուսակցական մարմինների և ընկերների աջակցությամբ հետևում է իր քայքայված առողջության վերականգնմանը: Ռոստոմի կարգադրությամբ, մեծանուն հայդուկապետը Արևմտյան Եվրոպայում սկսեց զբաղվել ազատամարտի համար զենքի գնումներով: ՀՅԴ Արևմտյան Բյուրոն 1906 թ. Անդրանիկին գործուղեց Բուլղարիա՝ նույն առաքելությամբ, ինչպես նաև «մակեդոնացի յեղափոխականներու եւ պուլկար պետական շրջանակներու հետ Հ. Յ. Դաշնակցութեան կապերը ամրապնդելու համար»:

Անդրանիկին վստահվեց նաև ՀՅԴ Բուլղարիայի զինվորական դպրոց-վարժարանի կազմակերպման գործը: Դպրոցը սկզբնապես նախատեսված է եղել 12 հոգու համար: Բուլղարները ողջունել են, խոստացել են աջակցել, եթե հայերը բուլղար-թուրքական պատերազմի դեպքում ապստամբություն սկսեն Արևմտյան Հայաստանում: ՀՅ Դաշնակցության բարեկամ մակեդոնացի հեղափոխական Բորիս Սարաֆովի ջանքերով, զինվորական դպրոցը 1906 թ. տեղակայվեց Բուլղարիայի Դուբնիցայի շրջանի մի վանքի տարածքում՝ թուրք-բուլղարական սահմանի մոտ[34]: Բուլղարական բանակի կապիտան Պողոս Պողոսյանը (Պետրոս Սերեմճյանի հորեղբորորդին) ՀՅԴ-ի կողմից նշանակվեց դպրոցի տնօրեն, օգնականն էր Ռաշիդը (Նիկոլայ Պանով)[35]: 1907 թ. դպրոցն ուներ մոտ 50 աշակերտ, յուրաքանչյուրի վրա ամսական ծախսվում էր 100 ֆրանկ: Դասընթացները տևում էին 10 ամիս[36]: Դպրոցը դրականորեն ազդեց ՀՅԴ-ի մարտական ուժի որակի բարձրացման վրա: Դպրոցի սաներից և կամավորներից 1912 թ. կազմավորվեց Հայկական վաշտը՝ Անդրանիկի և Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ:

Անդրանիկի ներկայությունը Բուլղարիայում նաև վերաթարմացրեց Ռոստոմի գործունեության շրջանում այստեղ ծավալված հայ-մակեդոնական հարաբերությունները[37]: 1906 թ. հունիսին ՀՅԴ Արևմտյան Բյուրոյին Անդրանիկի գրած նամակից տեղեկանում ենք, որ նա հանդիպել է Բորիս Սարաֆովին, ով բուլղարական կառավարության առջև բարձրացրել է հայ-մակեդոնական հեղափոխական գործնական շփում և համագործակցություն ստեղծելու խնդիրը: Անդրանիկը հանդիպել է նաև Բուլղարիայի ռազմական նախարարին, որից ակնկալում էր զինական աջակցություն հայկական հեղափոխությանը[38]: Բուլղարական կառավարությունը խոստացել է Արևմտյան Հայաստանի համար Վիեննայում կամ այլուր պատվիրված զենքը բուլղարական մաքսատանը ընդունել առանց մաքսի, իբրև մակեդոնական հեղափոխության համար նախատեսված ապրանք, փոխադրել հայերի համար ցանկալի որևէ բուլղարական նավահանգիստ, այնտեղից էլ՝ ապահովությամբ տեղափոխել մեկ այլ ցանկալի նավահանգիստ: «Զինուորական նախարարութիւնը պատրաստ է մինչեւ 10.000 հոգինոց հայ եւ պուլկար խառն բանակ մը սպառազինել եւ զինուորական շտապի մը հետ դնել իմ հրամանատարութեան տակ, որպէսզի առաջին նաւերով կարող ըլլամ գրաւել սեւծովեան թրքական նաւահանգիստներէն մէկը կամ աւելին»,– գրում է Անդրանիկը[39]:

Ոգևորված բուլղարական կառավարության խոստումներից, Անդրանիկն առաջարկում է արագացնել Ընդհանուր ժողովի գումարումը: Ընդհանուր ժողովն արագացնելը կապված էր նրա հետ, որ Անդրանիկի պայմանավորվածությունները ՀՅԴ Բալկանների Կենտրոնական կոմիտեն լուրջ էր համարում՝ դրանց հաղորդելով անհետաձգելի հանգամանքի բնույթ, և պետք չէր հապաղել գործնական քայլերի անցնելու համար[40]: Այսպիսով, Բուլղարիայում զինվորական դպրոց-վարժարանի բացումը ոչ միայն ցույց էր տալիս ՀՅԴ կառույցի հզորությունը Բուլղարիայում, այլև վկայում էր հայ-բուլղարական բարձր մակարդակի համագործակցության մասին: Այդ համագործակցության շրջանակներում բուլղարական կառավարությունը օգնում էր հայ հեղափոխականներին զենք հասցնել Արևմտյան Հայաստան: Բացի նշվածներից, բազմաթիվ հայորդիներ (որոնց թվում՝ Գարեգին Նժդեհը) հնարավորություն ունեցան ռազմական գիտելիքները հարստացնել Բուլղարիայի Բարձրագույն Սպայական վարժարանում:

ՀՅԴ գործունեությունը Բուլղարիայում 1908-1914 թթ.

Բուլղարիայում ՀՅ Դաշնակցության 1908-1914 թթ. գործունեությունը լեցուն է իրարամերժ իրադարձություններով:

Այստեղ շարունակում էր հրատարակվել «Ռազմիկ» թերթը՝ Ռուբեն Զարդարյանի խմբագրությամբ: Սակայն, 1908 թ. հուլիսին, օսմանյան սահմանադրության հռչակումից հետո, Ռ. Զարդարյանը տեղափոխվեց Կ. Պոլիս՝ իբրև ՀՅԴ Կ. Պոլսի Պատասխանատու մարմնի անդամ: Այստեղ նա պետք է նաև խմբագրեր նորաբաց «Ազատամարտ» օրաթերթը: Բուլղարիայից Կ. Պոլիս անցավ նաև Բարթող Զորյանը (Ժիրայր)[41]: Ռ. Զարդարյանի Կ. Պոլիս մեկնելուց հետո, նյութական դժվարություններ ունեցող «Ռազմիկ»-ը առավել ծանր վիճակի մեջ հայտնվեց: «Ազատամարտ»-ի հրատարակումից հետո նրա կարևորությունն ընկավ: Ըստ էության, մինչ «Ազատամարտ»-ի հրատարակումը «Ռազմիկ»-ը Կ. Պոլսի վերաբերյալ տեղեկություններ հաղորդող, Կ. Պոլսում ամենաշատը տարածվող կարևոր թերթ էր համարվում: 1909 թ. դադարեցվում է «Ռազմիկ»-ի հրատարակումը[42]: Թերթի բոլոր տպագրական պարագաները տեղափոխվում են Կ. Պոլիս՝ «Ազատամարտ»-ի խմբագրություն[43]:

Օսմանյան սահմանադրության հռչակումը և թուրք-բուլղարական հարաբերությունների ջերմացումը բարդացրին Բուլղարիայում ՀՅ Դաշնակցության գործունեությունը: Նախընթաց ժամանակաշրջանի բարենպաստ պայմաններն անցյալում էին: Բուլղարական կառավարությունն սկսեց խոչընդոտներ և դժվարություններ հարուցել: Մասնավորապես, 25-30 գործուն դաշնակցականների սպառնում էին արտաքսել Բուլղարիայից[44]:

Օսմանյան սահմանադրության հռչակած ազատությունը մեծապես ոգևորեց Բուլղարիայում ապաստանած արևմտահայ գաղթականությանը՝ վերադառնալու հայրենի օջախներ: Պանդխտությունից Երկիր վերադառնալու շարժում սկսվեց: Ցավոք, հայրենադարձների ճնշող մեծամասնությունը հիասթափություն ապրեց, երբ վերադառնալուց հետո ոչ միայն տնտեսական ու քաղաքական ազատություն չտեսավ, այլև իրավիճակը երբեմն ավելի տխուր էր, քան աբդուլհամիդյան վարչակարգի դժնդակ օրերին[45]:

Չնայած նրան, որ Ադանայի 1909 թ. կոտորածների արձագանքները բացասական ազդեցություն ունեցան Բուլղարիայի դաշնակցական կառույցի վրա[46], այնտեղ շուտով կրկին բյուրեղացավ զինված պայքարի գաղափարը: Պատահական չէ, որ այդ օրերին նույնիսկ զենք էին տեղափոխում Երկիր[47]:

ՀՅ Դաշնակցության Բուլղարիայի կառույցի վրա օսմանյան սահմանադրության բացասական ազդեցությունն ավելի ակնառու դարձավ 1910-1912 թվականներին: ՀՅԴ Բալկանյան կոմիտեի 1910-1911 տարեշրջանի գործունեության տեղեկագրից պարզ է դառնում, որ նույնիսկ առաջ են եկել կուսակցության գործունեությունն աննպատակահարմար համարող տրամադրություններ: Սա հիմնականում պայմանավորված է եղել նրանով, որ որոշ դաշնակցականներ բավարար են համարել օսմանյան սահմանադրության հռչակած ազատությունը[48]: Այս շրջանում Բուլղարիայում որպես ՀՅԴ գործիչ աշխատել է Արշակ Իսահակյանը (Ջամալյան)[49]:

Բալկանյան պատերազմների տարիներին (1912-1913 թթ.)[50] կուսակցական-կազմակերպական կյանքը Բուլղարիայում զգալի չափով խաթարվեց: ՀՅԴ Բալկանների ԿԿ-ի դիրքորոշումն անշուշտ պետք է լիներ ի նպաստ Մակեդոնիայի և Թրակիայի ազատագրության: Պատահական չէր, որ. «բացի զինակոչի ենթարկուած պուլկարահպատակ հայ երիտասարդութենէն, կազմակերպուած էր նոյնպէս կամաւորական զօրագունդ»[51]:

Բալկանյան առաջին պատերազմին բուլղարական բանակի կազմում մասնակցեց նաև Հայկական կամավորական վաշտը (270 հոգի) վոյեվոդա Անդրանիկ Օզանյանի և պոդպորուչիկ[52] Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ: Բուլղարական կառավարությունը բարձր գնահատեց Հայկական վաշտի մարտական ծառայությունները. շատ ռազմիկներ ու սպաներ կառավարական պարգևների արժանացան:

Բալկանյան պատերազմին բուլղարական բանակի կազմում մասնակցելու նախաձեռնությունը թեև պաշտոնապես ազգային-եկեղեցական մարմինների ներքո առաջ եկավ, սակայն. «չէր կրնար այսուհանդերձ, անտես առնուիլ կուսակցական ղեկավարութենէն, մանաւանդ, որ հայկական գունդին գլուխ անցած էին ազգային հերոս Անդրանիկն ու պուլկար Ջին. Վարժարանէն շրջանաւարտ երիտասարդ սպայ Գարեգին Նժդեհը, մանաւանդ, որ շարժումը մեծ խանդավառութիւն յառաջացուցած էր ժողովրդական զանգուածներու մօտ»[53]:

Հարկ է նշել նաև, որ բուլղարական բանակի կազմում պատերազմին մասնակցելը չողջունեցին ինչպես ՀՅԴ Արևմտյան Բյուրոն, այնպես էլ Արևմտյան Հայաստանում ու Օսմանյան կայսրության այլ վայրերում ապրող հայությունը: Դա յուրատեսակ վրեժի պատրվակ էր համարվում թուրքական խուժանի կողմից հերթական նախճիրը գործադրելու համար: «Կը հասկնանք ձեզ թելադրող զգացումները, սակայն Երկրի հայ ժողովուրդի ներկայ տագնապալի կացութիւնը ստիպողաբար կը թելադրէ զգոյշ մնալ այնպիսի քայլերէ, որոնք կրնան գրգռել իսլամ ժողովուրդը: Կամաւոր գրուող մեր հայրենակիցները աւելի օգտակար գործ ըրած կ'ըլլան եթէ երթան մասնակցելու Երկրի մէջ ինքնապաշտպանութեան գործին»,- ասված է ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի՝ Բալկանյան ԿԿ-ին ուղարկած նամակում[54]: Թուրք-բուլղարական պատերազմում բուլղարահայերի կամավորությանը վերապահումով է մոտենում նաև Բարթող Զորյանը, որը ժամանակին գործել էր Բուլղարիայում և այդ օրերին Կ. Պոլսում էր կուսակցական պատասխանատու հանգամանքով: Նա ընկերներին կոչ է անում խնայել իրենց անունը և թուրքերին ավելորդ չգրգռել Երկրում հայերի դեմ, հատկապես, որ դիմացը շատ չնչին ակնկալիք կարող էր լինել[55]:

Մյուս կողմից էլ «ցնորք կը համարուէր՝ հայութեան ի սպառ բնաջնջումը հետապնդող Թուրքիայէն ակնկալել որեւէ բարեկարգում կամ բարիք»[56]:

Բալկանյան պատերազմների տարիներին բավական աշխույժ էին ՀՅԴ Բուլղարիայի կանանց և բարեսիրական կազմակերպությունները: Օրինակ՝

Ռուսճուքի կանանց «Մարո» խումբը գործունեության կարճ ժամանակաընթացքում 800-900 ֆրանկի օգնություն է ապահովել: Եռանդուն են եղել նաև Սոֆիայի Կարմիր խաչի ընկերուհիները[57]:

1913 թ. հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 2-ը գումարված ՀՅԴ Բալկանյան հերթական Շրջանային ժողովը, հաշվի առնելով օսմանյան կառավարության՝ հայերին հալածելու հանգամանքը, առաջարկում է կուսակցության Արևմտյան Բյուրոյի կազմը տեղափոխել արտասահման և ավելի ազատ ու անկաշկանդ կազմակերպել ինքնապաշտպանության գործը[58]:

Հետաքրքիր է Բալկանյան Շրջանային Ժողովի վերաբերմունքը 1914 թ. հուլիս-օգոստոսին տեղի ունեցած ՀՅԴ 8-րդ Ընդհանուր ժողովի օրակարգին[59]: Ժողովը կոչ էր անում մի կողմից ամրապնդել սահանադրական վարչակարգը Օսմանյան կայսրությունում, հարկ եղած դեպքում չբացառելով նաև անվեգալ գործողությունները, մյուս կողմից հորդորում էր թշնամական դիրք չբռնել Ռուսաստանի հանդեպ՝ ռուսներին համոզելով, որ հայ ժողովուրդը հակառուս ձգտումներ չունի և հայաշատ, ու շեն Հայաստանի գոյությունը բխում է Ռուսաստանի շահերից[60]:

Ինչպես տեսնում ենք, Առաջին աշխարհամարտին նախորդող ժամանակաշրջանում ՀՅԴ Բուլղարիայի կազմակերպությունը մի կողմից ներքաշված էր Բալկանյան պատերազմների թոհուբոհի մեջ, որն ինքնին հակասական տրամադրություններ էր ստեղծում ինչպես հայության տարբեր հատվածների միջև, այնպես էլ կուսակցության ներսում, մյուս կողմից՝ վերահաս աշխարհամարտի վտանգն իր հնարավոր սարսափելի հետևանքներով Բուլղարիայի դաշնակցականներին դրդում էր չեզոքության մղել կուսակցության ղեկավար մարմիններին:

ՀՅԴ գործունեությունը Բուլղարիայում Առաջին աշխարհամարտի տարիներին

Առաջին աշխարհամարտը ծանր պարտականություններ դրեց ՀՅԴ բալկանյան կառույցի վրա: Հերթական անգամ, Բուլղարիան, աներևակայելի դժվարություններ հաղթահարելով, կապող օղակ հանդիսացավ Կ. Պոլսի, Երկրի, Կովկասի կազմակերպությունների և արտասահմանի կուսակցական մարմինների միջև:

Պատերազմի սկսվելուն պես ՀՅԴ Բուլղարիայի կազմակերպության շատ անդամներ ու համակիրներ անցան Անդրկովկաս և համալրեցին հայկական կամավորական ջոկատները: Քանի որ Բալկաններում թուրքական լրտեսական ցանցը բավական տարածված էր, այս գործը կաշկանդող զգուշություն էր պահանջում: ՀՅԴ Բալկանյան Կենտրոնական կոմիտեն կարողացավ համոզել Բուլղարիայի և Ռումինիայի կառավարություններին և հաջողեցնել հազարից ավելի կամավորներ ուղարկել Կովկաս[61]:

1914 թ. դեկտեմբերին ՀՅԴ Բալկանյան Կենտրոնական կոմիտեն կոչ է անում Բալկանների հայությանը՝ վեր կանգնել «իր գաղութային սահմանափակ մտահոգութիւններուն շրջանակէն» և տեսնել հայությանն սպառնացող ահեղ աղետը[62]:

Բուլղարիայի հայկական կամավորական վաշտը

1915 թ. փետրվարին տեղի ունեցած ՀՅԴ Բալկանյան արտահերթ Շրջանային Ժողովը որոշում է սահմանափակել կամավորական շարժմանն իր մասնակցությունը և չսպառել հայության բոլոր ուժերը՝ պատճառաբանելով, որ դա ավելի էր վտանգում արևմտահայության կացությունը, քանի որ ռուսները կամավորական շարժմանը պատշաճ չեն աջակցում[63]: Փաստորեն, եթե սկզբնական շրջանում Բուլղարիայում ոգևորվեցին ռուսական կողմի տված խոստումներից, ապա պատերազմի ընթացքն ստիպեց վերանայելու նախկին ոգևորությունը և վերադասավորելու ունեցած հնարավորությունների սպառումը:

Պատերազմի տարիներին ՀՅԴ Բալկանների Կենտրոնական կոմիտեի մյուս կարևոր ձեռնարկը Սոֆիայում «Հայաստան» թերթի լույս ընծայումն էր, որը ոչ միայն վեր հանեց շրջանի հայությանը հուզող խնդիրները[64], այլև անփոխարինելի դեր կատարեց արտերկրի հայությանը բոլոր կարևոր իրադարձությունների մասին պարբերաբար տեղեկացնելու գործում, որոնք տագնապալի այդ օրերին տեղի էին ունենում Կովկասում, Կ. Պոլսում ու Արևմտյան Հայաստանում[65]:

ՀՅԴ Բուլղարիայի կազմակերպությունը և Հայաստանի Առաջին Հանրապետությունը

Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումից անմիջապես հետո Դաշնակցության Բուլղարիայի կազմակերպության գործունեության գլխավոր օրակարգը կրկին հայրենիքն էր:

1918 թ. դեկտեմբերի 1-ին տեղի ունեցած ՀՅԴ Բուլղարիայի հերթական Շրջանային Ժողովն առաջարկում է «Ստեղծել անկախ Հայաստան մը, ազգային ժողովի մը գերիշխանութեամբ, որ լինի իր ձեռով Ռամկավարական Հանրապետութիւն եւ որուն հողային տարածութիւնը պարփակէ պատմական Հայաստանը իր երեք հատուածներով – Ռուսական, Պարսկական եւ Թրքական (Փոքր Հայքով եւ Կիլիկիայով միասին)»[66]: Միաժամանակ, ժողովը գտնում էր, որ հաշվի առնելով ուժերի հարաբերակցությունը և զինադադարից հետո օսմանյան զորքի ներկայությունն Արևմտյան Հայաստանում, դաշնակից ուժերը պետք է օգնեն ազատագրելու այն: Շատ կարևոր

էր նաև Հայաստանում բոլոր քաղաքական ուժերի և հասարակական հոսանքների համագործակցությունն ու նրանցից որևէ մեկին չանտեսելը[67]:

Շրջանային Ժողովն անդրադառնում է նաև Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին և իրագործողներին պատժելու խնդրին: Այս կապակցությամբ հստակ էր ժողովի կայացրած որոշումը. «Դաշնակցութիւնը պէտք է նշանակէ մասնաւոր մարմին մը, որուն նպատակը պիտի ըլլայ ճշդել բոլոր հեղինակները բոլոր այն ոճրագործութեանց, որոնց զոհ գնաց հայ ժողովուրդը: Անհրաժեշտ քննութենէ մը վերջ կուսակցութիւնը պարտաւոր է առանց այլեւայլի, հնարաւոր ամէն միջոցներով տնօրինել անոնց արժանի պատիժը»[68]: Ավելի ուշ, 1919 թ. աշնանը Երևանում գումարված ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովը համապատասխան որոշում կայացրեց այս մասին: Պետք է ընդգծել նաև Առաջին աշխարհամարտի ընթացքում օսմանյան կառավարության կողմից հայ ժողովրդին հասցված նյութական վնասի հատուցման մասին ժողովի պնդումը[69]:

1919 թ. հունիսի 2-ին տեղի է ունենում Բալկանների արտակարգ Շրջանային Ժողովը, որը քննում է ՀՅԴ 9-րդ Ընդհանուրն Ժողովի օրակարգը:

Շրջանային Ժողովը 9-րդ Ընդհանուր Ժողովին առաջարկում է մինչև Սահմանադիր Ժողովի գումարումը Հայաստանում՝ «ճանչնալ Կովկասեան հանրապետութիւնը իբրեւ կորիզ Հայաստանի»[70]: Առաջարկվում է Սահմանադիր Ժողովը գումարել ներգաղթի կազմակերպումից հետո, իսկ մինչ այդ, կառավարության կազմի մեջ ընդգրկել նաև արևմտահայ հակառակ հոսանքների ներկայացուցիչների՝ նրանց պահանջներին զիջումներ կատարելու համար[71]:

Սահմանադիր Ժողովի ընտրության համար առաջարկվում է ընտրական հավասար իրավունք 20 տարին լրացած բոլոր քաղաքացիների համար[72]: Ընդհանուր ժողովին առաջարկվում է լրջորեն մոտենալ հայրենադարձության կազմակերպմանը, հողային հարցին, տնտեսության վերականգնմանը[73]:

Այս ժողովը որոշեց վերահրատարակել «Հայաստան» թերթը: Պարբերականը պետք է ունենար կուսակցական, հայ կյանքի, միջազգային, տեղական, մամուլի տեսության, լուրերի, մշակույթի բաժիններ[74]: Մինչև 9-րդ Ընդհանուր ժողովի ավարտը թերթի խմբագիրը լինելու էր Հովհաննես Դևեճյանը (Արմեն Սևան)[75]: «Հայաստան» թերթի հրատարակումը շարունակելու վերաբերյալ որոշում կայացրեց նաև 1920 թ. օգոստոսի 3-13-ը Սոֆիայում տեղի ունեցած ՀՅԴ Բալկանների 14-րդ Շրջանային Ժողովը[76]:

Ինչպես տեսնում ենք, 1918-1920 թթ. ՀՅԴ Բուլղարիայի կազմակերպությունը գործում էր Հայաստանի Հանրապետությունը կայացնելու, հայ գաղթականներին հայրենիք տեղափոխելու, ցեղասպանության մեղավորներին պատժելու, հայ ժողովրդին փոխհատուցելու խնդիրները լուծելու ակնկալիքով:

ՀՅԴ Բուլղարիայի կազմակերպության գործունեությունը 1921-1924 թթ.

Հանրապետության անկումից հետո նախկին ղեկավարներից մի քանիսը՝ Գարեգին Նժդեհ, Ռուբեն Դարբինյան, Սիմոն Վրացյան, Ալեքսանդր Խատիսյան և ուրիշներ, ժամանակավորապես հաստատվեցին Բուլղարիայում: 1921-1925 թթ. ՀՅԴ Բուլղարիայի կազմակերպության հիմնական նպատակը տեղի գաղութի վերակազմակերպումն ու Հայկական հարցի հետապնդումն էր:

1921 թ. օգոստոսի 16-22-ին տեղի ունեցած ՀՅԴ Բալկանների 15-րդ Շրջանային ժողովի եզրակացությամբ՝ «Հայաստան» թերթը գտնվել է իր բարձրության վրա[77]: Այն Սոֆիայից տեղափոխվում է Ֆիլիպե: Չնայած ֆինանսական միջոցների սղությանը և շրջանների անբավարար աջակցությանը, թերթը կարողանում է լուրջ քարոզչություն իրականացնել[78]: Օննիկ Վարդանյանի խմբագրած թերթը մինչև 1923 թ. հրատարակվում է եռօրյա պարբերականությամբ: Դրանից հետո, չնայած նյութական դժվարություններին, որոշվում է «Հայաստան»-ը հրատարակել գոնե որպես շաբաթաթերթ՝ հետագայում օրաթերթի վերածվելու հարցը պահելով օրակարգում: Այս հարցը մեծապես պայմանավորված էր Կ. Պոլսում դաշնակցական թերթ պահելու հնարավորությամբ[79]: Կ. Պոլիսը 1922 թ. վերջին քեմալականների կողմից գրավվելուց հետո այնտեղ այս հարցը գործնականում վերացավ: Նորից «Հայաստան» շաբաթաթերթի խմբագիր դարձավ Հովհաննես Դևեճյանը[80]: Պարբերականը շարունակում էր ներկայացնել ոչ միայն հայ ազգային, այլև բուլղարական, ինչպես նաև միջազգային ընկերվարական կյանքը:

Բուլղարիայի դաշնակցական կազմակերպությունը մեծապես օգտակար է եղել Սոֆիայում հիմնված ՀՀ հյուպատոսարանին[81]: Վերջինս ինչպես առաջին հանրապետության օրերին, այնպես էլ նրա անկումից հետո որոշ ժամանակ լրջորեն զբաղված էր Բուլղարիայում ապաստանած ՀՀ քաղաքացիների և Մեծ եղեռնից մազապուրծ արևմտահայերի հարցերով: Հայտնի է, որ 1921 թ. փետրվարյան ապստամբությունից հետո մեծաթիվ մտավորականություն ստիպված տարագրվեց Պարսկաստան: ՀՅԴ Բուլղարիայի կազմակերպությունն անտարբեր չմնաց նրանց ճակատագրի հանդեպ: Ֆիլիպեի կոմիտեն տեղի Հայ Օգնության Միության հետ 30.000 լևայի օգնություն ցույց տվեց Թավրիզում ապաստանած հայ մտավորականներին, ովքեր այդ օրերին գործնականում զրկված էին ապրուստի տարրական հնարավորություններից[82]:

ՀՅԴ Բուլղարիայի 16-րդ Շրջանային ժողովը (1922 թ. հունիս-հուլիս) յուրաքանչյուր կոմիտեի վրա բարոյական պարտավորություն է դրել ՀՀ-ից գաղթած ընկերների համար գործ գտնելու[83]: Հարկ է նշել, որ դա հաջողվել է որոշ չափով իրականացնել[84]:

Կարևորելով Հայաստանի անկախության վերականգնման խնդիրը՝ Շրջանային Ժողովը քննարկում է նաև ազգային մյուս կուսակցությունների հետ համագործակցության հարցը, թեև մյուսները պատրաստ չէին դրան: Այդուհանդերձ, Կենտրոնական կոմիտեն անհրաժեշտության դեպքում պատրաստ է եղել համագործակցության, անշուշտ կուսակցության ծրագրից բխող խնդիրների լուծման շուրջ միայն[85]:

Հայաստանի անկախության վերականգնման հիմքում Շրջանային ժողովը դնում է Սևրի պայմանագիրը: Այդ կապակցությամբ, առաջիկայում գումարվելիք

ՀՅԴ 10-րդ Ընդհանուր Ժողովին հետևյալ բանաձևն է հղվում. «Ընդունելով միանգամայն, որ հայ ժողովուրդի գոյութեան եւ զարգացման միակ պայմանը անկախութիւնն է, որ այդ անկախութիւնը կարելի եւ հնարաւոր է միայն հայ ժողովուրդի երկու հատուածներու ամբողջացումով մէկ հողամասի վրայ, որ Սեւրի դաշնագիրը հանդիսաւորապէս նուիրագործած է արդէն անոր Միացեալ եւ Անկախ գոյութեան անհրաժեշտութիւնը, որ այդ դաշնագիրը թէեւ քաղաքական արտաքին պատճառներով ցարդ չէ գործադրուած, եւ սակայն ուրիշ դաշնագրով մըն ալ վերջնականապէս չէ փոխարինուած, Շրջանային Ժողովը կ'որոշէ առաջարկել 10-րդ Ընդհանուր Ժողովին շարունակել հայ ժողովուրդի դատի լուծումը իբրեւ հիմք ունենալով Սեւրի դաշնագիրը՝ ի հարկին ընդունելով պարտադրուած զիջումները»[86]: Միաժամանակ առաջարկություն է արվում պահանջել մեր պատվիրակությունից՝ չընդդիմանալ Հայկական տուն ստեղծելու եվրոպական պետությունների առաջարկած գաղափարին, միայն թե հնարավոր ամեն ինչ անել, որ «այդ տունը ըլլայ ներկայ Հայաստանի սահմանին մօտ նահանգներուն մէջ»[87]: Անկախության գաղափարին հավատարիմ մնալու սկզբունքը պահպանվում է նաև հաջորդ Շրջանային ժողովում[88]:

Հետաքրքիր է Խորհրդային Հայաստանի հանդեպ որդեգրելիք դիրքորոշման վերաբերյալ ՀՅԴ Բուլղարիայի կազմակերպության բարձրագույն ժողովի մոտեցումը. «Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետութիւնը, անկախ անոր պարտադրուած ներկայ ռեժիմէն, է եւ կը մնայ միակ հիմքը ապագայ Միացեալ Հայաստանի, որ Հայկական Հարցի վերջնական լուծումը մեծ չափով կապուած է նաեւ Ռուսաստանի հետ, ընդունիլ Հայաստանի խորհրդային ռեժիմի ժամանակաւոր գոյութիւնը իբրեւ փաստ եւ ամէն կերպ աշխատիլ համաձայնութեան գալ Խորհրդային Ռուսաստանի հետ, այդ միջոցով ապահովելու համար Միացեալ եւ Անկախ Հայաստանի իրագործումը»[89]: Ինչպես տեսնում ենք, խորհրդային իշխանությունների մերժած Դաշնակցության արտասահմանյան կազմակերպությունները անտեսում էին իրենց հանդեպ ցուցաբերված բացասական վերաբերմունքը և ջանքեր գործադրում Խորհրդային Հայաստանի շենացման համար:

1923 թ. տեղի ունեցած հաջորդ՝ 17-րդ Շրջանային Ժողովը նույնպես հորդորում է՝ հաշվի առնելով, որ Խորհրդային Հայաստանը հանդիսանալու է ապագա անկախ Հայաստանի հիմքը, ամեն ինչ անել հանուն Խորհրդային Հայաստանի տնտեսական վերաշինության[90]: Նույն որոշումն ընդունվում է նաև 1924 թ. ապրիլ-մայիսին գումարված 18-րդ Շրջանային ժողովում[91]:

ՀՅԴ Բալկանների 17-րդ Շրջանային ժողովը հանձնարարում է ԿԿ-ին՝ Բուլղարիայում գործող հայկական մյուս կուսակցությունների հետ համախորհուրդ ստեղծել Բուլղարահայ ազգային կենտրոնական վարչություն՝ Բուլղարիայի օրենքներին համահունչ[92]: Ցավոք, դա չի հաջողվում մյուս կուսակցությունների որդեգրած ապակառուցողական կեցվածքի պատճառով[93], որը պայմանավորված էր Խորհրդային Միության թելադրանքով:

Բուլղարիայի ներքաղաքական կյանքում Դաշնակցությունը չեզոքություն է պահպանում՝ չարգելելով, որ անհատ ընկերներ առնչություն ունենան հակադաշնակցական քաղաքականություն չունեցող կուսակցությունների հետ[94]:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը Բուլղարիայում շարունակեց գործել նաև 1924 թվականից հետո: Մինչև Երկրորդ աշխարհամարտը բավական աշխույժ աշխատանքներ են իրականացվել: Սակայն երբ խորհրդային բանակը 1944 թ. աշնանը մուտք գործեց Բուլղարիա, տեղի կառույցն անցավ ընդհատակյա գործունեության: Միայն 1990 թվականից հետո, երբ Բուլղարիայում կործանվեց ամբողջատիրական վարչակարգը, Հայ Յեղափոխական Դաշնակցությունը գործունեությունը վերականգնելու հնարավորություն ստացավ:

Այսպիսով, 1894-1924 թվականներին Հայ Յեղափոխական Դաշնակցությունը բավական լայնածավալ գործունեություն իրականացրեց Բուլղարիայում: Ստեղծված նպաստավոր պայմանները հաշվի առնելով՝ կուսակցությունն օգտագործեց բազում հնարավորություններ ուժեղացնելու արևմտահայ ազգային-ազատագրական պայքարը: Արևմտյան Հայաստան զենք-զինամթերք, մարտական և կազմակերպական գործիչներ տեղափոխելու առումով Բուլղարիայի դաշնակցական կազմակերպության դերն առավել քան կարևոր էր: Դաշնակցության Բուլղարիայի կառույցի ջանքերով մեծ օգնություն ցուցաբերվեց ցեղասպանության հետևանքով այնտեղ ապաստանած հայ գաղթականությանը: Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին մեծ էր պետականության կայացմանը ցուցաբերված աջակցությունը: Առաջին Հանրապետության անկումից հետո էլ հատկապես ՀՅԴ շնորհիվ Բուլղարիայի հայ գաղութը կարողացավ ինքնակազմակերպվել և դիմագրավել նոր մարտահրավերներին: ■

Հղումներ

1 Վահան Մազմանեան, Հ. Յ. Դաշնակցութեան ծագումը Բուլգարիայում, «Դրօշակ» ամսագիր, Փարիզ, 1930, թիւ 11-12, էջ 316:

2 Մինչև Գարեգին Խաժակի Բուլղարիա ժամանելը, անձնական գործերի բերումով Վառնայում էր հաստատվել կարնեցի դաշնակցական Անտոն Գոշը (Բոյաճյան), ով սկսած 1892-1893 թվականներից «Դրօշակ»-ի համարներն էր բաժանում Յամբոլ, Սլիվեն, Ֆիլիպե (հետագայում՝ Պլովդիվ), Վառնա քաղաքներում (տես Արմէն, Ընկեր Աս. Պետիկեանի յուշերը. Հ. Յ. Դաշնակցութիւնը Պալքաններու մէջ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1932, նոյեմբեր, էջ 111): Հետագայում՝ 1905 թ. Անտոն Գոշի կատարելագործած ռումբով իրականացվեց Արդուլ Համիդ Բ-ի մահափորձը:

3 Վահան Մազմանեան, նշվ. աշխ., էջ 317:

4 Նույն տեղում:

5 Վարդոն Բուլղարիա էր անցել Իսաք Արվախի անունով մի հրեայի անցագրով: Թերևս դրանով է պայմանավորված, որ կուսակցական գրականության մեջ երբեմն նրան հանդիպում ենք Արվախի կեղծանունով:

6 Ստեղծումից մինչև առաջին աշխարհամարտի ավարտը ՀՅԴ Բալկանյան շրջանի մեջ ներառվել են Բուլղարիան, Ռումինիան և Սերբիան: 1920 թ. Ռումինիան առանձնացել է Բալկաններից և կազմել ՀՅԴ Կարպատների շրջանը: Այդ ընթացքում Բալկաններից առանձնացել է նաև Սերբիայի փոքրիկ կառույցը:

7 Արմէն, Ընկեր Աս. Պետիկեանի յուշերը. Հ. Յ. Դաշնակցութիւնը Պալքաններու մէջ, «Հայրենիք», 1933, հունվար, էջ 136, հմմտ. Վահան Մազմանեան, Պուլկարահայ գաղութը 1896-ին եւ յեղափոխական գործիչները, «Հայրենիք», 1940, հուլիս, էջ 79:

[8] Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Բ. հատոր (Բ. տպագրութիւն, յաւելուածով), Պէյրութ, 1985, էջ 153:
[9] Նույն տեղում, էջ 154:
[10] Պերճուհի Պարտիզպանյան-Բարսեղյանը (1886-1940) երիտասարդ տարիքից ընդգրկվել է հայ ազգային-ազատագրական շարժման մեջ: Ամուսնացել է ականավոր հեղափոխական Սարգիս Բարսեղյանի (Պողոս Օդաբաշյան) հետ, ով 1915 թ. ձերբակալվեց Կ. Պոլսում ու այնուհետև նահատակվեց: Պերճուհի Բարսեղյանը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին եղել է խորհրդարանի պատգամավոր (առավել մանրամասն տես Խաչատուր Ստեփանյան, Կանայք Առաջին Հանրապետության խորհրդարանում, Նոր Ջուղա, 2018, էջ 36-44):
[11] Պերճուհի Բարսեղեան, Ռոստոմը Պուլկարիոյ մէջ, «Դրօշակ», 1929, թիւ 3, էջ 58:
[12] Արմէն, Ընկեր Աս. Պետիկեանի յուշերը. Հ. Յ. Դաշնակցութիւնը Պալքաններու մէջ, «Հայրենիք», 1933, ապրիլ, էջ 120:
[13] Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Դ. հատոր, Պէյրութ, 1982, էջ 160:
[14] Միքայէլ Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ա. հատոր, Պարիզ, 1932, էջ 260:
[15] Արմէն, Ընկեր Աս. Պետիկեանի յուշերը. Հ. Յ. Դաշնակցութիւնը Պալքաններու մէջ, «Հայրենիք», 1932, նոյեմբեր, էջ 117:
[16] Ռոստոմը վերադարձել էր Կովկաս և լծվել Հայ առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման 1903 թ. հունիսի 12-ի տխրահռչակ օրենքի դեմ պայքարին:
[17] Հրաչ Տասնապետեան, Պատմութիւն հայ յեղափոխական շարժման եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Պէյրութ, 2009, էջ 315:
[18] Նիւթեր …, Բ. հատոր, էջ 112-113:
[19] Աւետիս Ահարոնեան, Քրիստափոր Միքայէլեան, Պոսթըն, 1926, էջ 162:
[20] Նիւթեր …, Բ. հատոր, էջ 114:
[21] Հրաչ Տասնապետեան, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. Ժողով (1890-1924), Աթէնք, 1988, էջ 84:
[22] Քրիստափորի և Վռամի աճյունները հողին են հանձնվում Սոֆիայի քաղաքային գերեզմանատանը: Նրանց շիրիմները մշտապես եղել են Բուլղարիայի դաշնակցական մարմինների և ընկերների հոգածության ներքո:
[23] Ամենածանր պատիժը ահաբեկումն էր:
[24] Նիւթեր ..., Դ. հատոր, էջ 163-164:
[25] Նիւթեր ..., Գ. հատոր, Բ. տպագրութիւն, Պէյրութ, 2007, էջ 311:
[26] Արմէն, Ընկեր Աս. Պետիկեանի յուշերը. Հ. Յ. Դաշնակցութիւնը Պալքաններու մէջ, «Հայրենիք», 1933, մարտ, էջ 111:
[27] Նիւթեր …, Դ. հատոր, էջ 130:
[28] Նույն տեղում, էջ 160:
[29] Նույն տեղում, էջ 134:
[30] Նիւթեր ..., Գ. հատոր, էջ 52:
[31] Խորհրդապահական նկատառումներով, այս քաղաքներից մի քանիսը Դաշնակցության մարմինների ու գործիչների փաստաթղթերում և գրություններում հիշատակվում են նաև կեղծանուններով՝ Ֆիլիպե – Աստղիկ, Մակեդոն, Սոֆիա – Լեռնամոտ, Վիտոշ, Վարդանոց, Վարդենիք, Ռուսճուք – Քարափ, Սլիվեն – Հովիտ:
[32] Նիւթեր ..., Դ. հատոր, էջ 161:
[33] Նույն տեղում:
[34] Միքայէլ Վարանդեան, նշվ. աշխ., էջ 260:
[35] Օնիկ Մխիթարեան, Հ. Յ. Դաշնակցութեան զինուորական դպրոցը (ընկեր Մարտիկ Յովհաննէսեանի յուշերը), «Հայրենիք», 1931, փետրուար, էջ 41:
[36] Նիւթեր ..., Գ. հատոր, էջ 60:
[37] Նիւթեր ..., Դ. հատոր, էջ 132:
[38] Նիւթեր ..., Ե. հատոր, Պէյրութ, 2007, էջ 369:
[39] Նույն տեղում, էջ 370:
[40] Նույն տեղում, էջ 372:
[41] Նիւթեր …, Զ. հատոր, Պէյրութ, 2010, էջ 481:
[42] Ռ. Քարդարյանի Կ. Պոլիս մեկնելուց հետո մինչև փակվելը, «Ռազմիկ»-ի խմբագիրը Տաճատ Կամսարականն էր. տես Արտաշէս Տէր Խաչատուրեան, Հ. Յ. Դաշնակցութեան 100-ամեայ մամուլը (1890-1990), Պէյրութ. 1990, էջ 71:
[43] Նիւթեր …, Զ. հատոր, էջ 487:
[44] Նույն տեղում, էջ 482:
[45] Նիւթեր …, Ը. հատոր, Պէյրութ, 2011, էջ 414:
[46] Նույն տեղում, էջ 415:
[47] Նույն տեղում, էջ 416:
[48] Նույն տեղում, էջ 431:
[49] Նույն տեղում, էջ 432:
[50] Առաջին Բալկանյան պատերազմը (1912թ. հոկտեմբեր – 1913թ. մայիս), տեղի ունեցավ Բալկանյան դաշինքի (Բուլղարիա, Հունաստան, Սերբիա, Չեռնոգորիա) և Օսմանյան կայսրության միջև ու ավարտվեց վերջինիս պարտությամբ: Լոնդոնի պայմանագրով՝ թուրքերը կորցրին իրենց բոլոր եվրոպական տիրույթները՝ բացառությամբ Կ. Պոլսի ու Արևելյան Թրակիայի մի փոքր մասի: Երկրորդ Բալկանյան պատերազմը (1913 թ. հունիս – օգոստոս) տեղի ունեցավ մի կողմից՝ Բուլղարիայի, մյուս կողմից՝ Սերբիայի և Հունաստանի միջև, որոնց միացել էին Չեռնոգորիան և Օսմանյան կայսրությունը: Պատերազմն ավարտվեց Բուլղարիայի պարտությամբ, որը Բուխարեստի պայմանագրով Ռումինիային զիջեց Հարավային Դոբրուջան, թուրքերին՝ Հարավային Մակեդոնիան ու Արևմտյան Թրակիայի մի մասը, Սերբիային՝ Հյուսիսային Մակեդոնիան:
[51] Նիւթեր …, Ժ. հատոր, Պէյրութ, 2014, էջ 440:
[52] «Վոյեվոդան» միջին, իսկ «պոդպորուչիկը» կրտսեր սպայական աստիճաններ էին բուլղարական բանակում:
[53] Նիւթեր …, Ժ. հատոր, Պէյրութ, 2014, էջ 440:
[54] Նույն տեղում, էջ 452:
[55] Նույն տեղում, էջ 452-453:
[56] Նույն տեղում, էջ 440:
[57] Նույն տեղում, էջ 442:
[58] Նույն տեղում, էջ 447:
[59] ՀՅԴ 8-րդ Ընդհանուր Ժողովում Բալկանների պատգամավոր Վարդազար Դաքեյանը հենց ժողովի գումարման վայրում՝ Կարինում ձերբակալվում է թուրքական իշխանությունների կողմից: Ձերբակալության պաշտոնական պատճառաբանությունը պարսկական անցագիր ունենալն էր: Կարինից նա տեղափոխվում է Խարբերդի բանտ, որտեղ նրան սպանում են. տես Արմէն, Ընկեր Աս. Պետիկեանի յուշերը. Հ. Յ. Դաշնակցութիւնը Պալքաններու մէջ, «Հայրենիք», 1933, մարտ, էջ 111-112:
[60] Նիւթեր …, ԺԱ. հատոր, Պէյրութ, 2015, էջ 348-349:
[61] Նույն տեղում, էջ 344:
[62] Նույն տեղում, էջ 362:
[63] Նույն տեղում, էջ 368:
[64] Նույն տեղում, էջ 371:
[65] Նույն տեղում, էջ 344:
[66] ՀՅԴ Արխիւ, Ե. մաս, թղթածրար թիւ 1161, փաստաթուղթ թիւ 34, թ. 2-3:
[67] Նույն տեղում, թ. 3:
[68] Նույն տեղում:
[69] ՀՅԴ Արխիւ, Ե. մաս, թղթածրար թիւ 1161, փաստաթուղթ թիւ 34, թերթ 3-4:
[70] Նույն տեղում, թղթածրար թիւ 1162ա, փաստաթուղթ թիւ 15, թ. 1:
[71] Նույն տեղում:
[72] Նույն տեղում, թ. 2:
[73] Նույն տեղում, թ. 3-5:
[74] Նույն տեղում, փաստաթուղթ թիւ 16, թ. 8:
[75] Նույն տեղում, թ. 12:
[76] ՀՅԴ Արխիւ, Ե. մաս, թղթածրար թիւ 1163, փաստաթուղթ թիւ 36, թ. 26-27:
[77] Նույն տեղում, թղթածրար թիւ 1164, փաստաթուղթ թիւ 39, թ. 11:
[78] Նույն տեղում, թղթածրար թիւ 1165, փաստաթուղթ թիւ 80, թ. 2:
[79] Նույն տեղում, թղթածրար թիւ 1166, փաստաթուղթ թիւ 199, թ. 1:
[80] Նույն տեղում թ. 4:
[81] Նույն տեղում, թղթածրար թիւ 1165, փաստաթուղթ թիւ 80, թ. 4:
[82] Նույն տեղում, թ. 6
[83] Նույն տեղում, թ. 15:
[84] Նույն տեղում, թղթածրար թիւ 1167, փաստաթուղթ թիւ 59, թ. 1:
[85] Նույն տեղում, թղթածրար թիւ 1165, փաստաթուղթ թիւ 80, թ. 12:
[86] Նույն տեղում, թ. 23:
[87] Նույն տեղում:
[88] Նույն տեղում, թղթածրար թիւ 1166, փաստաթուղթ թիւ 199, թ. 4
[89] Նույն տեղում, թղթածրար թիւ 1165, փաստաթուղթ թիւ 80, թ. 23:
[90] Նույն տեղում, թղթածրար թիւ 1166, փաստաթուղթ թիւ 199, թ. 5:
[91] Նույն տեղում, թղթածրար թիւ 1167, փաստաթուղթ թիւ 87, թ. 2
[92] Նույն տեղում, թղթածրար թիւ 1166, փաստաթուղթ թիւ 199, թ. 3:
[93] Նույն տեղում, թղթածրար թիւ 1167, փաստաթուղթ թիւ 59, թ. 2-ի շրջերես:
[94] Նույն տեղում, թղթածրար թիւ 1166, փաստաթուղթ թիւ 199, թ. 3:

Տղամարդ հայը. Ռուբէն Յովսէփեան (ծննդեան 85-ամեակի առիթով)

Մովսէս Ծիրանի
Արվեստաբանութեան դոկտոր

Սիրելի ընթերցող.

Այնքան ալ դիւրին չէ յուշեր գրել գրողի մը մասին, որ դիւրին կը գրէ, բայց «դժուար» եւ քիչ կ'արտայայտուի: Աւելին՝ այնքան ալ դիւրին չէ գրել ընկերոջ մը մասին, որուն հետ ոչ միայն ոչ մէկ տարակարծութիւն ունեցած ես, ըլլայ ազգային, մարդկային թէ գաղափարական գետնի վրայ, այլ նաեւ՝ այնպիսի գաղտնիքներ փոխանակած էք իրարու, որոնց բացայայտման պարագային կրնային վտանգել մեր ապագան եւ նոյնիսկ կեանքը: Եւ պատահական չէ, որ երբ ինք չկայ, սակայն կը շարունակէ մէջդ ապրիլ ու մանաւանդ այս դժնդակ օրերուն, ակամայ կը յիշես ու կը փնտռես իր նման այն «Տղամարդ Հայերը», որոնց խիստ կարիքը ունեն ազգն ու հայրենիքը:

Երեւան, ՀՀ-ի Գրողներու միութեան ճաշարան, 1976, խիստ Ձմեռ

Հազիւ տեղաւորուած էի մէկ անկիւնը նստած Ռազմիկ Դաւոյեանի, իր կողակիցի՝ Յասմիկի եւ Ռոպերթ Ամիրխանեանի հետ, երբ յանկարծ Ռազմիկը ոտքի ելաւ ու ջերմութեամբ դիմաւորեց մէկու մը ու հրաւիրեց սեղան, սակայն ան ըսաւ.

- Պայմանաւորուել եմ ուրիշներու հետ, ներող կը լինէք:

Ռազմիկը ցոյց տալով ինձ, շարունակեց.

- Այս երիտասարդը քեզ էր հարցնում: Մովսէս Հերկելեանը մեր լաւ ընկերներից է, եկել է Պէյրութից, այստեղ է սովորում: Նկատի առ որ մուսալեռցի է, աւելի ճիշդը Այնճարից: Ցանկանում է ծանօթանալ քեզ հետ: Մովսէս, Ռուբէն Յովսեփեանն է... :

Ռուբէնի հետ ձեռք սեղմեցինք որ ջերմ էր ու նշանակալից: Ռուբէնը աւելցուց.

- Կարծես թէ ես քո մասին գիտեմ: Դու Սօս Սարգսեանի կամ Լյութվիկ Խաչատրեանին հետ կապ ունե՞ս:

- Երկուսն էլ ընկերներս են:

- Հասկացայ: Մենք անպայման կը հանդիպենք:

Լենինի պողոտայ, Բ. հանրակացարան, 1977, Դեկտ.

Լենինի Բ. Հանրակացարանը, մշակութային առումով, ռազմավարական յատկանշական դիրք ունէր: Վերը՝ սարալանջին Մատենադարանն էր, աջին՝ իրարու կից շարուած էին կինոնաիրին, Դրամատիկական թատրոնն ու «Գարուն»ի եւ «Սովետական Արուեստ»ի խմբագրատուները, ձախին՝ Գեղարուեստաթատերական Բարձրագոյն Հիմնարկն ու քիչ մը վեր Գրողներու Միութեան Տունը: Իսկ հարաւային կողմը կը գտնուէին «Սայաթ Նովա» պարարուեստի ուսումնարանը,Դերասաններու տունը, Պետական Երաժշտանոցն ու քիչ մը վար՝ Օփերան:

Մովսէս Ծիրանին եւ Ռուբէն Յովսեփեանը. *1995 թ.*

Այս մշակոյթի կեդրոններու արանքներուն կային չորս սրճարաններ. (Փոնչիկանոցը, Բափլավոքը (Առագաստ), Սկուազնեակը (Միջանցահովիկ) եւ Կազիրոքը: Կար նաեւ նշանաւոր Ճաշարան մը՝ «Թիմուրանոցը», որոնք միշտ լեցուն կ'ըլլային դերասան դերասանուհիներով, գրողներով, տարբեր տեսակի արուեստագէտներով ու մտաւորականներով ու յատկապէս՝ երիտասարդ ուսանող-ուսանողուհիներով: Պատկերացուցէք որ այս բոլորին կեդրոնը կը գտնուէր Լենինի անուան հանրակացարանը, ուր տեղաւորած էին Դաշնակցականիտ ու «մենաշնորհեալ» արտասահմանցի ուսանողները: Այնպէս որ հասկնալի կը դառնայ, թէ ինչու իմ սենեակը ձեւով մը հաւաքավայր էր գրողներու, մտաւորականներու եւ արուեստագէտներու: Ձիս պարբերաբար կ'այցելէին Լեւոն Ներսիսեանը, Հրանդ Մաթեւոսեանը, Սէյրան Խաթլամաճեանը, Ռազմիկ Դաւոյեանը, Հենրիկ Էդոյեանը, Արտեմ Յարութիւնեանը, Արտաշէս Յունանեանը, Սօս Սարգսեանը, Մկրտիչ Մազմանեանը, Ջորայր Խալափեանը, Վարուժան Վարդանեանը եւ շատ շատեր: Ասոնց շարքին էր նաեւ՝ Ռուբէն Յովսեփեանը, որ համեմատաբար քիչ կու գար քովս: Այդ օր առանձին էինք: Ռուբէնը գիտէր որ քանի մը օրէն Պէյրութ պիտի մեկնիմ, հետը բերած էր նոր հրատարակուած «Ամենատաք Երկիրը» հատորէն երկու օրինակ, մէկը ինծի, միւսը՝ «Բագին»ին համար: Հակառակ անոր, որ ատկէ առաջ քովս եկած էր, սակայն պատերուն վրայ կախուած նկարներուն ոչ նայած էր ուշադրութեամբ եւ ոչ ալ կարծիք յայտնած: Այդ օր նստելէ առաջ Բագրատ Գրիգորեանի, Արկադի Պաղտասարեանի, Վարուժան Վարդանեանի եւ Վիգէն Թադեւոսեանի գեղանկարները լաւ մը դիտելէ, եւ միւսներու վրայ արագ հայեացք մը նետելէ ետք նստաւ: Խօսքը ես բացի.

- Ի՞նչ ես ասում, հաւանեցի՞ր:

Մատնաացոյց ընելով Բագրատի, Արկոյի, Վարուժանի եւ Վիգէնի ստեղծագործութիւնները, ըսաւ.

- Սրանք լաւն են յատակապէս՝ Վարուժանի գործը, սակայն սրանք ո՛ւմ գործերն են:

- Իմ, ես եմ նկարել:

- Բայց դու արուեստաբան ես...

- Այո, դրա համար էլ նկարում եմ որպէսզի իմանամ թէ նկարիչները ոնց են ստեղծագործում: Նաեւ նկարչական դասերի եմ հետեւում Գեղարուեստաթատերական Ինստիտուտում, Արկադի Պաղտասարեանի, իսկ Մակավարժարանում՝ Արտաշէս Յունանեանի մօտ:

- Դա պարտադի՞ր է:

- Ոչ, Ասպիրանդուրայի ղեկավարս՝ Վահան Յարութիւնեանն է թելադրել:

--Լաւ ես արել որ սկսել ես նկարել սովորել, սակայն սրանք չպէտք է կախես միւսների կողքին... խանգարում են:

Այսպէս էր Ռուբենը, անկեղծ, իրաւ ու անաչառօրէն դատող գրող մը որ գիտէր չը խնայել նոյնիսկ իր մօտիկ ընկերոջը: Իսկ եթէ լռէր, իր լռութիւնը անպայման համաձայնութեան նշան չէր:

Ուրիշ օր մը, երբ դարձեալ առանձին էինք նոյն սենեակին մէջ, յանկարծ նկատեց ձայնապնակներուս առատութիւնն ու բազմազանութիւնը, քանի մը հատը ստուգելէ ետք ըսաւ.

- Երեւում է որ երաժշտութիւն շատ ես սիրում:

- Այո՛, առանց երաժշտութեան կեանք չունեմ, ամէն գիշեր քնելուց առաջ պարտադիր պէտք է որ երաժշտութիւն ունկնդրեմ:

- Իսկ նուագո՞ւմ կամ երգո՞ւմ ես:

- Ոչ:

- Ինչո՞ւ:

- Ես ոչ կարողանում եմ նուագել եւ ոչ ալ երգել, թէեւ մտովի ճիշդ եմ նուագում ու երգում, սակայն «ականջ» չունեմ:

- Ես էլ «սլուխ» չունեմ, սա մեր երկրորդ ընդհանուր գիծն է:

- Երկրո՞րդ, իսկ առաջի՞նը...

Մանկական մաքրամաքուր թեթեւ ժպիտ մը դէմքին, սակայն աչքերու համոզիչ նայուածքով ու դէմքի վճռական արտայայտութեամբ, ըսաւ.

- Գաղափարը:

Ես չհարցուցի իրեն թէ խօսքը ի՞նչ «Գաղափար»-ի մասին է եւ ոչ ալ որեւէ բացատրութիւն տուաւ ինք, սակայն մենք զիրար ճիշդ հասկցանք: Հոգիի խորքերէն բխած այս մէկ հատիկ բառը պատճառ եղաւ որ մենք ոչ միայն մտերմանանք, այլ նաեւ՝ վստահինք իրարու... Ամէն բան ու մեր փոխադարձ վստահութիւնը շարունակուեցաւ մինչեւ վերջ:

Զանգեզուր, 1980, վաղ Աշուն

Սոս Սարգսեանի կազմակերպութեամբ, քանի մը օրով, մեծ խումբով մը (Ռուբէն Յովսէփեան, Ֆելիքս Մելոյեան, Ռազմիկ Դաւոյեան, Վարուժան Խտշրեան, Պօղոս Գասապեան եւ Մարտիկ Պոյաճեան) մեկնած էինք Սիսեան, այցելելու համար շրջանի տեսարժան վայրերն ու յուշարձանները (Որոտնավանք, Տաթեւ, Շաքիի Ջրվէժը, Խնձորեսքի ձորը, ուր կան Մխիթար սպարապետի դամբարանն ու Սուրբ Հռիփսիմէ եկեղեցին, ինչպէս նաեւ՝ Եղեքտրակայինի ջրամբարը), հասնելու համար մինչեւ Գորիս: Լռելեայն նպատակ ունէինք նաեւ ուսումնասիրելու տարածաշրջանի այն նոր կազմաւորուող ազերիական գիւղակներն ու «Եայլաները» (ամառանոցները), որոնք բնակավայրերու շղթայով մը կը միտէին Ատրպէյճանը կապել Նախիջեւանին: Այս վերջին ծրագրէն ինձմէ եւ Սօսէն զատ տեղեակ էին միայն՝ Ռուբէնը, Ռազմիկն ու Վազգէն Մանուկեանը... որ մեր հետ չէր: Յուշերուս մէջ քանի մը անգամ անդրադարձած եմ այս արշաւին, սակայն Ռուբէն Յովսէփեանի բաժինն ու այլ քանի մը դրուագներ վերապահած՝ այլ առիթի:

Որպէս զի խումբը միասին ըլլար, այդ օր մեզի տրամադրուած էր հանրակառք (ավտոպուս) մը Սիսեանի ՝ ռայկոմի քարտուղար՝ Սաշիկ Դաւթեանի կողմէ, որուն իբրեւ նուէր տարած էինք «Բագին» եւ Հրայր Մարուխեանի, Սարգիս Ջէյթլեանի ու Տք. Բաբկէն Փափազեանի արտասանած կարգ մը Ճառերու ձայնագրութիւնները, որոնք կրցած էր սահմանէն անցընել Պօղոս Գասապեանը (Պալըխ):

Երբ Շաքիի ջրվէժին մօտեցանք, նկատեցինք որ հեռու գետափին, լացող ուռենիներու շուքին, քանի մը երիտասարդներ կրակ կը վառէին: Վարուժանը խանդավառուած բացագանչեց.

- Տեսէք, տղաք ի՞նչ հիանալի խորովածի տեղ է, երանի իրենց:

Ջրվէժէն վերադարձին հանրակառքի վարորդը մեզ ուղիղ տարաւ կրակ վառող երիտասարդներու մօտ: Պարզուեցաւ որ այդ կրակը մեզի համար էր: Սոված էինք ու յոգնած: Վարուժանը այս անգամ ցատկոտելով ողջունելէ ետք տղոց ըսաւ.

- Այս ի՞նչ է, ամէն օր նոր անակնկալներ... այս մարդիկը հիւրասիրել գիտէն, ուտել խմել գիտեն...

Կողքէն Մարտիկը, որ գիտէր թէ Վարուժանին համար կարեւորը «Խմելն» էր, արձագանգեց.

- Խմել գիտեն Վարո՛ւժ, ամենէն առաջ խմե՛լ գիտեն:

Բայց բուն անակնկալը շարունակութիւնն էր: Գետինը փռուած էր գեղեցիկօրէն նախշազարդ մեծդի կարպետ (քիլիմ) մը: Մէջտեղը՝ երկայնքին շարուած էին ապակեայ ամաններ, լեցուած չքամուած, տակաւին մեղրամոմը վրան, բնական մեղրի կտորներով: Կարպետը երիզուած էր կաւէ դատարկ պնակներով, իւրաքանչիւրի կողքին դրուած՝ աման մը գիւղական արդար մածուն: Իսկ խորովածը կրակի վրայ էր: Չկային մեզի ծանօթ պանիրներու եւ երշիկներու տեսակներները, թարմ բանջարեղէնն ու կանաչին, նոյնիսկ նշանաւոր թութի օղին կը բացակայէր, որովհետեւ այդ օր միայն նոան գինի «արտօնուած» էր ըմպել: Մեզի բացատրուեցաւ ուտելու կարգը. նախ՝ կտոր մը խորոված եւ ապա լաւաշի մէջ փաթթուած մեղր ու մածուն եւ այսպէս շարունակաբար: Իսկ տնական նոան գինին ըստ ճաշակի եւ կարողութեան: Իրարու հետ անհամատեղ թուացող խորոված, մածունն ու մեղրը չտեսնուած համով էին: Բնականաբար թամատան Սօսն էր, ու կենացները այնքան քաղցրացան ու տաքացան որ սկսանք ազգային յեղափոխական երգեր երգել...: Այս խանդավառութեան մէջ նշմարեցի որ Ռուբէնը առանձնացած, առուակի ճիշդ եզրին նստած փոքր

ճիտով մը հողը կը փորփրէր: Քովը նստայ եւ առանց իմ հարցին սպասելու ու առանց իսկ դէմքիս նայելու, կարծես թէ հողին հետ կը զրուցէր, ըսաւ.

- Տեսնո՞ւմ ես ինչքան առնականութիւն եւ ուժ կայ մեր յեղափոխական երգերի մէջ: Դա մեր պապենական հողի արգանդից է ծնւում: Ինչպէս որ բնութիւնը ծոցուորում է հողի մէջ, այնպէս էլ երգը խմորւում ու ծնւում է մայր բնութիւնից:

Մեր հանդիպումներու ընթացքին, Ռուբէնը անընդհատ մտորումներու մէջ կը թուէր ըլլալ: Նոյնիսկ կը կարծէիր թէ քեզ չի լսեր, կամ չի հետեւեր ընդհանուրի խօսակցութեան, սակայն յանկարծ կրնար միջամտել ու կը խօսէր դիպուկ, սեղմ, յանդուգն եւ իմաստալից: Այո՝ այսպէս էր ան: Միաժամանակ մարդամօտ էր, ջերմ ու իր իրաւութեամբ անմիջապէս վստահութիւն կը ներշնչէր դիմացինին:

Երեւան, ՀՅԴ. Բիւրոյի գրասենեակ, 1995, Ամառ

Շուրջ մէկուկէս տասնամեակ բացակայելէ ետք, վերադարձած էի հայրենիք: Շատ բան փոխուած էր, ամէն ինչ հոգեհարազատ ու յուզիչ էր ինծի համար: Օրը կիրակի էր: Որոշեցի առանձին այցելել, Սարեանի այգին (Վերնիսաժ), թէ թարմանալու եւ թէ որոշ գաղափար մը կազմելու ժամանակակից հայրենի նկարչութեան մասին: Երբ տարուած էի գերիրապաշտ բնոյթի արուեստագէտի մը գործերը դիտելով, յանկարծ մէկը գրկեց զիս ու սեղմեց կուրծքին: Թէեւ այդ օրերուն նման հանդիպումները անսովոր չէին ինծի համար, սակայն այս մէկը տարբեր էր: Երբ անդրադարձայ որ Ռուբէնն է, լեզուս բռնուեցաւ ու չկրցայ բան մը ըսել: Ան փաթթուելու եւ ողջագուրուելու սովորութիւն չունէր, միշտ զուսպ էր ու չափաւոր շարժումներու ու արտայայտութիւններու մէջ: Երբ նշմարեց յուզումս, ըսաւ.

- Բիւրոյի գրասենեակն եմ եկել հանդիպման, արի միասին բարձրանանք:

Ապա զիրար գրկելով, անխօս վեր ելանք: Հոն էին Մասիս Պաղտասարեանը, Վարանդ Փափազեանն ու այլ քանի մը ընկերներ, որոնց հետ ծանօթանալէ ու կարճատեւ զրոյց մը ունենալէ ետք, բոլորն ալ ներս մտան ու քիչ ետք զինք եւս հրաւիրեցին: Պատասխանեց.

- Դուք սկսէք քննարկումը, ես յետոյ կը գամ:

Երբ առանձին մնացինք, առաջին հարցը հետեւեալը եղաւ.

- Այս յեղափոխական դժուար օրերին դու մեր կողքին պէտք է որ լինէիր:

Հարցին մէջ ափսոսանք եւ յանդիմանութիւն կար:

- Ռուբէն ջան: Արտաքնապէս թւում է թէ ես յանցաւոր եմ նրա համար, որ այդ դժուարին օրերին գաղափարական գործընկերներիս կողքին չեմ եղել: Այո, դրա մէջ ճշմարտութիւն կայ, սակայն երբ ես հայրենիքից Պէյրութ վերադարձայ, քանի մը տարի ետք անդրադարձայ որ ես քաղաքական մարդ չեմ կարող լինել: Ես մշակոյթի մարդ եմ եւ պէտք է որ կեանքս արժեւորեմ ծառայելով հայ մշակոյթին, ադպէս էլ անում եմ: Ի դէպ, այս հարցը մենք քննարկել ենք Հալէպում, Սօս Սարգսեանի, Հենրիկ Իգիթեանի եւ Ռազմիկ Դաւոյեանի հետ, ՀՅԴ-ի 100-ամեակի տօնակատարութիւնների ժամանակ: Բաւական վիճելուց յետոյ Ռազմիկը բոլորովին հակառակուեց ինձ, եւ Ռոնալտ Ռիկընի ու Վացլաւ Հաւելի օրինակները յիշեց: Սօսն ըսաւ որ «Դու ճիշդ ես, քաղաքականութիւնը պէտք է վստահենք քաղաքագէտներին, մենք կարող ենք սխալուել, բայց քանի որ երդում եմ տուել ու երդումը Սուրբ է, ես շարունակելու եմ իմ կուսակցականի պարտաւորութիւնները», իսկ Հենրիկը աւելցուց. «Քանի որ ես դեռեւս երդում չեմ տուել, չեմ մտնի քաղաքականութեան մէջ, սակայն կը մնամ կուսակցութեան կողքին»: Ընթացքում ես միշդ կապի մէջ եմ եղել Լյուսիկ Խաչատուրեանի եւ յատկապէս՝ Վազգէն Մանուկեանի հետ, նրանք զիս ճիշդ են հասկացել: Երբ ես տակաւին կը պատրաստուէի, յաւելեալ բացատրութիւններ պիտի տայի, յիշելով Լեւոն Շանթն ու Աեւտիս Ահարանեանը, Ռուբէնը ընդմիջեց ու ըսաւ.

- Ես Սօսի կարգավիճակում եմ, քանի որ երդում եմ տուել, ես էլ եմ շարունակելու կուսակցականի պարտականութիւններս:

Փաստօրէն ըլլայ Սօսը թէ Ռուբէնը, ժամանակ մը ետք սկսան իրենց ժամանակը յատկացնել աւելի մշակոյթին քան՝ քաղաքականութեան, միաժամանակ հաւատարիմ մնալով կուսակցականի պարտաւորութիւններուն:

Երեւան, «Անի» հիւրանոց, 1995, Ամառ

Քանի մը օր ետք, հանդիպելու համար հեռաձայնեցի Ռուբէնին: Ինք Բիւրոյի գրասենեկէն եկաւ, ու մենք հանդիպեցանք «Անի»ի սրճարանը որ տակաւին կը գործէր: Օրերը լաւ չէին, ազգի ու հայրենիքի ապագան մռայլ էր ու մտահոգիչ: Առանձին էինք: Մեզմէ իւրաքանչիւրը ինք իր մասին որոշ տեղեկութիւններ ու բացատրութիւններ տալէ ետք, անցանք ազգային հարցերու...: Ընթացքին ակնարկելով օրուայ իշխանութիւններուն, ըսաւ.

- Մեզ Տղամարդ Հայ է պէտք: Մենք Տղամարդ առաջնորդներ քիչ ենք ունեցել:

- Ճիշդ ես ասում, մեր պատմութեան մէջ, առաջին Տղամարդ Հայը Հայկ Նահապետն է եղել:

- Ո՛չ, առաջին Տղամարդ Հայը Արարատ Սարն է, որ խրոխտաբար դիմադրում է ժամանակի արհաւիրքներին... Հայկը Երկրորդն է...

- Իսկ ե՞րրորդը...

- Մեր պատմութեան առանցքներում եղել են այլ Տղամարդ Հայեր եւս, ինչպէս. Վահան Մամիկոնեանը, Աշոտ Երկաթն ու Լեւոն Մեծագործը եւ ուրիշներ, որոնք սակայն գալիս են Հայկից ետոյ եւ մտնում են երրորդի մէջ:

- Իսկ չորրորդը...

- Արամ Մանուկեանը:

- Այո, ես էլ եմ բարձր գնահատում Արամ Մանուկեանին, ինձ համար նա հերոսների հերոսն է: Նա կարողացաւ ողջ ազգը մէկտեղել ու Արարատ սարի նման դէմ դնել մեզանից տասնապատիկ անգամ ուժեղ թշնամուն: ...Այո՛, մեզ համար Արամ Մանուկեանի նման Տղամարդ Հայ է պէտք:

Սիրելի իմ հետաքրքրասէր ընթերցող՝ այսքանով Ռուբէն Յովսէփեանի մասին իմ յուշերս չեն աւարտիր: Ան յաճախ Լիբանան կ՚այցելէր, ու մենք բազմիցս հանդիպած ենք ըլլայ Պէյրութ թէ Այնճար...: Այդ հանդիպումներու մասին այլ առիթով: ■

Գունագեղ մոլորակն այս

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Կ'երեւակայէ՞ք, թէ ի՞նչ պիտի ըլլար գունագեղ մեր մոլորակն այս, եթէ չըլլային ծաղիկները հազարագոյն, ծառերն ու թուփերը տեսակաւոր, ծով ու ցամաք, լեռ ու դաշտ եւ հրաշակերտ այն ամբողջը, որ կը տեսնենք մեր շուրջ: Բայց այդ բոլորը պահելու եւ ա՛լ աւելի գեղեցկացնելու փոխարէն ճիշտ հակառակ ուղղութեամբ չէ՞, որ կ'ընթանայ աշխարհը այսօր՝ աւերումներով, քանդումներով, աղաւաղումներով ու հարթիչ գլանով մը տափակցնելով ամեն ինչ եւ ջնջելով ամեն այլազանութիւն:

Մինչդեռ...

Մինչդեռ որքա՜ն տարբեր կրնայ ըլլալ մարդկութեան ճակատագիրը, եթէ տարբեր հայեցակարգով մը, տարբեր աշխարհընկալումով մը փորձէ ապրիլ ան: Եթէ ի վերջոյ մարդանա՛յ մարդը:

Գաղափարաբանութիւններն ու մօտեցումները, «իզմ»-երը չեն պակսիր եւ միշտ կը խօսուի մարդու իրաւունքներու մասին, մարդոց հաւասարութեան մասին:

Երբ կը խօսուի հարուստի եւ աղքատի մասին, կրնա՞նք ձգտիլ, որ ըլլայ հարստութեան հաւասարութիւն, ոչ՝ աղքատութեան: Ամեն մարդ հարուստ կարենայ ըլլալ, ոչ թէ աղքատ:

Երբ կը խօսուի ուսեալի ու անուսի մասին, կրնա՞նք նպատակադրել բոլորին տալ ուսանելու հնարաւորութիւնը: Ամեն մարդ ուսեալ կարենայ ըլլալ, ոչ թէ անուս:

Եւ այդպէս, ամեն մարդ տանիք մը ունենայ իր գլխուն վերեւ եւ ոչ թէ ըլլայ անտունի, ամեն մարդ ըլլայ կուշտ, ոչ թէ անօթի, ըլլայ առողջ եւ ոչ թէ հիւանդ:

Երբ կ'ակնարկենք գործի ու անգործութեան մասին, ջանանք, որ ամեն մարդ գործ ունենայ, ոչ թէ ըլլայ գործազուրկ:

Մարդկային իրաւանց հիմնական օրէնքները ըլլան բոլորին պարտադիր, հաւասարապէս բոլորին, առանց մենաշնորհներու եւ առանց բացառութիւններու, աշխարհի վրայ ամենուրեք: Բոլոր ազգերուն, բոլոր պետութիւններուն, բոլոր հաւաքականութիւններուն համար, ներառեալ ամեն տեսակի փոքրամասնութիւնները:

Եթէ սահմաններ պիտի ըլլան, անոնք ըլլան վարչական առումով, առանց փշալարերու, իսկ անոնցմէ անցնիլը ըլլայ առանց անցագրերու անհրաժեշտութեան՝ անանցագի՛ր:

Եթէ լեզուներ պիտի ըլլան, անոնք ըլլան առանց մէկուն գերադասութեան եւ առանց Բաբելոնի աշտարակի՝ բոլորը քով-քովի զարգանալու ամեն հնարաւորութեամբ: Եթէ տաճարներ պիտի ըլլան Քրիստոսի, Մոհամեդի, Պուտտայի կամ այլ կրօնի մը ներկայացուցիչին նուիրուած, անոնք իրարու հանդէպ ատելութիւն կամ նզովք տարածելու համար չըլլան, այլ միասնաբար գովքը հիւսելու այս աշխարհի գեղեցկութեան ու մարդու աստուածայնութեան, եւ ոչ թէ անդիի աշխարհի շողշողուն հմայքներով մեզ հմայելու համար:

Եթէ աշխատանքը պիտի գնահատուի, առաջին հերթին այդ պիտի ըլլայ ուսուցիչներու աշխատանքը, մտաւորականներու եւ իմաստասէրներու աշխատանքը, գրողներու եւ գիտնականներու աշխատանքը՝ նախ քան գործարարներու եւ առեւտրականներու կամ այլ մարզերու աշխատանքները:

Այլեւ ոչ թէ սեղմուի կամ կաշկանդուի մարդու նախաձեռնութեան ոգին, այլ բացայայտուի եւ ուռճանայ այս աշխարհի վրայ:

Այս աշխարհի, ուրկէ անհետացած պիտի ըլլան մարդասպանութեան բոլոր միջոցները, ուր մարդիկ իրարու հետ պիտի ապրին՝ առաջնահերթութիւնը տալով հաւաքական շահին, ուր վերջ գտած պիտի ըլլան ընչաքաղցութիւնը, գոյքակուտակումն ու ուժակուտակումը:

Այս աշխարհի, ուր մարդ զգետնող, շունչ սպառող աշխատանքը իր տեղը զիջած պիտի ըլլայ մարդու կարողութիւններն ու տաղանդները զարգացնող աշխատանքին:

Այս աշխարհի, ուր մանուկներու եւ թերահասներու կրթութիւնը առաջնահերթութիւն պիտի ունենայ ամեն տեսակ այլ նկատողութիւններու վրայ, ուր ծնողներուն պիտի ընծայուի իրենց զաւակներով զբաղելու ամեն հնարաւորութիւն:

Վերջապէս աշխարհ մը, ուր հաշտութիւնը պիտի ըլլայ տիրական, հաշտութիւն՝ մարդուն եւ մարդուն միջեւ, հաշտութիւն՝ մարդուն եւ բնութեան միջեւ:

Ինչպէս կ'ուզեն կոչել այս հասկացութիւնը թող կոչեն, ինչ «իզմ»-ով կ'ուզեն սահմանել զայն թող սահմանեն կամ չսահմանեն, բայց անո՛վ պիտի առաջնորդուի մարդկութիւնը:

Անով պիտի առաջնորդուինք նաեւ մենք՝ հայերս, մենք՝ դաշնակցականներս, եւ բոլոր այլ կուսակցութիւններու պատկանողներս կամ չպատկանողներս՝ յանուն հայութեան ազգային կեցութեան, յանուն մարդկութեան գոյատեւման:

Պիտի առաջնորդուինք եւ պիտի շարունակենք մեր պայքարը՝ եթէ կ'ուզենք, որ ըլլա՛յ, մնա՛յ ու մեզ պատսպարէ գունագեղ մոլորակն այս: ■

«Հաւաքական Արարում...»

Մովսէս Ծիրանի

«Դրօշակի» նախորդ համարում հրապարակվել էր Թամար Մնապյանի «Բաց նամակը», ինչը մեզ պարտավորեցրեց պատասխանի իրավունք ընձեռել նաև «Բաց նամակի» հասցեատիրոջը,՝ Մովսես Ծիրանիին, սրանով եզրափակելով «Դրօշակի» էջերում տեղ գտած այս «երկխոսությունը»: Առիթն օգտագործելով ցանկանում ենք մի քանի պարզաբանումներ կատարել, որոնք վերաբերում են «Դրօշակի» դավանած որոշ սկզբունքների: «Դրօշակի» պատմական առաքելությունից ելնելով՝ մենք կարևորում ենք կուսակցությանն առնչվող իրողություններին, արժեքներին վերաբերող հուշագրական ու այլ բնույթի նյութերի հրապարակումը Դաշնակցության անդրանիկ պաշտոնաթերթի էջերում, ընդ որում, դրանցում տեղ չտալով անձնավորումներին ու պիտակավորումներին: Այս սկզբունքի առջև խմբագրությունը չի մեղանչել հրապարակելով, Մովսես Ծիրանիի խնդրո առարկա դարձած հոդվածը (թիվ 6, 2024 թ.):

Խմբագրություն

Սիրելի Թամարիկ

Ի վերջոյ կարդացի «Դրօշակ»ի մէջ հրատարակած «Բաց Նամակ»դ եւ յուսախաբ եղայ... չէի ակնկալեր որ դուն այսքան անհիմն ու անտեղի զրպարտութիւններ կրնաս ընել, ինծի պէս մէկուն որ ոչ միայն քեզ մանկութենէն կը ճանչնա ու եղած է նաեւ՝ ուսուցիչդ, այլ նաեւ երբ իբրեւ աշակերտ Հայաստան եկած էիր, հօրդ խնդրանքին հիման վրայ, քեզ շարք մը գրողներու քով տարի ու նաեւ պտտցուցի քեզ Հայաստանի կարգ մը տեսարժան վայրերը...: Այն ատեն ինքնամփոփ, կիրթ, ուշիմ ու անուշիկ աղջնակ մըն էիր: Շատ պիտի ուզէի որ իմ պատկերացումին մէջ նոյնը մնայիր: Ոչ միայն թշնամանք չեմ ունեցած եւ չունիմ, այլ նոյնիսկ համակրանք ունիմ ընտանիքիդ հանդէպ: Թէեւ ամէն ինչ փոխադարձ էր, բայց ես չեմ կրնար չգնահատել ու մոռնալ Մայրիկիդ ցուցաբերած ջերմ ու ասպնջական վերաբերմունքը, յատկապէս՝ Պետիկի նկատմամբ...: Նոյնիսկ հօրդ հանդէպ թշնամանք չունիմ: Պետիկը եւ ես վաղուց ներած ենք իրեն... քրիստոնէական բարի զգացումներով:

Կ'ըսես թէ «Մովսէսն ու իր եղբայր Պետիկը... քաղաք մնալու համար ուրիշ ապաստան չունէին»: Իրապէ՞ս... ուրկէ՞ կը հանես այսպիսի սուտեր: Այդ օրերուն գաղտնիք չէր, որ Կուսակցութիւնը առանձին ընդարձակածաւալ յարկաբաժին մը տրամադրած էր «Ազդակ»ի անձնակազմին, կեցութեան հնարաւոր լաւագոյն պայմաններով, ուր կը մնար Պետիկը: Իսկ ինծի տրամադրուած էր «Նշան Փալանճեան»ի վերի յարկէն առանձին սենեակ մը իբրեւ «Ճեմարանի» եւ «Համազգային»ի Հայագիտական ամպիոնի ուսուցիչ ու դասախօս: Մենք, այդ վտանգաւոր օրերուն, հարկ եղած պարագային ձեր տունը կ'երթայինք հօրդ «Հրաւէրով»... իրեն օգնելու եւ զինք առանձին ձգած չըլլալու համար: Երբեմն դուք ալ ընտանեօք ներկայ կ'ըլլայիք ու միասին այնքան լաւ, հաճելի ու բովանդակալից ժամանակ կ'անցընէինք, որոնց կարօտով կը յիշեմ... մինչեւ հիմայ:

Կ'ըսես թէ «Ծիրանին սոսկ գրաբեր մըն էր»: Իմացիր որ ես ո՛չ Պօղոս Մնապեանին, ո՛չ ալ ոեւէ կուսակցական ընկերոջ ո՛չ մէկ նամակ կամ գիր տարած եմ Հայաստան եւ ոչ ալ բերած... զգուշութեան համար: Կարեւոր ու կենսական համարուող տեղեկութիւնները գոց կը սորվէի, կու գայի Պէյրութ կը վերարտադրէի զանոնք ու կը յանձնէի ընկ. Զէյթլեանին, ան ալ իր հերթին «Բագին»ի վերաբերեալ բաժինը կը յանձնէր Մնապեանին: Քու կազմած եւ խմբագրած «Նամակներ Պօղոս Մնապեանին» Ա. հատորին մէջ եւս ոչ մէկ նամակ կամ երկտող կայ Խորհրդային շրջանէն: Միւս կողմէ ինչո՞ւ կը կարծես որ «Գրաբեր» ըլլալը գէշ կամ նուաստացուցիչ բան մըն է: Այն տղաքը, որոնք արգիլեալ գրականութիւն, նամակներ կամ ձայնագրութիւններ կը մտցնէին Խորհրդային Հայաստան, իրենց կեանքն ու ապագան կը վտանգէին: Ասոնք յարգանքի արժանի հերոսներ են: Ինչպէս. Յ. Զոլաքեան, Ս. Տէր-Խաչատուրեան, Ռ. Գէորգեան, Պ. Գասապեան (Պալըխ), Գ. Թարխանեան, Յ. Ճամպազեան, Յ. Պէրթիզլեան, եւայլն: Ոչ միայն չեմ մոռցած զանոնք, այլ նոյնիսկ Ս. Տէր-Խաչատուրեանի մասին յօդուած ալ հրատարակած եմ «Ազդակ»ի մէջ ... իր մահէն ետք: Արդա՞ր է, որ այս հերոսները «Սոսկ Գրաբեր» համարուին:

Որպէս զի իմանաս որ «Մովսէս Ծիրանին սոսկ գրաբեր մը չէր», բաց «Բագին»ի յիսնամեակին նուիրուած համարը (Ծ. Տարի թիւ 4) եւ ուշադրութեամբ ընթերցէ, Ս. Սարգսեանի, Յ. Յակոբեանի, Ա. Իշխանեանի եւ Մ. Այնթապլեանի «Բագին»ի յղուած նամակներն ու լավ կ'ըլլա ընթերցես նաեւ նաեւ՝ ՀՅԴ-ի պաշտօնաթերթ՝ «Դրօշակ»ի կողմէ Մ. Ծիրանիի հետ կայացած այն հարցազրոյցը, որ արտատպուեցաւ «Ազդակ»ի 2023-ի Յուլիս 11-ի համարին մէջ: (https://www.aztagdaily.com/archives/586294): Բացի յիշեալ հարցազրույցէն այլ առիթներով եւս, միշտ յարգանքով ու գնահատանքով խօսած եմ «Բագին»ի եւ Պօղոս Մնապեանի մասին: Իսկ ընթերցումներդ խղճմտօրէն կատարելէ եւ համոզուելէ ետք որ «Մովսէս Ծիրանին սոսկ նամակաբեր մը չէր», պարկեշտ եղիր իմ մասին ստացած ճշմարիտ ու վաւերական տեղեկութիւնները տարածել, այնպէս, ինչպէս տարածեցիր անհիշդ ու անվաւեր յօրինումներդ...:

Այնպէս կը թուի թէ, դուն հետաքրքրուած ես Մնապեանի խմբագիր եղած ժամանակաշրջանի «Բագին»ով միայն: Եթէ «Բագին»ի յիսնամեակին նուիրուած բացառիկը կարդացած ըլլայիր, «Պօղոս Մնապեանի հետ» ու «Բագինի Թափանցումն Խորհրդային Հայաստան», Ինձ հետ կայացած հարցազրոյցներն ու օրուայ խմբագիր՝ Յ. Պալեանի ստորագրութեամբ լոյս տեսած «"ԲԱԳԻՆ" 50-ԱՄԵԱԿ՝ 1600-ամեայ Հայ Գրականութեան Գիծին վրայ» յօդուածը, պիտի չիյնայիր թիւրիմացութիւններու մէջ ու դառնայիր ծիծաղելի, յատկապէս անոնց համար որոնք լաւ կը ճանչնան, Մովսէս Ծիրանին ու Պօղոս Մնապեանը: Այնպէս գրած ես կարծես թէ Մնապեանէն դուրս «Բագին» գոյութիւն չէ ունեցած: Չե՞ս կարծեր այդպիսով դուն անտեսած կ'ըլլաս Կարօ Սասունիին, Եդուարդ Պօյաճեանին ինչպէս նաեւ Յակոբ Պալեանին ու Սոնիա Քիլեճեանին, որոնք Մնապեանէն պակաս նուիրեալներ չեն: Ինչո՞ւ կ'անտեսես նաեւ «Բագին»ի արժանաւոր օգնական ու փոխ խմբագիրները, (ինչպէս. Սարգիս Կիրակոսեան, Յարութիւն Պէրպէրեան, Սեդա Գրիգորեան, Նորա Բարսեղեան, Արփի Համբարեան...), որոնք նոյնպէս նպաստած են «Բագին»ի բարգաւաճման:

Նկատի առ որ «Բագին»ի մէջ հօրդ անունը արձանագրուած է իբրեւ Խմբագիր ոչ իբրեւ Խմբագրապետ կամ Գլխաւոր Խմբագիր: Չեմ կարծեր որ ասիկա բան մը կը նշանակէ: Նոյնի՛սկ ինքը՝ Պօղոսը հպարտութեամբ կը վկայէ թէ. «Կարօ Սասունի իբրեւ գործօն խմբագիրներ նշանակեց Եդուարդ Պօյաճեանն ու Պօղոս Մնապեանը»: (Տես՝ «Բագին»ի յիսնամեակին նուիրուած բացառիկը, Ծ. Տարի, թիւ 4, էջ 13): Հայրդ գիտէր թէ Կարօ Սասունիի նման մեծութեան մը կողմէ «նշանակուիլը» միայն պատիւ կը բերէ Պօյաճեանին ու իրեն: Ներկայօրէն՝ Պօղոս Մնապեանը սոսկ ՀՅԴ Բիւրոյի պաշտօնեան էր: Գրական հարցերու մէջ ինք ազատ գործելու իրաւունք ունէր, սակայն երբ գրական հարց մը կ՚առնչուէր քաղաքականութեան, ան պարտաւոր էր խորհրդակցելու ընկ. Ջէյթլեանին հետ: Խնդիրը շատ յստակ է ու տրամաբանական: Ինք հաշուետու էր ընկ. Ջէյթլեանին, որ իր հերթին հաշուետու էր Բիւրոյին: Եւ բոլոր իրաւ կազմակերպուած ու զօրաւոր կուսակցութիւններու պարագային այս է եղած կարգը: Իսկ իմ յիշած մտաւորականները, (Ա. Տէր Խաչատուրեան, Վ. Սէթեան, Յ. Իսկէնտէրեան, Ա. Թումայանն ու Ժ. Դանիէլեան), կամովին եւ սիրայօժար կ՚օգնէին «Բագին»ին: Այս մէկը եւս պատիւ կը բերէ Պօղոսին, որովհետեւ ան կրցած էր, յարգուած, գնահատուած ու բանիմաց մտաւորականներ համախմբել «Բագին»ին շուրջ: Կասկածամտութեամբ հարց կու տաս նաեւ՝ այս մտաւորականները «ինչպէ՞ս եւ ի՞նչ ձեւով կ՚օգնէին «Բագին»ին»: Այս հարցին ալ թող պատասխանէ «Բագին»ի վաստակաւոր խմբագիր Յակոբ Պալեանը: Ան կ՚ըսէ. անոնք որոնք «...Մրջիւնի եւ պրպտողի շնորհքներով «Բագին»ի սպասարկու եղած են, անոնց անունները յիշելը ազնիւ տուրք է. Արտաշէս Տէր Խաչատուրեան, գիրքերու շտեմարան գրախօսողը, լուսանկարներու շտեմարան Աւօ Թումայանը, մրջիւնի յամառութեամբ էջեր սրբագրող Պետիկ Հերկելեանը եւ ուրիշներ, հաւաքական արարում»: (Տես՝ նոյն տեղը, էջ 10): Այո՛, ի սկզբանէ «Բագին»ը եղած է «հաւաքական արարում» եւ այդ պատճառով ալ յաջողած է իր առաքելութեան մէջ, ու ճակատաբաց կը շարունակէ իր մշակութանուէր երթը: Այն տպաւորութիւնը կ՚ուզես ձգել որ «Բագին»ը փակելու հարց չէ եղած ու ինքնավստահ կերպով կը պնդես. «Հ.Յ.Դ. Բիւրոն երբեւէ «Բագին»ը փակելու մասին մտածած չէ»: Սակայն «Բագին»ի բազմամեայ եւ վաստաշատ խմբագիր՝ Պօղոս Մնապեանը կը վկայէ թէ «Բագին»ը փակելու հարցը բարձրացուած է նոյնիսկ Հ.Յ. Դաշնակցութեան 1977-ին հերթական համագումարին: Ան կ՚ըսէ, «1977-ին գումարուեցաւ այս ամսագիրը նիւթապէս հովանաւորող Հ.Յ. Դաշնակցութեան հերթական համագումարը, որ պատերազմական երկարաձգուող անորոշութեան մէջ վերջ պիտի դնէ բազմածախս այս հրատարակութեան»...: (Տես՝ նոյն տեղը, էջ 20): Ի՞նչ ընենք որ քու սիրելի հայրիկդ ալ քու ըսածդ կը ժխտէ: Ասիկա, կը նշանակէ թէ քեզի սխալ տեղեկութիւններ տուողը հայրդ չէ եղած, այլ չարամիտ, կամ թոյլ հիշողութեան տէր մարդիկ: Հիմա ալ թէ իմ եւ թէ առհասարակ իրենց ասպարէզին մէջ յաջողած ու հանրութեան մէջ բարձր վարկ ունեցող մարդոց մասին «ըսի-ըսաւներ» շատ կան... Նման սին յերիւրանքներուն ի սկզբանէ կարեւորութիւն չեմ ընծայած... որովհետեւ օդին մէջ թքնուած պղպջակներ են ատոնք, որոնք շատ արագ կը պայթին ու կ՚անհետին:

Կ՚ըսես թէ «երկու գրողները (Գր. Պլըտեանն ու Մ. Նշանեանը) վստահաբար երախտապարտ են «Բագին»ի մէջ տպագրուելու համար»: Ինչո՞ւ ո՛չ: Հակառակ որ ես երկար տարիներէ ի վեր կ՚աշխատակցիմ երեք միջազգային չափանիշի արուեստի հանդէսներու, (Ամերիկեան «Fine Art Magazine», Մոնագոյան«LUXE IMMO» եւ ֆրանսական «L.A. Art»), ոչ միայն երախտապարտ եմ այլեւ հպարտ, որ երկար տարիներ աշխատակցած եմ ու կամովին օգնած՝ «Բագին»ին...: Սակայն նկատի առ որ «Բագին»ը իբրեւ գրական բեմ մեծ վարկ ու հեղինակութիւն սկսաւ ունենալ, երբ Եդուարդ Պօյաճեանն ու Կարօ Սասունին հօրդ կողքին էին: Ինչ խօսք որ Մնապեանը արժանի եղաւ իր գործընկերներուն: Այսօր եւս «Բագին»ը ոչ միայն կը մնայ պատնէշի վրայ, այլեւ կը շարունակէ իր վարկն ու հեղինակութիւնը բարձր պահել Հայ գրական անդաստանէն ներս: Ըլլայ Մնապեանը, թէ ես, հայրենի մտաւորականութեան մօտ յայտնի, գնահատուած ու յարգանքի արժանի մտաւորականներ դարձանք, շնորհիւ Հ.Յ. Դաշնակցութեան ունեցած բարձր վարկին ու հեղինակութեան: Նկատի առ՝ բացի «Բագին»էն խորհրդային Հայաստանի մէջ կը տարածուէին նաեւ «Ազդակ Շաբաթօրեակ»ն ու ազգային յեղափոխական գրականութիւն:

«Բաց Նամակ»իդ վերջաւորութեան, ոչ միայն կասկածի տակ կ՚առնես մեր՝ իմ, Պետիկի եւ մեր ընկերներուն վարկը, այլեւ անուղղակիօրէն կը հասկցնես որ մենք «վախկոտներ» ենք: Նախ՝ ես Պետիկն ու մեր բոլոր գործընկերները բազմիցս «գործով» փաստը տուած ենք խիզախութեան ու նուիրուածութեան: Երիտասարդ տարիքիս, խորհրդային անապահով պայմաններու մէջ, ապագաս ու նոյնիսկ կեանքս վտանգելով, ընդյատակեայ գործ կը տանէի Վազգէն Մանուկեանի, Ռաֆայէլ Իշխանեանի, Սօս Սարգսեանի, Ռազմիկ Դաւոյեանի, Պետրոս Այնթապլեանի եւ այլ «գաղափարակից» ընկերներու հետ: Հիմա դուն հանգիստ նստած ապահով պայմաններու տակ, զրպարտութեամբ կը զբաղուիս ու կը շարունակես մխել Պօղոս Մնապեանի երկարատեւ եւ տքնաջան աշխատանքով ու հաւատարմութեամբ ձեռք բերուած, կուսակցականի վարկն ու վաստակաշատ մտաւորականի համբաւը: Ես ճշմարտութիւնը շարադրեցի ու փաստեր ներկայացուցի քեզի: Քու ընթերցողները թող որոշեն թէ դուն ո՞վ ես, ի՞նչ տեսակ մէկն ես, եւ ի՞նչ յետին նպատակներ կը հետապնդես...:

Թամարի՛կ ջան, հակառակ յոյժ բազմազբաղ ըլլալուս, պէտք եղածէն աւելի կարեւորութիւն տուի ու ժամանակ տրամադրեցի քեզի, որովհետեւ չեմ կրնար, եւ ոչ ալ կ՚ուզեմ հաւատալ թէ դուն չարամիտ կին մըն ես: Եւ որովհետեւ թիւրիմացութեան մէջ ես դուն ու խաբուած, կը ներեմ քեզի, պայմանաւ որ զղջաս ըրածիդ համար ու հրապարակաւ ներողութիւն խնդրես, կուսակցութենեն՝ իր անունեն խոսելու և պատմութիւնը խեղաթիւրած ըլլալուդ համար, «Բագին»ի ընտանիքէն՝ անոնց նուիրական աշխատանքը նսեմացուցած ու անտեսած ըլլալուդ համար եւ անշո՛ւշտ Մովսէս Ծիրանիէն անիրաւօրէն զայն վարկաբեկած ըլլալուդ համար:

Այս բոլորէն ետք, եթէ կը կարծէս թէ նմանօրինակ անմակարդակ ու անհեթեթ նամակներու պիտի պատասխանեմ ու նոր բացայայտումներ ընեմ, յոյս մի ունենար: Եթէ ոեւէ մէկը ժպրհի դէմս բան մը գրել կամ փորձէ հերքել ըսածներս, այդ տեսակներուն հիմակուընէ կը թելադրեմ այն ինչ որ քեզի թելադրեցի...:

Եւ ինչու չէ, այս դժնդակ օրերուն երբ ազգովին ճակատագրական ու դժուարին օրեր կ՚ապրինք, ու ամէնէն առաջ ու ամէնէն վեր կենսականօրէն պէտք ունինք համերաշխութեան ու միասնականութեան եկուր «հաւաքական արարումով» վերականգնենք ընտանեկան մեր նախկին ջերմ յարաբերութիւնները... օրինակ ծառայելով ուրիշներին:

Ի՞ՆՉ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՅ ՄԵՐ ՈՒՂԻՆ

(Հատուած)



Փորձ արինք մեր անկախ պետութիւնն հաստատելու: Անյաղթելի դժուարութիւնների հանդիպեցինք, բախուեցինք հակառակ ուժերի հետ, պարտուեցինք...

Պարտուեցինք եւ այսօր մեր կարճատեւ անկախութիւնը վտանգած է մեծապէս: Անունը մնում է դեռ, բայց հիմքերը քանդւում են, կառուցածքը տատանւում, սպառնական ճեղքեր տալիս վերից վար:

Վերջացա՛ւ սրանով մեր դատն ու պայքարը: Սպառե՞լ ենք արդեօք բոլոր հնարաւորութիւնները, գործածե՞լ ենք բոլոր ուժերը ու – սնա՞նկ հանդիսացել... Կարո՞ղ ենք ասել թէ այլ եւս բան չունինք անելու, թէ մեր ինքնահաստատուելու տենչը ու կատարած փորձը մի գեղեցիկ ցնորք էր միայն, որ խորտակւեց անողոք իրականութեան բախելով, թէ քաղաքական անկախութիւնը մեր ուժերից վեր է եւ թէ մեզ մնում է միայն խոնարհուել ճակատագրի առաջ ու լռելեայն մեռնել...

Ո՛չ, պետութիւնները չեն կազմում մի օրուայ մէջ ու մանաւանդ չեն կազմւում հեշտօրէն:

Երեխաները միայն կարող էին երազել թէ՝ մի գեղեցիկ օր՝ մեր պետութիւնը – կազմ ու պատրաստ, ծաղիկներով զարդարուած ու շաքարեղէններով համեմուած – կը դրուէր մեր առաջը ու մեր պահապան հրեշտակը կ՚ասէր վերեւից.- վայելեցէք խաղաղութեամբ...

Կռի ու տանջանքների մէջ են ծնւում ազատութիւնները: Մեր երկունքը եղաւ աւելի երկար ու աւելի ծանր, քան իրաւունք ունէինք սպասելու, - թերեւս այնքան երկար ու այնքան ծանր, որ մեր ուժասպառ կազմը չկարողանայ դիմանալ:

Թերեւս: Բայց այսօր դեռ վաղաժամ է այդ յոռետեսութիւնը, ուրեմն եւ փոքրհոգիութիւն՝ զինադուլը:

Հայաստանի այսօրուայ կացութիւնը կարող է հասցնել քաղաքական մահի: Այդ սպառնալիքը կայ եւ շատ լուրջ է, բայց ոչ անխուսափելի: Այսօրուայ կացութիւնը ի՛նքը կարող է դառնալ (գուցէ եւ է՛ արդէն) մի շատ կարևոր աստիճան՝ հետեւեալ քայլը անելու համար...

Պայքարը շարունակւում է, շարունակւում է կազմակերպման պրոցէսը: Դատը դեռ չի կօրցրած եւ աւելի քան երբեք պահանջում է ուժերի լարում:

Փրկել պետութիւնը, ամուր հիմքերի վրայ դնել ու կենսունակ դարձնել այն, - ահա մեր անելիքը: Սա պիտի լինի մեր այսօրուայ ամենամեծ հոգսը – միակ մեծ հոգսը:

Յաջողելու համար պետք է միացնենք մեր ուժերը այն բոլոր կենդանի ուժերին, որոնք պայքարում են – ինչ գոյնի եւ դրօշի տակ էլ լինի – նոյն նպատակի համար:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ, ԵՐԿԵՐ, ԵՐԵՒԱՆ
2018, էջ 73-74

2020 թ. հոկտեմբերի 6-ին, Վարանգաթաղի բարձունքի ինքնապաշտպանության ժամանակ, նահապակվեցին ՀՅ Դաշնակցության կամավորական գումարտակի 24 ազատամարտիկներ, 30-ը վիրավորվեցին: Բարձունքը չհանձնվեց:

ԴՐՕՇԱԿ